

304

Библиотека Университета

Санкт-Петербург

2 (075)

6 - 62

1913

2001

2010

69 ԵԶՆԻԿ ա. քահ. ԵՐԶՆԿԵԱՆՑ
որմուսոյց Թիֆլիսի առաջին իզական գիմնազիոնի

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՈՆԻ

ԵՐԿՐՈՐԴ ԳՐԺՈՅՆ

ՀԻՆ ՈՒԽՏԻ ՍՈՒՐԲ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետական դպրոցների առաջին դասարանի հայ աշակերտուհիների եւ աշակերտների համար:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՑՂԱ.ԳՐՈՒԹԻՒՆ



220
38-61

ԹԻՖԼԻՍ
Տպանական տէսպերանու, Ելիզ. փողոց № 17
1913

220
588-60

ԵԶՆԻԿ ա. քահ. ԵՐԶՆԿԵԱՆՑ

Կրօնուսոյց Թիֆլիսի առաջին իզական գիմնազիոնի

2(075)
35-69

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՈՒԻ

220
580-60

ԵՐԿՐՈՐԴ ԳՐԳՈՅՑ

ՀԻՆ ՈՒԽՏԻ ՍՈՒՐԲ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետական դպրոցների առաջին դասարանի հայ աշակերտուհիների եւ աշակերտների համար:

ՀԻՆ-ԳԵՐՈՐԴ ՑՊԱ.ԳՐՈՒԹԻՒՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան ՀՀոգեբանութեան, Ելեզ. փողոց № 17
1913



տութեան համաձայն՝ որըշուած—դասաւորուած են: Առաջին
երեք գրքոյկներն արդէն լոյս են տեսել: Հետզհետէ պիտի
լոյս տեսնեն և հետևեալները:

Այս գլքոյկը յիշեալ դպրոցների առաջին դասարանի
կրօնի նիւթը—դասընթացն է պարունակում:

Ներկայ աշխատութիւնը լաւ ընդունելութիւն գտաւ
պաշտօնակիցներիս կողմից և ամենակարճ ժամանակում ի-
բար յաջորդեցին մի քանի տպագրութիւններ: Դա լաւագոյն
ապացոյցն է, որ մեր կազմուած դասագիրքը համապատաս-
խանում է իր նպատակին:

Եղիշեանց ա. ք. Երգնկեանց.

շնչառ զնո՞ւ միջեղոք դունչար ուս խոյմելար զնո՞ւ
- պոլոյք մայմար բարձրաց՞մէն մայմար զնը յմաստույ
- վնասոն դունչար մէն մասնաւուստուցք կանած զնո՞ւ
- զնո՞ւ մէն զնոյք զնքրամ հայութեաւուստուցք դոյլոյ մէն իդու
- ուսույնար միջեղոք միջեղոք դունչար ուս խոյմելար

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԵՂԱԿԱՐԱԿԻ ՍՏԵՂՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 1. ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԿՈՐԾՈՒԹԻՒՆԸ

I. Աստուած սկզբում ստեղծեց երկինքն ու երկը: Բայց երկիրն էլ աներևոյթ, անպատճաստ և խաւարով ծածկուած: Աստուծու Հոգին շրջում էր ջրերի վրայ:

Աստուած Երկիրը պատրաստեց վեց օրում։ Նա
առաջին օրը ստեղծեց լոյսը։ Երկրորդ օրը՝ տեսա-
նելի Երկինքը—հաստատութիւնը։ Երրորդ օրը ջուրը
հողից բաժանեց և հրամայեց հողին արտադրել բոյ-
սեր։ Չորրորդ օրը ստեղծեց արեգակը, լուսինն ու-
ստաղերը։ Հինգերորդ օրը՝ թռչուններն ու ձկները։
Վեցերորդ օրը՝ չորքոտանի կենդանիները, սողուն-
ները և մարդուն։

Եօթներորդ օրն Աստուած հանգստացաւ, այս-
ինքն էլ ոչինչ չստեղծեց: Մըա համար այդ օրը կոչ-
ւում է շաբաթ, որ նշանակում է հանգստովելին: Աստուած օրնեց և սըբեց այդ օրը և նա դարձաւ
սուրբ օր՝ տօն մարդոց համար:

II. Ո՞վ ստեղծեց երկինքն ու երկիրը: Ի՞նչ դրութեան մէջ էր երկիրը: Նա ներկայ կաղմակերպութիւնը քանի օրում ստացաւ և որ օրը ի՞նչ ստեղծեց Աստուած: Եօթներորդ օրուայ համար Աստուած ի՞նչ հրամայեց: Ի՞նչ է նշանակում շաբաթ:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Աստուած յալիտնական է, նրան ոչ որ չի ստեղծել, իսկ մնացեալ բոլոր բաները՝ արարածները սկիզբն են առել (գոյացել) Նրանից և ստեղծուել են ոչնչից միմիայն Նրա աստուածային խօսքով. 2) Նա ամենակարող է, ինչ որ կամենայ, կարող է անել: Աստուած ստեղծում է, իսկ մարդը շինում: Այս պատճառով մենք դիմում ենք Նրան մերնեղութեան և կարեների ժամանակ և իննդրում Նրա օգնութիւնը: 3) Նա ամենիմաստ է, որովհետեւ ի՞նչ որ ստեղծել է, բոլորն էլ իմաստութեամբ է ստեղծել և կարգադրել: Ուստի մեր աղօթքի մէջ պէտք է խնդրենք, որ մեր իմաստութեան շնորհ տայ, որպէսզի մենք էլ մեր գործերը իմաստութեամբ կարգադրենք. 4) Նա ամենաքարի է. ինչ որ ստեղծել է, բարի է ստեղծել և այդ բարիքները տուել է մարդուն, որ նա վայելելով՝ ի՞նքն էլ բարիք անէ ուրիշներին: 5) Նա յատկացրել է մի օր՝ շաբաթ, մեղ համար կիւրակէ, և նշանակել է, որ ծառայենք Իրան մեր տուած բարիքների փոխարէն,

№ 2. ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒԻԼԻ

I. Աստուած մարդուն ստեղծեց հողից և փչեց ու տուեց Նրան անմահ հոգի: Նա տուեց մարդուն իր պատկերը և իր նմանութիւնը, այն է՝ անմահ հոգի և սըստութիւն և սորանով զանազանեց նրան միւս արարածներից:

Յետոյ տեսաւ Աստուած, որ մարդը մենակ է և ստեղծեց նրա համար օգնական: Նա առաջին մարդուն քնացրեց և նրա կողքից մի ոսկոր հանեց ու

ստեղծեց նրա համար ընկեր—կին: Առաջին մարդու անունն էր Աղամ, իսկ կնոջը՝ Եւա:

Աստուած առաջին մարդոց բնակեցրեց դրախտում և օրհնեց ու ասաց. «Անեցէք և բազմացէք, և լցրէք երկիրն ու տիրեցէք նրան»:

Աղամը տեսաւ դրախտի մէջ բոլոր կենդանիներին և իւրաքանչիւրին առանձին անուն տուեց:

Աստուած իր ստեղծածներին չթողեց անխնամ: Նա նախախնամում և պահպանում է նրանց իր հովանաւորութեան ներքոյ և ամեն բարի բանին էլ օգնում է,

II. Աստուած առաջին մարդուն ինչից ստեղծեց: Ո՞վ էր առաջի մարդու ընկերը և Աստուած ի՞նչպէս ստեղծեց նրան: Ի՞նչպէս էին կոչում առաջին մարդիկը: Աստուած ուրի բնակեցրեց առաջին մարդոց և ի՞նչ օրհնութիւն տուեց նրանց: Աստուած իր ստեղծածներին թողեց արդեօք անխնամ:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Աստուած մարդուն այն ձեռվ չի ստեղծում, ինչպէս միւս բոլոր արարածներին: Նա տայիս է մարդուն առաւելութիւններ և բարձր յատկութիւններ, օր. դատելու, խօսելու և բարին ու չարը հասկանալու կարողութիւն: 2) Աստծու պատկերը և նմանութիւնը յայտնում է մեր հոգեկան ընդունակութիւնների և կարողութիւնների մէջ: 3) Եւային՝ Աղամի ընկերոջ՝ ստեղծում է նրա կողքից և այդպէս անելու պատճառ այն էր, որ մարդիկ միմեանց սիրեն ու օգնեն: 4) Աստուած մարդուն նշանակեց տէր և իշխան բոլոր արարածներին. տուեց նրան ամենամեծ երանութիւնը և պարտաւորացրեց, որ ձանաչէ Իրան, սիրէ և ծառայէ: Աստծուն ծառայել՝ նշանակում է վարուել ամեն բանում այնպէս, ի՞նչպէս նրա կամքն է: Եւ 5) Աստուած աշխարհու ստեղծելով

չթողեց նրան անխնամ. Նա իր բոլոր ստեղծածներին պահում-պահպանում է իր իշխանութեան ներքոյ և կառավարում: Այս պատճառով նա կոչում է Տէր, Երկնաւոր Թագաւոր, Ամենակարող եւ Նախավինաւող:

Հ 3. ԴՐԱԽՏԸ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴՈՅ ԿԵԱՆՔԸ

I. Դրախտը մի հրաշալի պարտէզ էր, որ գտանւում էր Եղեմում—Երկրի արևելեան կողմը: Նրա միջով անցնում էին չորս գետ—Տիգրիս, Եփրատ, Փիսով և Գեհովի: Այս պարտէզը զարդարուած էր ամեն տեսակ ծաղիկներով ու ծառերով: Ծառերը շատ գեղեցիկ էին և ունէին համեղ պտուղներ: Այստեղ կային թռչուններ և ամեն տեսակ կենդանիներ, որոնք հնազանդում էին մարդուն, ինչպէս իրանց տիրոջը: Աստուած տէր և իշխան նշանակեց Աղամին և պատուիրեց մշակել ու պահպանել այդ պարտէզը:

Աղամ և Եւա խաղաղ կեանք էին վարում դրախտի մէջ և երջանիկ էին: Աստուած ամեն բարիք արել էր նրանց և սպասում էր նրանցից հնազանդութիւն և պատուիրանալահովթիւն:

II. Ի՞նչ բան էր դրախտը և ո՞ր երկրումն էր գտանւում: Ի՞նչ գետեր էին հոսում նրա միջով: Մարդիկ և կենդանիները ի՞նչպէս էին ապրում միմեանց հետ: Աստուած Աղամին և Եւային ի՞նչ պատուէր տուեց պարտիզի համար և ի՞նչ էր սպասում նրանցից:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) Աստուած նախամարդերի բնակութեան համար տնկում, պատ-

րաստում է մի գեղեցիկ պարտէզ, լի ամենայն բարութեամբ և առատ ջրերով և դա լինում է Հայաստանում, ուր գտնուում են այժմ էլ Տիգրիս և Եփրատ գետերը, ուրեմն մարդկութան որրանը լինում է այդ երկիրը: 2) Աղամ և Եւա բախտաւոր էին դրախտում, այն է՝ հիւանդութիւն, տիսրութիւն, ցաւ, տրտութիւն և մահ չունէին: Ո՞չ մի բանի կարիք չկար՝ ոչ կերակրի, ոչ շորերի և ոչ բնակարանի. ամեն բան պատրաստ էր: Նրանց սրտերը մաքուր և խիղճը հանգիստ էր, ոչ մի բան նրանց չէր վշտացնում և վրդովում: ոչ մի բանի վրայ նրանք աչք չունէին: Նրանք անմեղ էին: Նրանց մէջ նախանձ, ատելութիւն չկար:

Հ 4. ՊԱՏՈՒԻԻՐԱՆԱՋԱՆՑՈՒԻԹԻՒՆԸ

I. Դրախտի մէջ Երկու նշանաւոր ծառ կար. մինը կոչւում էր կենաց ծառ, իսկ միւսը բարին ու չարը իմանալու ծառ: Աստուած պատուիրեց նրանց դրախտի բոլոր ծառերի պտղից ուտել, բայց բարին ու չարը իմանալու ծառի պտղից չուտել, եթէ ոչ մահով կմեռնեն:

Զար ոգին—օձը, նախանձեց նախամարդերի Երջանկութեան վրայ: Նա մօտեցաւ Եւային և ասաց. «Ի՞նչու չէք ուտում այն ծառի պտղից, որ դրախտի մէջ է»: Եւան պատախանեց.—Աստուած արգելեց մեզ և ասաց. «Եթէ ուտէք, կմեռնիք», — Ո՞չ, ասաց օձը, դուք չէք մեռնիլ, այլ կբացուին ձեր աչքերը, դուք էլ Աստուծու նման կլինիք և կհասկանաք բարին ու չարը»: Եւան կասկածեց Աստուծու պատուիրանի վրայ: Նա չկարողացաւ համբերել և կերաւ: Յետոյ տուեց Աղամին և նա էլ կերաւ:

Այսպէս առաջին մարդիկ մեղանչեցին, որից

յետոյ ամեն ինչ փոխուեց, Նրանք զրկուեցան հոգեշկան հանգստութիւնից—խիզճը տանջում էր նրանց։ Նրանք ամաչում, վախենում էին, և սկսեցին ծածկուիլ ու թագ կենալ։

Աստուած եկաւ դրախտը և պատժեց Աղամին և Եւային անհնագանդութեան համար։ Նա դուրս արեց նրանց դրախտից։ Այնուհետև Աղամ և Եւան սկսեցին պարապել հողագործութեամբ ու ապրել իրանց երեսի քրտինքով—աշխատանքով։

Աստուած Աղամին և Եւային թէն պատժեց, բայց չթողեց անմխիթար։ Նա խոստացաւ ուղարկել Փրկիչ, որ ազատէ նրանց սերունդը այդ մեզքից։

II. Ի՞նչ նշանաւոր ծառեր կային դրախտի մէջ և ի՞նչ-պէս էին կոչւում։ Աստուած ինչո՞ւ արգելեց բարին և չարը իմանալու ծառի պտղից ուտել։ Ո՞վ խարեց Եւային։ Աստուած ի՞նչ պատիժ տուեց և ի՞նչպէս փոխուեց նրանց վրակը։ Աստուած ի՞նչ խոստացաւ նրանց մխիթարելու համար։

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) թէ ի՞նչպէս նախանձը, ատելութիւնը դրդում է յանցանք գործելու և ի՞նչ խարուսիկ յոյսերով նա մտնում է մարդու սիրտը և հրապոյրներով մօտեցնում է գործել տալու. 2) Անհնագանդութիւնը յանցանք է և միշտ մեծ զրկանքների է հասցնում մարդու։ Նա հասցնում է ազանութեան, մեծամտութեան և երախտամոռութեան, որի հետևանքը—դառնիրութիւնը—որ անսուղղելի է, մարդ յետոյ է իմանում։ 3) Այդպիսի փորձանքներ կեանքի մէջ մեզ էլ կարող են պատահել։ Շատերը մեր ընկերներից և ծանօթներից կարող են կեղծ ու պատիր խօսքերով մօտենալ մեզ և բարեկամ ձեւանալով՝ խարել ու գցել մեզ զանազան տեսակ սխալմունքների մէջ, որի հետևանքը տիսուր ու վնասակար կարող է լինել և մենք նախամարդերի նման կզրկուենք մեր ունեցած

բարիներից, առաքինութիւններից և մինչև անգամ բարի անունից։ 4) Ուրիշեւ ունեցածի վրայ չար աչք, չար նախանձ չպէտք է ունենանք մենք։ Ուրիշների բարինները—յաջողութիւնը, հարստութիւնը, բարի անունը—պէտք է մեղ ուրախացնեն և ոչ թէ տրտմեցնեն և մենք բարի նախանձով ու օրինակով պէտք է աշխատենք համել նրանց։ 5) Կեանքի մէջ նրանք, որոնք գոհ չեն իրենց վիճակից և աշխատում են աւելի լաւ վիճակ ձեռք բերել ոչ-ներելի միջոցներով, յանցանք են գործում և պատժում են։ Ո՞վ փոքր յանցանք է գործում, նա շուտով մեծն էլ կործէ և ով փոքր չարիքը չի հանիլ սրտից, նա մեծն էլ կրծուարանայ հանել և նա, որ պատճառ է գառնում մէկի գայթակղութեան և հանում ուղիղ ճանապարհից, նա մեծ յանցանք գործողն է։

№ 5. ԱԴԱՄԻ ՈՐԴԻՔԸ

I. Աղամ և Եւա ունեցան երկու որդի՝ Կայէն եւ Աբէլ։ Կայէնը պարապում էր երկրագործութեամբ, իսկ Աբէլը՝ խաշնարածութեամբ։

Մի անգամ երկու եղբայրները գոհ բերին Աստուծուն. Կայէնն իր մշակած դաշտի պատողներից, իսկ Աբէլը՝ իր խաշների անդրանիկ գառներից։ Բայց երկուսի սիրտը միատեսակ չէր։ Աբէլը մաքուր սըրտով էր մատուցանում, իսկ Կայէնը՝ նախանձու։ Այս պատճառով Աստուած ընդունեց Աբէլի գոհը, իսկ Կայէնինը—ոչ։ Այս բանի վրայ Կայէնը խիստ բարկացաւ և սկսեց արտմել. նրա դէմքը փոխուեց։ Աստուած զգուշացրեց Կայէնին, բայց նա չլսեց և սրտից ոխը չհանեց և մի անգամ խարելով իր եղբօրը՝ տարաւ դաշտն ու սպանեց։

Աստուած հարցրեց Կայէնին. «Ո՞ւր է քո եղբայր Աբէլը»։ Կայէնը փոխանակ զղջալու՝ կոպիտ

պատասխանեց. «Զգիտեմ, միթէ ես նրա պահապանն եմ»: Աստուած ասաց. «Քո եղբօր արիւնը բողոքում է. անիծած լինիս դու, հանգստութիւն չունենաս և թափառիս երկրիս վրայ»:

Այսուհետև Կայէնը հեռացաւ և գնաց ուրիշ երկիր. իսկ Աստուած Աղամին և Եւային մխիթարելու համար՝ տուեց մի ուրիշ որդի, որին անուանեցին Սէթ:

II. Աղամ և Եւա քանի որդի ունէին սկզբում: Ի՞նչ էին նրանց անունները և ի՞նչով էին պարապում: Սրտի կողմից ինչպէս էին և իրանց հաւատն ու սէրը դէպի Աստուած ինչ ձևով էին արտայայտում: Աստուած ում զոհը և աղօթքը ընդունեց: Կայէնի սրտում ինչ չար զգացմունք—նախանձ ծագեց և ինչ արեց Աբէլին: Աստուած ինչ պատիժ տուեց Կայէնին և ինչով մխիթարեց Աղամին ու Եւային:

III. Այս պատմութեան մէջ սարսափելի բան ենք տեսնում—եղբայրը սպանում է եղբօրը և ինչու համար, որ Աստուած նրա աղօթքն ու զոհը չէ ընդունել: Սա առաջ է եկել նախանձից: Նախանձը մի այնպիսի արատ է, որ եթէ մի տեղ բուն դրեց, սկսում է հետզհետէ աճել և մեծանալով ու սաստկանալով հասցնում է մարդուն ինքնամոռացութեան, բարկութեան, վրէժինդրութեան և սպանութեան մինչև անգամ իր եղբօրը: 2) Աստուած ամենագէտ է. Նրան յայտնի են մարդոց սրտերը: Նա ընդունում է միմիայն մաքուր սրտերից աղօթքը: Կայէնը չար էր, նրա սիրտը նախանձով և ատելութեամբ լիքն էր, այն ինչ Աբէլը բարի, խոնարհ և հեղ էր, ունէր մաքուր սիրտ, հաւատ և սէր դէպի Աստուած: Սրա համար Աբէլի աղօթքն ու զոհը ընդունում է, իսկ Կայէնինը—ոչ: Կայէնը փոխանակ իր սիրտը մաքրելու, (որովհետեւ Աստուած Կայէնին էլ կսիրէր, եթէ նա էլ իր եղբօր պէս հեղ, բարեպաշտ լինէր և մաքուր սիրտունենար) —փոխանակ Աստծու զգուշացնող խօսքերը լսելու և ներու:

զութիւն ինդրելու, կոպիտ է պատասխանում և ձեռքը բարձրացնելով եղբօր վրայ՝ անտես է առնում նրա աղաշանքն և սպանում է նրան, սզի մէջ ձգելով իր ծնողներին: 3) Աստծու պատիժն խսկոյն համառում է մեղաւորին Կայէնին. Նրա խիղճը տանջում է նրան իր արած չար գործի համար և միտքը խանգարուած ու սրտի ցաւով ոչ մի տեղ դադար ու հանգիստ չէ գտնում: Նրա չար արարքը գիշեր ցերեկ մտքից և սրտից չէ հեռանում, նախատում է նրան, որ նա մարդասպան է—եղբայրասպան է, Նա երեքեալ—տատանեալ շրջում է երկրի վրայ: 4) Աստուած ողորմած և մարդասէր է, նա հարկանում է և բժշկում: Նա նեղութեան ժամանակ մխիթարում է իր հաւատացեալների սիրտը, որոնք հաւատով և յուսով գիմում են նրան և ինդրում: Նրա ողորմութիւնն ու օգնութիւնը: Եւ այսպէս Աղամին և Եւային Աստուած մխիթարում է մի նոր որդի տալով:

№ 6. Ջ Ր Հ Ե Ղ Ե Չ

I. Մարդիկ շատացան երկրիս վրայ և վատացան: Նրանք մոռացան ճշմարիտ Աստծուն և սկսեցին վատ գործեր անել: Աստուած շատ համբերեց, բայց երբ տեսաւ, որ չեն ուղղուում, վճռեց պատժել նրանց ջրհեղեղով:

Այս ժամանակ ապրում էր մի արդար և ճշմարիտ մարդ՝ նոյ անունով: Նա ունէր երեք որդի, Սէմ, Քամ եւ Յարէթ: Աստուած հրամայեց նոյին մի տապան շինել, որի մէջ կարելի լինէր տեղաւորել իր ընտանիքն և այն կենդանիները, որոնք չէին կարող ապրել ջրի մէջ: Նոյը շինեց տապան և մտաւ նրա մէջ ինքն, իր կիսը, երեք որդին և երեք հարսները: Նա վերցրեց իր հետ կենդանիներ և թռչուններ և մի տարուայ էլ ուտելու պաշար:

Երբ ամեն բան պատրաստ էր, եկաւ սաստիկ անձրե (ջրհեղեղ) քառասուն օր և քառասուն գիշեր շաբունակ։ Զուրը բարձրացաւ և ծածկեց բոլոր երկիրը, Մարդիկ, կենդանիներ և թռչուններ խեղդուեցան։ Ազատուեցան միայն նրանք, որոնք տապանի մէջ էին։ Հարիւր յիսուն օրից յետոյ վիշեց սաստիկ քամի, ջուրը սկսեց իջնել և տապանը նստեց Արարատ (Մասիս) սարի գլխին։

Երբ երևեցան ջրի միջից սարերի կատարները, նոյր դուրս թողեց տապանից մի ազուաւ, որ էլ չը վերադարձաւ։ Եօթն օրից յետոյ թողեց մի աղաւնի։ Աղաւնին նստելու տեղ չգտաւ և վերադարձաւ։ Եօթն օրից յետոյ կրկին թողեց աղաւնի։ Նա վերադարձաւ և ունէր ձիթենի ճիւղ բերանում։ Եօթն օրից յետոյ երրորդ անգամ արձակեց աղաւնուն, բայց նա էլ չվերադարձաւ։ Այն ժամանակ նոյր և նրա հետ եղողները իմացան, որ ջուրը ցամաքել է և դուրս եկան տապանից։ Նոյր շնորհակալութեան զոհ բերեց Աստուծուն։ Աստուծած ընդունեց այս զոհը և խոստացաւ էլ չպատժել մարդոց ջրհեղեղով։ Այս խոստման նշանը ծիածանն էր, որ այս ժամանակ երկաց երկնքում։

II. Աստուծած ինչու համար և ինչպէս պատժեց մարդոց։ Ո՞վքեր ազատուեցան և ինչպէս։ Բացի նոյի ընտանիքից էլի ինչ բաներ ազատուեցան մահից, թանի օր տեսց ջրհեղեղը և ինչպէս իմացաւ նոյր ջրի ցամաքիլը։ Տապանից դուրս գալով նոյր՝ ինչ արեց և Աստուծած ինչպէս ընդունեց նրա զոհը և ինչ նշան տուեց իր խոստման կատարելու համար։

Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Աստուծած պատժում է մարդոց. բայց նա իսկոյն չէ պատժում, այլ դեռ երկար ժամանակ խրատում, զգուշացնում է և երբ նրանք չեն ուղղում, այն ժամանակ միայն պատժում է։ Նա արդարներին պհանանում և ազատում է։ 2) Վատ օրինակը փչացնում, վարակում է շատերին, եթէ նրա առաջը շուտ չէ առնելում և արմատախիլ չէ անւում։ Այսպէս կայէնի որդիքը և սերունդը վատ, չար և ապականուած էին. իսկ Սէթի որդիքն ու սերունդը բարեպաշտ և արդար։ Սրանք մօտենում են միմեանց, խառնում են, սովորում են նրանցից վատութիւն, գործում են նրանց նման անօրէն—Աստծուն հակառակ գործեր և պատժում։ Այսպէս մի վատ երեխայ, մի վատ մարդ կարող է վատացնել, փչացնել մի քանի երեխաների, մարդկանց և հասարակութեան, եթէ իսկոյն չառնուի նրա առաջը։ 3) Տեսնում ենք նոյի և իր ընտանիքի երախտագիտական զգացմունքը—զոհ բերելը, շնորհակալութիւնը և Աստծու խոստումը այլև ջրհեղեղով չպատժելու համար։ 4) Տեսնում ենք նաև, որ չլսելը բարի խրատներին, բարի խօսքերին, բարի խորհրդին, մեծ սխալ է և վխաս է առաջ բերում։ Եթէ մարդիկ լսէին նոյի խրատներին և հեռանալին վատ և չար գործերից, հարկաւ կաղատուէին պատժից, որովհետև Աստուծած պահպանում է իրան սիրողներին, իսկ պատժում է իրան առողներին։ ուրիշներին օրինակ տալու և զգուշացնելու նպատակով։

Հ 7. ԲԱԲԵԿՈՆԵԱՆ ԱՇՏԱՐԱԿԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

I. Ջրհեղեղից յետոյ մարդիկ կրկին բազմացան նոյի երեք որդիկերանցից։ Նրանք ապրում էին միամին, կազմում էին մի ազգ և խօսում էին մի լեզուով։ Ամեն մի ցեղի-ընտանիքի մէջ մեծը կոչւում էր Սահապետ, որ կառավարում էր տունը և փոքրերին սովորեցնում էր, թէ ինչպէս պէտք է կեանք վարել։ Նա էր նոյնպէս Աստուծուն զոհ մատուցանում։

Երբ չար գործերն ու երկպառակութիւնները շատացան երկրիս վրայ, մի քանի ցեղեր որոշեցին մի քաղաք շինել և նրա մէջ բարձրացնել մի աշտարակ, որի ծայրը հասնէր մինչև երկինք: Սրանով նրանք կամենում էին մեծ անուն թողնել—փառք վաստակել և, եթէ մի անդամ էլ ջրհեղեղ լինի, կարողանան նրա մէջ պատսպարուել ու ազատուել:

Բայց այս ամբարտաւան խորհուրդը և անմիտ գործը հաճելի չէր Աստուծուն և Նա չթողեց, որ շինութիւնն աւարտուի: Նա խառնեց նրանց լեզունները, որ իրար չհասկանալով՝ թողին շինութիւնը կիսատ ու ցրուեցին: Այս քաղաքը, ուր շինուեց աշտարակը, կոչուեց Բարելոն, որ նշանակում է խառնակութիւն, իսկ աշտարակը՝ Բարելոնի աշտարակաշինովթիւն:

Աշտարակաշինութիւնից յետոյ մարդիկ ցրուեցան երկրի զանազան կողմերը և մոռացան ճշմարիտ Աստուծուն: Նրանք սկսեցին երկրպագութիւն տալ արեգակին, լուսնին և աստղերին: Ապա շինեցին ոսկուց, արծաթից, փայտից աստուածներ և պաշտեցին ու զոհ մատուցին: Այսպիսի արձանները կուռք էին կոչում, նրանց մատուցած պաշտօնը՝ կուսալաշտովթիւն, իսկ պաշտողները՝ կուսալաշտ կամ հեթանոս:

II. Ջրհեղեղից յետոյ մարդիկ քանի աղք էին կազմում և քանի լեզուով էին խօսում: Իւրաքանչիւր ընտանիքի մեծն թնչպէս էր կոչվում և ինչ ու ի՞նչ էր նրա պաշտօնը: Ի՞նչ պատճառով մարդիկ կամեցան աշտարակ շինել և ինչ չըյածողուեց: Ի՞նչպէս էր կոչում այն քաղաքը, ուր սկսել յաշողուեց: Ի՞նչպէս էր կոչում այն քաղաքը, ուր սկսել աշտարակը: Աշտարակաշինութիւնից յետոյ մարդիկ ուր գնացին և նրանք պահեցին արդեօք ճշմարիտ Աստուածապաշտովթիւնը: Ի՞նչ աստուածների սկսեցին պաշտել: Ի՞նչպէս էին կոչում նրանք և նրանց պաշտողները:

III. Այս պատմութիւնից մենք տեսնում ենք. 1) որ մարդիկ ջրհեղեղից յետոյ կրկին բազմանում են և վարում խաղաղ կեանք: Իւրաքանչիւր ընտանիք ունենում է իր նահապետը: Յետոյ ծագում է նրանց մէջ մի ամբարտաւան միտք տափարակ տեղում մի քաղաք շինել և նրա մէջ մի աշտարակ բարձրացնել: Աստուած արգելք է դնում այդ բանին և խառնում է նրանց լեզունները: Նա արգելում է այդ բանը, որովհետև նրանց ամբարտաւան և անմիտ խորհրդի մէջ նկատում է չար միտք, այն է՝ Աստուծուն հաւասարուել: Նրանք կամենում են հանել իրանց սրտից Աստուծու երկիւղը և սկիզբն առնել անօրէն և չար գործերի, որոնց համար գիտէին, որ Աստուած կըպատժէ: Նրանք կարծում էին, թէ բարձրանալով աշտարակի վրայ, կարող են ազատուել: 2) Հարկաւոր է որևէ գործ կամ ձեռնարկութիւն սկսելուց առաջ քննել և Աստուծու հաճութիւնն ու օրհնութիւնն ստանալ այն է՝ արդեօք դէմ չը նրա օրէքներին, նրա կամքին. ապա սկսել գործը, որը միայն կարող է յաջող վախճան ունենալ: Այդ պատճառով մենք նախապէս պէտք է աղօթենք և կնդրենք Նրա օրհնութիւնն օգնութիւնը—մեր ձեռնարկութեան ժամանակ և ապա սկսենք, թէ տուն, թէ ուսումնարան և թէ բարեգործական որևէ հաստատութիւն կանգնել կամ որևէ գործի ձեռնամուխ լինել: 3) Մենք տեսնում ենք որ մարդիկ, որքան շատանում են, այնքան աւելի են վատանում և անմաքուր դառնում: Նրանք ամեն տեսակ չարութիւններ անելով, խաբելով, յափշտակելով, շաբայլութիւն և մարդասպանութիւն կատարելով, կարծում են, թէ այդ չարութիւններից կարող են արդարանալ, ազատուել կուռքերին ծառայելով և նրանց համար մարդիկ զոհ բերելով, առաւելապէս անմեղ մանուկներին:

Նրանց մեծ մասը սկսում են Աստուած համարել այն բաները, որոնք իրանց օգուտ կամ վսաս են տալի: Նրանք երկնային մարմիններին և երկրի կենդանիներին աստուածային պատիւներ են տալիս և մինչև անդամ պաշտում են ծովը, երկիրը, մարդիկ, կենդանիներն ու բոյսերը: Աստուածների մէջ ոմանց մեծ և ոմանց փոքր, ոմանց բարի



և ոմանց չար են համարում։ Այս մոլորութիւնը հետզհետէ
աւելի է տարածւում և մարդիկ դառնում են կուտաշոներ,
հեթանոսներ։

Հ 8. ԱԲՐԱՀԱՄԸ ՏԵՂԱՓՈԽԻՈՒՄ Է ՔԱՆԱՆԱՅՈՅՑ ԵՐԿԻՐԸ

I. Երբ մարդիկ մոռացան ճշմարիտ Աստծուն և
կուռք էին պաշտում, այդ ժամանակ ապրում էր մի
բարեպաշտ և արդար մարդ՝ Աբրահամ անունով։ Նա
Սէմի ցեղից էր և բնակւում էր Միջագէտքի Խառան
քաղաքում։ Նրա հայրն ու բոլոր ազգականները նմա-
նապէս մոռացէլ էին Աստծուն ու կուռք էին պաշ-
տում։ Միայն Աբրահամն էր պաշտում ճշմարիտ Աս-
տծուն։

Աստուած ընտրեց Աբրահամին, որ նրանով և
նրա սերնդով պահպանուի ու տարածուի ճշմարիտ
հաւատը և հաստատ մնայ յոյսը դէպի խոստացեալ
Մեսիան—Փրկիչը։

Մի անգամ Աստուած երևաց Աբրահամին և ա-
սաց. «Թո՞ղ քո հայրենիքը, քո ազգականները, քո
հայրենի տունը և գնա այն երկիրը, որը կըտամ քեզ.
Ես կըբարձրացնեմ քո անունը և քեզանով պէտք է
օրհնուին երկրի բոլոր ազգերը։»

Աբրահամը խոնարհութեամբ կատարեց Աստծու
հրամանը։ Նա վեր առաւ իր կին Սառային, եղբօր
որդի Ղովտին—որոնք նոյնպէս հաւատում էին ճշմա-
րիտ Աստծուն։ այլև իր ծառաներին, աղախիներին
ու խաշնարածներին և Միջագէտքի Խառան քաղաքից
գնաց Աստուծու ցոյց տուած երկիրը, ուր բնակւում

էր Քանանու սերունդը և կոչւում էր Քանանացոց
երկիր։

Երբ հասաւ Սիւքէմ հովիար, Աստուած կրկին
երկաց նրան և ասաց. «Այս երկիրը ես քո սերնդին
պէտք է տամ»։ Աբրահամը հաւատով ընդունեց Աս-
տծուծու խոստումը, թէև գեռ որդի չունէր։ Աբրահա-
մը սեղան շինեց, մատաղ արեց և Աստծու անունը
փառաբանեց։

Քանանացոց երկիրն իր գեղեցկութեան և պաղա-
բերութեան պատճառով համարում էր այնպիսի եր.
կիր, որից բղխում էր մեղք ու կաթ։

II. Երբ մարդիկ կռապաշտ դարձան, ում ընտրեց Աս-
տծուած ճշմարիտ հաւատի պահպանող և տարածող, Ո՞ւր էր
բնակւում Աբրահամը և ինչ էր պաշտում։ Դարձեալ հվեր
էին ճշմարիտ Աստուածպաշտներ։ Ո՞ւր ուղարկեց Աստուած
Աբրահամին և ինչ խոստացաւ։ Ո՞ւր բնակուեց նա և ինչ-
պիսի երկիր էր։

III. Այս պատմութիւնից երևում է. I) որ Աստծուած
բարեպաշտ Աբրահամին հեռացնում է իր հայրենիքից և
օտար երկիր է ուղարկում։ Աբրահամի համար շատ ծանր
էր թողնել իր հայրենիքը, տունը։ տեղը, կալուսձները,
բարեկամներն և բնակուիլ օտարութեան մէջ՝ անծանօթ
երկրի—ժողովրդի մէջ, որովհետեւ այնտեղ ամեն ինչ
նոր է, անծանօթ է, իրանը չէ։ Բացի զրանից ճանապարհին
նրան կարող են պատահել նեղութիւններ, գժբախտութիւն-
ներ, զրկողութիւններ և վերջապէս մահ։ Կամ թէ կարող են
նրան սիրով չընդունել անծանօթ երկրում, անյաջողու-
թիւնների կանոդիպի և կամ թէ նոր երկիրը կարող է ան-
պաղաքեր լինել, իսկ նա այնտեղ բարեկամներ, ծանօթներ
չունի, որ օգնեն։ Սակայն Աբրահամը այնքան սիրում է
Աստծուն և հաւատում է նրա խօսքին, որ ամեն նեղու-

թիւն և զրկանք կրելով՝ յանձն է առնում գնալ իր նոր հայրենիքը, Աստուծու ասած տեղը—Քանանացոց երկիրը, միանգամայն հաւատալով, որ Աստուծու իր բարեկամն է, Նա սիրում է նրան, միշտ պաշտպանել է և կպաշտպանէ և թէ Նա ցոյց կտայ, կառաջնորդէ իրան անվտանդ հասնելու նոր երկիրը։ 2) Նա հաւատում է Աստուծու խօսքին, թէ այնտեղ մեծ յաջողութիւն կունենայ, Աստուծու որդի կտայ, մեծ ազգ կդարձնէ, նրա որդոց կտայ այն երկիրը. Նրա որդիքը կբազմանան և նրա սերնդից կը ծնի խոստացեալ Փրկիչը. Մենք տեսնում ենք. Աբրահամի երախտագիտական զգացմունքը, որ շնորհակալութիւն է անում Քանանացոց երկիրը անվտանք հասնելու և տեղացիներից սիրով ընդունուելու համար։ 4) Աստուծու Աբրահամին օտար երկիր տարաւ, որ նա հեռու լինի իր վատ բարեկամներից և այնտեղ կարողանայ պաշտել իր հաւատը և հաստատ պահել, որովհետև օտարութեան մէջ առանձնացած՝ աւելի աշատ կարող էր սովորեցնել իր ընտաքում Աստուծու պաշտութիւնը և ոչ ոք էլ նրան չէր խսնդարիլ կազմելու իր որդիներից մի բարեպաշտ սերունդ—ընտրեալ ժողովուրդ։

№ 9. ԱԲՐԱՀԱՄԸ ԵՒ ՂՈՎՏԸ ԻՐԱՐԻՑ ԲԱԺԱՆ ԻՈՒՄ ԵՆ

I. Երբ Աբրահամը ընակուեց Քանանացոց երկրում, Ղովտը նրան բաւականին նեղութիւն պատճառեց։ Աբրահամը նրան որդու պէս սիրում էր։ Օտար երկրում նա էր նրա միակ ազգականը։

Աբրահամը և Ղովտը պարապում էին անամսապահութեամբ և տէր էին բազմաթիւ խաշների։ Արօտաեղերի համար երկուսի հովիւների մէջ յաճախ կոիր էր ծագում։ Այս պատճառով Աբրահամն ասաց Ղովտին։ «Մենք ազգականներ ենք. լաւ չէ, որ մեր

մէջ անբաւականութիւն լինի։ Ահա բոլոր երկիր քո առաջն է, ընտրիր քեզ համար տեղ, որը քեզ հաճելի է և բաժանուիր ինձանից։ Եթէ դու աջ կերթաս, ես ձախ կերթամ, եթէ դու ձախ կերթաս, ես աջ կերթամ»։

Ղովտն ընարեց ջրերով հարուստ Յորդանան գետի հովիտը, որտեղ շինուած էին Սոդոմ և Գոմոր քաղաքները։ Այս երկիրը շատ գեղեցիկ էր և նման էր մի սիրուն պարտէզի, բայց բնակիչները չար էին։ Աբրահամը բարեկամաբար բաժանուեց իր ազգականից։ Ղովտը ընակուեց Սոդոմ քաղաքում, իսկ Աբրահամը մնաց Քիրբոնում։

Աստուծու երեաց Աբրահամին և ասաց. «Նայիր քո չորս կողմը, այս բոլոր երկիրը տալիս եմ քեզ և քո որդոց մշտապէս։ Ես կը բազմացնեմ քո զաւակներն՝ ինչպէս ծովի ափի աւազը։ Աբրահամը հաւատով ընդունեց Աստուծու խոստումն և իր վրանները թողեց Մամբրէի կաղնու մօտ (Քիրբոնում)։

I. Աբրահամին հվ աւելի ցաւ պատճառեց Քանանացոց երկրում։ Աբրահամն ինչպէս էր սիրում Ղովտին։ Ի՞նչ էր պատճառը նրանց անբաւականութեան և հվ էր գլխաւոր շարժառիթը։ Աբրահամն և Ղովտը ինչպէս բաժանուեցան իրարից և հվ որ կողմն ընտրեց։ Աստուծու Աբրահամին ի՞նչ խոստացաւ։

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Աբրահամը իր եղբօր որդի Ղովտին հօր մահուանից յետով վերցնում է իր մօտ և հօր պէս խնամք տանելով՝ պահպանում է ու մեծացնում։ Նա իր հետ տանում է նրան Քանանացոց երկիրը, հետացնելով, կուսադարձ և չար բարեկամներից։ Նրան մեծ հարստութեան տէր է դարձնում և բաղդաւորա-

ցնում: Եւ այս ամենի փոխարէն Ղովտը իր հոգեոր ծնողին — բարերարին լիշտ է պատճառում իր հովիւների պատճառով: 2) Աբրահամը մեծահոգութեամբ է վարւում Ղովտի հետ և չնայելով, որ այդ երկիրը Աստուած իրան էր խոստացել, ուստի և աւելի իրաւունք ունէր ընտրելու, որ կողմը ցանկանար, նա մինչև անգամ կարող էր իրքե մեծ, բարերար և երախտիք արած, պահանջել զիջանելու իրան, բայց նա այդ չէ անում: Նոյն իսկ արդարութիւնն և Ղովտի շահերը պահանջում էին, որ ասէր Աբրահամին, դու մեծ ես և աւելի փորձուած ու խելօք, դու ինձ հօր պէս մեծացրել ես, քեզ եմ պարտական իմ հարստութեամբ. դու իմ բարիքն ես միշտ կամեցել, դու ինձ համար վատ չես ուզել. ուստի դու ընտրիր ինձ համար, թէ ուր գնամ: Բայց դժբաղդապէս Ղովտը չարեց և շատ սխալուեց և շատ նեղութիւններ էլ կրեց: 3) Մենք պէտք է հետեւնք Աբրահամի օրինակին և եթէ պատահի մեր մէջ վէճ, անբաւականութիւն կալուածքի, տեղի, հաստութեան համար միշտ պէտք է Աբրահամի նման զիջողաբար — քրիստոնէաբար վարուենք, աչքի առաջ ունենալով խաղաղութիւնն և գործի սիրով ու շուտով վերջաւորութիւնը, եթէ այդ բանը մենց սիրով կան էլ տալու լինի:

№ 10. ԱԲՐԱՀԱՄԸ ԱԶԱՏՈՒՄ է ԳԵՐԻՆԵՐԻՆ

I. Ղովտը բաժանուելով Աբրահամից հանդիպեց մեծ ձախորդութեան: Հէնց այն տարին, երբ նա բնակուեց Սողոմում, օտար թագաւորներ յարձակուեցան այդ երկրի վրայ, Սողոմ ու Գոմոր քաղաքներն աւելեցին, հարստութիւնները կողոպտեցին և բնակիչներին էլ գերի տարան: Նրանց հետ գերի տարան և Ղովտին՝ իր բոլոր հարստութեամբ:

Երբ Աբրահամը լսեց, որ իր եղբօր որդի Ղովտը գերի է տարուած, իսկոյն հաւաքեց իր ծառաներին,

թուով երեք հարիւր տասն և ութ հոգի, օգնութեան կանչեց նաև իր գրացիներին և ընկնելով թշնամույթներից՝ յարձակուեց նրա վրայ, յաղթեց, յետ դարձեց և խեց բոլոր գերիներին ու աւարը, նմանապէս Ղովտին իր ընտանիքով և հարստութեամբ:

Վերադառնալիս Աբրահամի առաջ դուրս եկան Սաղէմի թագաւոր Մելքիսեդէկը և Սողոմի թագաւորը: Մելքիսեդէկը հաց և գինի մօտ բերեց Աբրահամին և օրհնեց նրան: Այս Մելքիսեդէկը թագաւոր էր և Սոտուծու քահանայ: Աբրահամը մեծ ուրախութեամբ ընդունեց նրա օրհնութիւնը և իր աւարից տասանորդ տուեց նրան. իսկ Սողոմի թագաւորն ասաց. «Տնւր ինձ միայն այն մարդիկը, որոնց ազատեցիր գերութիւնից, իսկ մնացեալը՝ աւարը վերցրու քեզ համար», բայց Աբրահամը չվերցրեց և ոչ մի փոքրիկ բան:

II. Ո՞ւր բնակուեց Ղովտն Աբրահամից բաժանուելով: Ի՞նչպիսի մարդիկ էին բնակում Սողոմ և Գոմոր քաղաքներում: Ի՞նչ նեղութիւն պատահեց Ղովտին և ով ազատեց նրան: Ո՞վ էր մելքիսեդէկն և Աբրահամի առաջ ի՞նչ բերեց: Ի՞նչ տուեց Աբրահամը Մելքիսեդէկին: Ի՞նչ տաշջարկեց Սողոմի թագաւորն Աբրահամին և ի՞նչպէս վարուեց Աբրահամը:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Ղովտն իր բարերար Աբրահամին խորհուրդ չհարցնելով բնակութեան տեղի համար, անյաջող ընտրութիւն արեց և տուժեց: Նա բնակուելով չար և անօրէն մարդոց մէջ — Սողոմում, կրեց շատ նեղութիւններ, գերի տարուեց իր ընտանիքով և խաշներով, որից յետոյ նա նոր հասկացաւ, թէ սխալ է գործել որ Աբրահամին խորհուրդ չէ հարցրել: 2) Աբրահամը, որ իրաւունք ունէր նեղանալու իր եղբօր-

որդուց և ասելու, որ նա արժանի է այդ պատժին—նա դարձեալ իբրև մարդասէր՝ օգնեց նրան և նրա հետ գերի ընկածներին և ազատեց նեղութիւնից: 3) Աբրահամի այդ բարի գործը—գերիներին աղատելը—շնորհակալութեամբ է ընդունուում և թագաւորներից մէկը—Մելքիսեդէկը—իբրև յարդանք և պատիւ հաց ու գինի է մատուցանում, իսկ Աբրահամը տալիս է նրան տասանորդ: Մելքիսեդէկը օրհնում է Աբրահամի կատարած բարի գործը և մարդարէանում է, որ հացը և գինին մեղ պէտք է տայ խոստացեալ Փրկիչը իր փոխարէն և դրանով աղատէ մեղ մեղքից: 4) Տեսնում ենք Աբրահամի անշահասիրութիւնը, որ երբ Սողոմի թագաւոր Բաղակը առաջարկում է նրան վեր առնել աւարն իբրև վարձատրութիւն իր կրած նեղութեան համար, Աբրահամը բացէ ի բաց մերժում է ասելով, որ օգնութիւնը մեր նմանների կարիքի և նեղութեան ժամանակ՝ պէտք է լինի անվարձ, առանց ակնկալութեան, այլապէս նա առաջինութիւն չէ, նա բարութիւն չէ: 5) Այսպէս էլ, մենք տեսնելով Աբրահամի մէրը դէպի իր մերձաւորը և կենդանի հաւատը դէպի Աստուած, Որը նրան քաջութեան և աներկիւութեան ոգի է ներշնչում,—պէտք է նրա նման վարուենք մեր ընկերոջ, եղբօր, աղդականի, բարեկամի, հարկամնի և առհասարակ ամեն մի կարիք և նեղութիւն ունեցող մարդու հետ, որովհետեւ մենք ունենք մի երկնաւոր չայր—Աստուած, մենք նրա որդիքն ենք, ուրեմն մենք եղայրներ և քոյրեր ենք:

№ 11. ԱՍՏՈՒԾՈՒԻ ԽՈՍՏՈՒՄԸ ԱԲՐԱՀԱՄԻՆ

I. Մի անգամ Աստուած երևաց Աբրահամին և ասաց. «Մի վախիր, Աբրահամ, Ես քո պահապանն եմ. Ես քեզ կվարձատրեմ»: Աբրահամը պատասխանց—Տէր, ի՞նչ պէտք է տաս ինձ, ես ծերացել եմ, մահս մօտ է. ես անորդի պէտք է մեռնեմ: Աստուած ասաց. «Դու անորդի չես մեռնիլ»:

Նա դուրս բերեց Աբրահամին գիշերը բացօթեայ տեղ և ասաց. «Նայիր դէպի երկինք և համարի՛ր աստղերը, եթէ կարող ես: Այսպէս էլ անթիւ կինի քո սերունդը»: Աբրահամը հաւատաց Աստծու ասածներին:

Այս բանից յետոյ մի անգամ Աբրահամը կէսօրին նստած էր Մամբրէի կաղնու մօտ իր վրանի առաջ և տեսաւ, որ երեք օտարական մարդ գալիս են հեռութիւն տուեց և խնդրեց, որ գան իր մօտ և փոքրինչ հանգստանան: Նա նրանց ոտքերը կլուանայ, ճաշ կուտեն և ապա կշարունակեն իրանց ճանապարհը: Օտարականներն ասացին, թող այդպէս լինի: Աբրահամը լուաց նրանց ոտքերը, լաւ ճաշ պատրաստեց և հիւրասիրեց: Օտարականներից մէկը աւետիք տուեց Աբրահամին, որ նրա կինը Սառան որդի կունենայ: Ճաշը վերջանալուց յետոյ օտարականները ճանապարհ ընկան դէպի Սողոմ քաղաքը, ուր բնակւում էր Ղովտը.

Երեկոյեան երկու հրեշտակները հասան Սողոմ քաղաքը: Ղովտը նստած էր քաղաքի դռան. նա հիւրասիրեց նրանց: Հրեշտակները պատմեցին Սողոմ և Գոմոր քաղաքների կործանման մասին և խորհուրդ տուին Ղովտին շուտով հեռանալ: Ղովտը հեռացաւ իր ընտանիքով և ազատուեց. իսկ Սողոմ և Գոմոր քաղաքների բնակիչները պատժուեցան—այրուեցան իրանց չարութեան համար:

II. Ի՞նչ խոստացաւ Աստուած Աբրահամին և նա ի՞նչ պատասխանեց: Աստուած ի՞նչ ասաց Աբրահամին ժառանգի

մասին: Յետոյ հեր տարաւ նրան Աստուած և ինչ ասաց: Աստուած ինչ ձեռվ երևաց Մամբրէի կաղնում մօտ: Աբրահամն ինչպէս ընդունեց երեք օտարականներին. ինչ պատահեց Սոգոմ և Գոմոր քաղաքներին. հվեր աղասուեցան:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Աբրահամը, թէ բաղդաւոր, հարուստ և ամենից յարգուած է, բայց ունի սրտի մէջ նեղութիւն, ցաւ: Այդ ցաւը նրա անորդի լինելու է: Նա ծերացել էր և ցանկանում էր ունենալ օրինաւոր ժառանգի իր մահուանից հետոյ, որ իր հարստութիւնը ժառանգէ և իր ազգն ու յիշատակը պահպանուի: 2) Նու հաւատում է, որ Աստուած իր տուած խոստումը կը կատարէ, միայն համբերութիւն է հարկաւոր. Նա ամեն գիշեր դուրս գալով տանից և աստղերին նայելով յիշում էր Աստուծու խոստումն և ապագայ բաղդաւորութիւնը: Նա տեսնում է, որ ուշանում է Աստուծու խոստման կատարումը և ինքն էլ իր կնոջ հետ ծերանում է, այնուամենայնիւն նա դարձեալ հաւատում է. որ Աստուած իրան առանց յիշատակի—ժառանգի չի թողնիլ, ինքը որդի կունենայ, որով հետեւ Աստուած ուխտ է դրել, դաշն է կապել, եթէ Աբրահամը միշտ այդպէս բարեպաշտ կմնայ, ինչ էլ որ նրան պատահի, ուրախութիւն թէ տրտմութիւն և եթէ միշտ այդպէս մեծ հաւատ կունենայ և կիսուտովանի, թէ Աստուած ամեն բան տեսնում է, ամեն ինչ լսում է և թէ Աստուած է այդ ամենն ուղարկում,—այն ժամանակ նա միշտ նրա հետ կլինի, նրան կպաշտպանէ, կօրճնէ, անթիւ ժառանգներ կտայ և երկիրը նրան կընծայէ: 3) Տեսնում ենք, որ Աստուած իր խոստման կատարումն աւելի զօրացնում է և 24 տարի Քանանցոց երկրում անցնելուց յետոյ՝ երեսում է օտարականի տեսքով և հիւրասիրուս, ուր գարձեալ կըրկնում է իր խոստումը, թէ նրա կին Սառան ծերութեան ժամանակ կունենայ որդի: Աբրահամը հաւատում է: 4) Տեսնում ենք Աբրահամի մեծ հաւատը և նրա անսահման հպատակութիւնն ու հիւրասիրութիւնը, որ ամենայն սիրով գնում է օտարականների առաջ, առանց ճանաչելու նրանց

և ինչըրում է պատուել իրան, փոքր ինչ հանգստանալ եր վրանի առաջ, Աստուծու տուած ողորմութիւնից—բարիքներից վայելել—ճաշել և ապա շարունակել ճանապարհը: Նա երեսում է բաղաքավարի, հեղ և խոնարհ մարդ, լուանում է նրանց սոքերը: Հին ժամանակ հիւրերի սոքեր լուանալը ընդունուած էր և համարւում էր մեծ պատիւ: 5) Մենք պէտք է օրինակ վեր առնենք Աբրահամից և նրա չափ մեծ և հաստատ հաւատ ունենանք դէպի Աստուած, թէ նա միշտ իր տուած խոստումը կատարում է, և երբէք մեր սրտի մէջ չպէտք է ունենանք երկրայութիւն, թէրահաւատտութիւն և կեղծութիւն, նրա հրամանների, պատուիրանների և օրէնքների կատարելու վերաբերութեամբ:

№ 12. ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԶՈՀ ԲԵՐԵԼԸ

I. Աստուծու խոստումը կատարուեց: Աբրահամը հարիւր տարեկան ժամանակ որդի ունեցաւ, որին անուանեց իսահակ: Իսահակը բարի և հսազանդ էր. Աբրահամը նրան շատ էր սիրում:

Երբ իսահակը մեծացաւ, Աստուած ասաց Աբրահամին. «Վեր առ քո միակ որդուն և բեր, մատաղ արա ինձ համար այն սարի վրայ, որ ես ցոյց կըտամ:

Միւս առաւօտ վաղ վերկացաւ Աբրահամը, համեստեց էլլը և ողջակիզի համար փայտ պատրաստեց: Նա վեր առաւ երկու ծառայ, սուր, կրակ և իր սիրելի որդի իսահակին և գնաց Աստուծու ցոյց տուած տեղը—Մորէա սարը: Երբ Աբրահամը հեռուից տեսաւ սարը, ասաց ծառաներին. «Դուք այստեղ մնացէք և սպասեցէք մեզ: Ես և իմ որդին կերթանք դիմացի սարը, կաղօթենք և կըվերադառնանք»: Աբրահամն իսահակին բարձեց փայտը, ինքն առաւ սուրն ու կըրակը և զնացին: Ճանապարհին իսահակը հարցըեց.

«Հայր, մենք ունինք կրակ, փայտ և սուր, բայց ուր
է ողջակիզի ոչխարը»։ Աբրահամը պատասխանեց.
Աստուած ինքը կըպատրաստէ իր համար ողջակիզի
ոչխարը՝ որդեակ։ Երբ բարձրացան սարը, Աբրահամը
սեղան շինեց, գարսեց փայտերը և իսահակին կապեց
նրա վրայ։ Յետոյ վեր առաւ սուրը և ձեռքը բար-
ձրացըեց, որ մորթի, յանկարծ Աստուծու հրեշտակը
ձայն տուեց նրան երկնքից։ «Աբրահամ, մի դիպչիր
տղային, գու Աստուածավախ մարդ ես և ինձ համար
քո սիրելի որդուն չխնայեցիր»։ Աբրահամը իր շուրջը
նայեց և տեսաւ, որ իրանից փոքր ինչ հեռու կախ-
ուած է ծառից մի ոչխար։ Նա ոչխարը իսահակի փո-
խարէն գոհեց Աստուծու համար։

Աբրահամն կրկին Աստուծու խոստումն ու օրհ-
նութիւնն ստացաւ, թէ նրա զաւակները պէտք է շա-
տացնի և թէ նրա զաւակներից կըծնուի աշխարհի
փրկիչը։

II. Աստուած կատարեց արդեօք իր տուած խոստումն
Աբրահամին։ Ի՞նչ անուն ստացաւ նրա որդին։ Ի՞նչպիսի
որդի էր իսահակը։ Երբ իսահակը մեծացաւ, Աստուած ի՞նչ
պատուիրեց Աբրահամին։ Աբրահամը կատարեց արդեօք Աս-
տուծու հրամանը և մեր գնաց։ Ճանապարհին հայր ու որդի
ի՞նչ խօսակցութիւն ունեցան։ Աբրահամը որոշուած սարի
գլխին ի՞նչ պատրաստեց գոհի համար։ Ի՞նչպէս վարուեց
իսահակը և ի՞նչ հետեանք ունեցաւ։

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ
Աբրահամի ուրախութեանը չափ չկայ որդի ունենալով, որով-
հետև նրա հաւատը իրականացաւ. և յոյսն արդարացաւ. իսկ
որդին էլ բարի, խոնարհ, հնաղանդ և միխթարիչ էր ծերու-
թեան ժամանակ; 2) Տեսնում ենք, որ Աստուած պատուի-
րում է Աբրահամին, իր միակ և սիրելի որդի իսահակին

զոհել, մատաղ անել։ Թէկ դժուար, ծանր և միանգամայն
անհասկանալի էր Աբրահամի համար Աստուծու պատուէրի
կատարելը, որովհետև նա պիտի ապրէր, որ Աբրահամի սե-
րունդը բազմանար, ինչպէս ծովի ափի աւաղը և երկնքի
աստղերը և աշխարհի Փրկիչը նրանից պէտք է ծնուի, բայց
և այնպէս Աբրահամը որքան և մտատանջութեան մէջ լինէր,
որքան և հոգեկան անհանգստութիւն պատճառէր նրան, որ-
քան և սիրէր որդուն, այսուամենայնիւ նա Աստուծու սէրը
իր որդուց բարձր դասեց։ Թէ ինչ կըլինէր նրա ներքին հո-
գեկան դրութիւնը, այս մեղ ամենիս համար հասկանալի կը-
լինի, եթէ մենք Աբրահամի տեղը լինենք և զգանք նրա սրտի
ցաւը։ Հեշտ է արդեօք, որ մարդ ինքն իր ձեռքով, իր միակ
որդուն սպանէ։ Ասելը հեշտ է, բայց կատարելը և դժուար
և անտանելի։ Ոչ ոք չի համաձայնիլ այդ անելու, որքան և
Բարձրեալը պատուիրէր։ Բայց հաւատոյ հայր Աբրահամը
պատրաստականութիւն յայտնեց կատարելու Աստուծու
պատուէրը։ Նա տարաւ իր որդուն զոհելու այն սարի վրայ
ուր միանգամ պիտի զոհուէր խոստացեալ Փրկիչը։ 3) Միւս
կողմից պէտք է նկատել որ Աստուած զոհի կարօտ չէ. Նա
մաքուր սրտեր և բարի գործեր է սիրում ու կամենում։
Բայց մարդոց հաւատը փորձելու, հաստատելու և աւելի ևս
ամրապնդելու համար. փորձութիւններ է տալի, որոնց մենք
համբերութեամբ պէտք է տանենք և միշտ աղօթենք, որ
օդնէ մեղ, որ մենք զնաս չկրենք, չթուանանք և մեղքի մէջ
չընկնենք։

Հ 13. ԻՍԱԿԱԿԻ ՈՐԴԻՔԸ ԵՒ ՅԱԿՈԲԻ ԵՐԱԶԸ

I. Աբրահամի մահից յետոյ իսահակն ստացաւ
հայրական ժառանգութիւնը։ Նա բացի հարստութիւ-
նից ստացաւ և Աստծու խոստումը, թէ նրա զաւա-
կից պէտք է ծնի աշխարհի Փրկիչը։

Իսահակն Աբրահամի նման խոնարհ և հաւատա-
րիմ էր. Աստուած էլ սիրում էր Աբրահամի նման։

Իսահակն ունէր երկու որդի—Եսաւ և Յակովը։
Եսաւը տեսքով վայրենի, խստաբարոյ, թաւոտ և թե-
թեամիտ էր. իսկ Յակովը՝ գեղեցիկ, հանդարտ և
խելօք։ Իսահակն իր մահից առաջ Աստուծու ազգե-
ցութեամբ օրհնեց Յակոբին։ Տուեց նրան անդրան-
կութեան իրաւունքը և ասաց, որ նա կըլինի Աստու-
ծու ժողովրդի ցեղապետ և նրա զաւակից կըծնի աշ-
խարհի Փրկիչը,

Եսաւը նախանձից ատեց իր եղբօրը և պատրաստ
էր սպանել։ Յակովը իր մօր՝ Ոերեկայի խորհրդով
հեռացաւ հայրական տնից և գնաց միջազետքի Խա-
ռան քաղաքը իր մօրեղբօր՝ Լաբանի մօտ։ Առաջին
գիշերը նա անցկացրեց անապատում բացօթեայ։ Նա
տիտոր էր և իրան համարում էր անօգնական։ Նա մի
քար դրեց գլխի տակ ու քնեց, և տեսաւ երազում
մի սանդուխտ, որի ծայրը հասնում էր մինչև եր-
կինք։ Հրեշտակներն իջնում ու բարձրանում էին նրա
վրայից, իսկ Աստուած վերել կանգնած՝ ասում էր.
«Ես եմ Աբրահամի և Իսահակի Աստուածը. մի վա-
խենար, այս երկիրը, որի վրայ դու պարկած ես, կը-
տամ քեզ ու քո սերնդին։ Նրանք կըլինին բազմաթիւ,
ինչպէս ծովի աւազը և քեզանով ու քո զաւակով
կօրհնուին երկրիս բոլոր ազգերը։»

Յակոբը առաւտեան զոհ բերեց Աստուծուն. և
այդ տեղն էլ անուանեց Բէթէլ, որ նշանակում է Աս-
տուծուու տուն։

Յակոբը վստահ Աստուծու օգնութեան վրայ՝
հանգիստ և անվտանգ շարունակեց իր ճանապարհը և
հասաւ Միջազետքի Խառան քաղաքը—Լաբանի մօտ։
Լաբանը սիրով ընդունեց իր քրոջ որդուն և պահեց

իր մօտ։ Յակոբն արածացնում էր Լաբանի խաշները։
Աստուծու խոստումը կատարուեց։ Յակոբը քսան
տարի մնաց Միջազետքում, ամուսնացաւ և մեծ հա-
րըստութեան տէր դառնալով՝ վերադարձաւ ընտանի-
քով իր հայրենիքը։ Նա հաշտուեց Եսաւի հետ և բը-
նակուեց հայրենի տանը՝ Քերբոնում։

Իսահակի մահից յետոյ Յակոբը ժառանգեց հօրը,
ստացաւ նրա հարստութիւնը և այն աւետումը, թէ
նրա զաւակից պէտք է ծնի աշխարհի Փրկիչը։

II. Իսահակը հօր մահուանից յետոյ ի՞նչ ժառանգու-
թիւն ստացաւ. Նա քանի որդի ունէր և ի՞նչ էին նրանց ա-
նունները։ Ի՞նչ բնաւորութեան տէր էր Եսաւը և ի՞նչ՝ Յա-
կոբը։ Իսահակի մահից հետոյ նվ ստացաւ անդրանկութեան
կրաւունքը։ Ուր գնաց Յակոբը և ի՞նչ էր պատճառը. Յա-
կոբը առաջին գիշերն ուր անցկացրեց։ Ի՞նչ երազ տեսաւ և
Աստուած ի՞նչ ասաց։ Յակոբն այդ տեղին ի՞նչ անուն տուեց
Քանի տարի մնաց Յակոբը Լաբանի մօտ և ի՞նչով էր պա-
րապում։ Քանի տարուց յետոյ վերադարձաւ. ուր բնակուեց
նա և հօր մահից յետոյ նվ ստացաւ անդրանկութեան իրա-
ւունքը։

III. Այս պատմութիւնից մինք սովորում ենք. 1) Իսա-
հակն Աբրահամի մահից յետոյ ստանում է հօր ժառանգու-
թիւնը և ունենում է երկու որդի։ Եսաւը միծանում, դառ-
նում է խստաբարոյ, վայրենի և թեթևամիտ մարդ։ Իսկ Յա-
կոբը լինում է մեղմ, խելօք և հանդարտ բնաւորութեան տէր։
Իսահակը սիրում է Եսաւին՝ Ոերեկան (մայր) Յակոբին,
միենայն ատելութիւնը՝ իմ՝ և քոն անցնում է Եսաւի ու Յա-
կոբի մէջ։ Նրանք իրար ատում էին, այնպէս որ մի հօր որ-
դիք, մի հարկի տակ մի բան միւսին տալու համար վարձա-
տրութիւն էին պահանջում։ 2) Տան կառավարութիւնը հօր
մահուանից յետոյ ստանում էր անդրանիկ որդին, նա տէր
էր լինում ամեն բանի, կառավարում, խրատում և այլն, իսկ
փոքրը—ստանում էր միայն մի մասը, ուրեմն պէտք է, որ

անդրանիկը լինէր խելօք, որ տունը լաւ կառավարէր, որ տան պատիւը, անունը, յարատեսութիւնը և յաջողութիւնը պահպանուէր: Այս պատճառով Աստուծութեամբ անդրանկութեան իրաւոնքը ստանում է խելօք Յակոբը: 3) Նա Եսաւի վրէժինդրութիւնից ազատւելու համար՝ իր ծնողների խորհրդով և օրհնութեամբ գնում է ուրիշ երկիր —Միջագետք մօրեղբօր Լաբանի մօտ, մինչև Եսաւի բարկութիւնն անցնի: Ճանապարհին նա ստանում է Աստուծու օրհնութիւնը, որ Աստուած նրա հետ կըլինի օտարութեան ժամանակ և կրկին կվերադարձնէ և մեծ ազգ կըյարուցանէ նրանից:

Յակոբը քսան տարի մնում է Միջագէտքում և դառնալով մհծ հարստութեան ու բազմաթիւ ընտանիքի տէր՝ վերադառնում է իր հայրենի երկիրը, հաշտում է երբօր հետ և այնուհետեւ սիրով ապրում են, որովհետեւ Եսաւի սրտից նախանձն և վրէժինդրութեան ոգին վաղուց հեռացած է լինում: 4) Տեսնում ենք, որ աւանդական սովորութիւնը փոխում է և անդրանկութեան օրհնութիւնը Խսահակը տալիս է ոչ մեծին, այլ կտսերին՝ խելօքին:

№ 14. ՅԱԿՈԲԻ ՈՐԴԻՔԲԸ

I. Յակոբն ունէր տասներկու որդի: Նրանց անուններն էին — Ռուգէն, Շմալոն, Ղեւի, Յուլա, Խսարը, Զաքուղոն, Դան, Նեփիթալիմ, Գաղ, Ասեր, Յուլսէփի եւ Բենիամին: Տասը՝ առաջին կնոջից՝ Լիայից էին, իսկ երկուսը — Յովսէփին ու Բենիամինը — Հոաքէլից:

Յակովի տասն որդիքը յաճախ վշտացնում էին իրանց հօրը: Յովսէփը հեղ, բարի և հնազանդ էր և երբէք չէր վշտացնում հօրը: Այս պատճառով Յակոբը շատ էր սիրում և նրա համար գեղեցիկ շորեր կաշշատ էր սիրում: Եղբայրներն այս առաւելութիւնը տեսնելով՝

սկսեցին նախանձել Յովսէփին: Նրանց նախանձն ատելութեան փոփուեց, երբ Յովսէփը միամտաբար պատմեց իր տեսած երկու երազները: Առաջինն էր, իբր թէ եղբայրները դաշտում հունձ էին անում և որաներ կապում: Յովսէփի որան կանգնած էր, իսկ եղբայրների որաները շուրջ էին առնում և երկը պագութիւն տալի: Երկրորդ երազն էր, իբր թէ արեգակը, լուսինն և տասն ու մէկ աստղեր երկրպագութիւն էին տալի նրան: Եղբայրներն ասացին. «Միթէ դու միտք ունիս մեծ լինել և իշխել մեզ»: Նըրանց ատելութիւնն աւելի սաստկացաւ և վճռեցին սպանել Յովսէփին: Բայց յետոյ մտածեցին և ծախեցին վաճառականների վրայ քսան դահեկանի: Իսկ նրա պատմուձանը պատառոտեցին և մի ուղ մորթելով՝ արիւնաթաթախ արին և տարան հօր մօտ ու ասացին, թէ չար գագանը նրան պատառուել է: Յակոբն երկար ժամանակ լաց էր լինում Յովսէփի համար:

Կաճառականները Յովսէփին տարան Եգիպտոս և ծախեցին: Այնտեղ նա շատ նեղութիւններ կրեց: Նա ստրուկ էր մի քանի տարի մի նշանաւոր Եգիպտացու տանը: Այնտեղ նա անմեղ զրպարտուեց և բանդ նրատեց, ուր մնաց երկու տարի: Բայց Աստուած Յովսէփի հետ էր և միշտ օգնում էր նրան:

Բանտի մէջ նստած էին Յովսէփի հետ երկու նշանաւոր մարդիկ — Եգիպտացիներ, մինը թագաւորի տակառապետն էր և միւսը մատակարարը: Մի անգամ նրանք տեսան զարմանալի երազներ և պատմեցին Յովսէփին:

Տակառապետը տեսել էր, իբր թէ խաղողի երեք

ողկոյզներից ճմլում էր հիւթ բաժակի մէջ և տալիս թագաւորին. իսկ մատակարարը տեսել էր, իբր թէ գլխի վրայ երեք խան ունէր զանազան կերակուրներով և թռչունները ուտում էին: Յովսէփն Աստուծու օգնութեամբ մեկնեց այս երազները: Տակառապետին ասաց, թէ երեք օրից յետոյ կստանայ իր պաշտօնը, իսկ մատակարարին—թէ նա երեք օրից յետոյ կըկախուի փայտից և թռչունները կուտեն նրա մարմինը: Կատարուեց բոլորը, ինչպէս Յովսէփն գուշակել էր:

II. Յակորը քանի ունէր և ինչ էին նրանց անունները: Ինչպէս էին վարւում Յակորի որդիքը իրանց հօր հետ: Յակորը նրանցից որին էր շատ սիրում և ինչ էր պատճառը, Յովսէփի ինչ երազներ տեսաւ. Ինչ արին եղբայրները Յովսէփին և ինչ ասացին իրանց հօրը: Ուրարան վաճառականները Յովսէփին և ինչ արին. Յովսէփին ինչպէս ծառայեց եգիպտացու տանը: Ինչ էր պատճառը նրան բանդարկելու: Ինչ նշանաւոր մարդիկ կային բանտարկուած Յովսէփի հետ: Ինչ երազներ էին տեսել նրանք և ինչպէս մեկնեց Յովսէփը այդ երազները:

III. Այս պատմութիւնից երեսում է. 1) որ Յակորը—հայրը մի տեսակ չէ սիրում իր որդոցը. Նա տարբերութիւն է դնում նրանց մէջ. Նա Յովսէփին աւելի է սիրում միւսներից և այդ սէրն արտաքին կերպով ցոյց է տալի, կարելով նրա համար գեղեցիկ շորեր: Յակորի որդիքը բացի Յովսէփից և Բենիամինից, որ փոքր էր, ինչպէս երեսում է արածներից՝ լինում են չար, ստախօս և նախանձոտ, այն ինչ Յովսէփը—բարի, խոնարհ, ճշմարտախօս և ծնողասէր: Նա չէ հաւանում եղբայրների արածը և հօրը պատմում է: Նրանց զայրոյթն առաւել ևս գրգռում է, երբ Յովսէփը միամտարար պատճում է իր տեսած երազները, որից երեսում է, որ նա մեծ մարդ՝ իշխան է դառնալու և իշխելու

եղբայրներին: Այս նախանձը վրէժխնդրութեան է համնում և կամենում են նրան սպանել: Բայց յետոյ ծախում են, չլսելով նրա աղաչանքին ու պաղատանքին և հօրը խարում են թէ գաղանները կերել են: 2) Տեսնում ենք, որ Աստուծած Յովսէփի հետ է լինում, նա իրեն հաւատարիմ ծառայում է Եգիպտացու տանը և չէ միանում Եգիպտացունու չար խորհրդին ու չէ խարում նրա մարդուն: Թէև այդ գովելի վարմունքի համար զրպարտում, բամբասւում և անարդար կերպով կալանաւորում ու պատժում է: Բայց ամենագէտ Խոտուած անմեղ զրպարտուած Յովսէփի հետ է լինում, պահպանում է նրան և բանդում: Նա սիրում է իր հաւատարմութեան և բարի սրտի համար բանտապետից, միւսներից աւելի է ազատութիւն վայելում և Աստուծու օգնութեամբ շնորհք է գտնում և երազները մեկնում, որոնք կատարում են նրա մեկնութեան համեմատ: 3) Մենք էլ երազներ ենք տեսնում և շատ անգամ տեսնում ենք այն, ինչ ցերեկը մեղ հետ պատահում է, բայց Աստուծած իր կամքն ու իր անելիքն երբեմն տեսիլներով էր յայտնում:

№ 15. ՅՈՎՍԷՓԻ ՓԱՐԱՔԸ

Երկու տարի անցնելուց յետոյ՝ Եգիպտոսի թագաւոր—Փարաւոնն էլ տեսաւ երազներ: Նա տեսաւ, որ եօթն պարարտ կովեր դուրս եկան նեղոս գետից և սկսեցին արածել: Յետոյ դուրս եկան եօթը նիհար կովեր: Նիհար կովերը կերան պարարտ կովերին: Փարաւոնը զարթեցաւ և նորից քնեց: Նա դարձեալ երազ տեսաւ, որ եօթը լիք հասկեր դուրս եկան, յետոյ եօթը դատարկ հասկեր: Դատարկ հասկերը կերան լիք հասկերին: Փարաւոնը զարթեցաւ և առաւտեան կանչել տուեց բոլոր իմաստուններին և երազպէտներին, բայց ոչ ոք չկարողացաւ մեկնել նրա երազները:

Այն ժամանակ տակառապետը, որ մի ժամանակ նստած էր Յովսէփի հետ բանտում, յիշեց Յովսէփին: Նրան բերին թագաւորի մօտ. թագաւորը պատմեց իւր երազները և Յովսէփը մեկնեց. «Աստուած յայտնել է թագաւորին, ինչ որ պէտք է անի: Սրանից յետոյ, ասաց Յովսէփը—կդան եօթն առատ տարիներ, իսկ յետոյ—եօթը սով տարիներ: Այժմ հարկաւոր է, որ թագաւորը պատրաստութիւններ տեսնի, ընտրի մի խելացի մարդ և կառավարիչ նշանակէ, որ պտղաբեր տարիներում պատրաստութիւն տեսնի և ցորեն ժողովի սով տարիների համար»: Թագաւորը շատ հաւանեց և ասաց Յովսէփին. «Քեզ զանից աւելի իմաստուն և խելօք մարդ չունիմ: Աստուած իր կամքը քեզ է յայտնել, ուրեմն դու կլինես այդ մարդը»: Նա նշանակեց Յովսէփին բոլոր Եղիպտոսի կառավարիչ և յանձնեց նրան ցորենի պատրաստութիւն տեսնել սով տարիների համար: Յովսէփին այդ ժամանակ երեսուն տարեկան էր: Սա թագաւորի հրամանով շտեմարաններ շինեց և առատ տարիներին ժողովեց այնքան ցորեն, ինչքան հարկաւոր էր սով տարիների համար, մինչև անզամ կարելի էր վաճառել օտար երկրների մարդոց վրայ:

II. Քանի՞ տարի անցնելուց յետոյ Փարաւոնը երազ տեսաւ և ինչ էին նրա երազները: Ով մեկնեց և ինչպէս թուաց Փարաւոնին այդ մեկնութիւնները: Փարաւոնը ինչ կարգադրութիւն արեց և ում նշանակեց կառավարիչ: Յովսէփին ինչ պատրաստութիւններ տեսաւ սովի համար:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Աստուած իբրև երկնաւոր հայր, հոգում է ժողովրդի հա-

մար և յայտնում է երազներով թագաւորին, որ հօր պէս պարտականութիւն ունի նրանց մասին մտածել, հոգալ և պատրաստութիւններ տեսնել ապագայի համար: Նա այդ բանի համար ընտրում է և ցոյց տալի մի այնպիսի արժանաւոր և գործին նուիրուսող մարդ, որը ճշմարիտ Աստուածուն է պաշտում և կեանքի մէջ փորձանաց և թշրւառութեանց դպրոցից միշտ յաջող է անցել և կարող է իր վրայ դրած պարտականութիւնները սրբութեամբ կատարել: Նրան տալիս է շնորհք, երազներ մեկնելու կարողութիւն և երկիրը սովից աղատելու միջոց—հնարք: 2) Տեսնում ենք Յովսէփի մէջ թշրւառութեան ժամանակ համբերութիւն, հեղութիւն, հաւատարմութիւն և հաստատ հաւատ դէպի Աստուած և որ գլխաւորն է, նրա երկիրը սրտի մէջ պահած, որ իմաստութեան սկիզբն է, որը յաջողութեամբ անցնելով կեանքի փորձանաց դպրոցը, արժանանում է այն մեծ պատուին, պաշտօնին, որի համար երկար տարիներ պատրաստուած է լինում և բարձր գնահատում թագաւորից: Համբերութեան արդինքն է, որ ծառային, ստրուկին, աղքատին, թշրւառին կարող է դարձնել տէր, իշխան, հարուստ և ամենին սիրելի: Ով կհամբերէ մինչև վերջը, նա կապրի և մարդ համբերութեամբ կստանայ այն, որին ձգտում է հասնել, ունենալ: 3) Մենք այս պատմութիւնից կարող ենք հետեցնել, որ մենք ևս ունենալով մեր գործերի մէջ Յովսէփի նման համբերութիւն, տոկուսութիւն, հաւատարմութիւն և հաստատ հաւատ դէպի Աստուած և նրա երկիրը պահելով մեր սրտի մէջ, կարող ենք հեղութեամբ տանել բոլոր նեղութիւնները, խոչնդուտները և Յովսէփի նման յաղթելով նրանց համեմ, արժանանալ ուրախութեան, բաղդաւորութեան, մեր նպատակին: «Արմատ ուսման դառն է, բայց պառող նորա քաղցր»: Այս բանը մենք իրական կեանքում յաճախ տեսնում ենք. նա, ով նեղութեան և ձախորդութեան համբերութեամբ է տանում, նրա վերջը միշտ լինում է լաւ: Մարդոց կեանքի մէջ միշտ յաջողութիւն, քաղցրութիւն չի լինում, նրան կից է դառնութիւն, անյաջողութիւն՝ և պատութիւն: Մարդ պէտք է սովորի համբերութեամբ և սիր-

բով տաճել, աչքի առաջ ունենալով, որ Աստուած վերջն ուրախութեան է փոխարինում:

№ 16. ՅԱԿՈԲԻ ՈՐԴՈՅ ԵԳԻՊՏԱՍ ԳՆԱԼԻ, ՅԱԿՈԲԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍ

I. Եօթն առատ տարիներն անցնելուց յետոյ՝ եկան եօթը սով տարիները: Յովսէփը բաց արեց շտեմարանների դոներն և հաց էր բաժանում ու ծախում:

Սովը հասաւ և Քանանացոց երկիրը, ուր ապրում էին Յակոբն ու նորա որդիքը: Յակոբը լսեց, որ Եգիպտոսում ցորեն են վաճառում, ուղարկեց իր որդիներին այնտեղ՝ ցորեն գնելու: Նրանք եկան Եգիպտոս, ներկայացան կառավարչին—Յովսէփին և խոնարհ երկըրպագեցին: Յովսէփը ճանաչեց նրանց և յիշեց իր երազները, բայց նրանք չճանաչեցին, որովհետև Յովսէփը փոխուել էր և նրանց հետ խօսում էր թարգմանի միջոցով:

Յովսէփը կամեցաւ իմանալ, արդեօք իր Եղբայրները փոխուել, ուղղուել են, թէ ոչ. ուստի սկսեց նրանց հետ խիստ լեզուով խօսել և վարուել: Նա նըրանց լրտեսներ անուանեց, և շատ նեղութիւններ տուեց, մինչև որ նրանք իրանց գործած յանցանքը ճշմարտապէս խոստովանեցին ու զղջացին: Յետոյ Յովսէփը յայտնեց, թէ նա իրանց Եղբայրն է: Եղբայրները շատ վախեցան և կարծեցին, թէ նա վրէժինդիր կըլինի, բայց նա հանգստացրեց, որ ոչինչ վկաս չի տալ: Ապա ուղարկեց յայտնել Յակոբին, որ Եգիպտոսի իշխանն նրա որդի Յովսէփին է:

Յակոբը շատ ուրախացաւ, որ Յովսէփը կենդա-

նի է: Նա Աստուծու հաճութեամբ տեղափոխուեց իր ամբողջ ընտանիքով Եղիպտոս և Փարաւոնի հրամանով բնակուեց Գեսեմ՝ երկրում:

Այսուհետև Յակոբը բախտաւոր կեանք վարեց Եգիպտոսում 17 տարի և մահուանից առաջ օրհնեց իր որդիներին և թոռներին: Նա Յուգային առանձնապէս օրհնեց և տուեց նրան անդրանկութեան իրաւունքն ու աւետիքը: Յակոբը մեռաւ և թաղուեց Քանանացոց երկրում Աբրահամի և Խսահակի մօտ: Յովսէփն էլ երկար տարիներ ապրեց Եգիպտոսում և սիրով խնամք տարաւ իր Եղբայրներին: Նա մեռնելուց առաջ մարգարէցաւ, որ Աստուած կըկին կըդարձնէ Խրայէլացիներին Քանանացոց երկիրը և կտակեց վերադարձին տանել իր ոսկորները: Յովսէփը մեռաւ և թաղուեց Եգիպտասում:

II. Ո՞րբան ժամանակ առատութիւն եղաւ. Եգիպտոսում և հրանժամանակ՝ սով: Բացի Եգիպտոսից դարձեալ որ երկրում սով ընկաւ: Յակոբը հացի համար իր որդոց ուղարկեց: Նրանք ումը ներկայացան և ինչ նեղութիւններ կրեցին: Յովսէփն ինչու նրանց հետ այդպէս վարուեց: Եղբայրներն, երբ խոստովանեցին իրանց յանցանքը՝ Յովսէփն ինչպէս վարուեց և ինչ պատուիրեց: Յակոբն ում գնաց բնակութեան համար և ինչ տեղ ստացաւ: Յակոբը քանի տարի ապրեց Եգիպտոսում և ինչպիսի կեանք վարեց: Մեսանելուց առաջ ում առեց Յակոբն անդրանկութեան իրաւունքը: Ո՞ւր թաղուեցան Յակոբն ու Յովսէփը: Ինչ էր Յովսէփի մարգարէութիւնը:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ թագաւորի երազները, ինչպէս Յովսէփը մեկնեց, կտարւում են և լինում է առատութիւն և ապա՝ սով: Յակոբն ուղարկում է իր որդոց ցորեն գնելու: 2) Եղբայրները գնում են Եգիպտոս—օտար երկիր, ներկայանում են և երկրաւ-

գում իշխանին—իրանց եղբօրը, բայց նրան չեն ճանաչում: Յովսէփը ճանաչում է նրանց և յիշում է իր եղազները, Բայց չէ յայտնում: Յովսէփը փորձում է իր եղբայրներին, թէ արդեօք նրանց կոշտ, կոպիտ և անխիղճ սրտերն ուղղուել են՝ աչ որի պատճառով այնքան ցաւ պատճառեցին իրանց հօրը և այնքան նեղութիւն իրանց եղբօրը: Նա սկզբում նրանց հետ խիստ է խօսում և զանազան նեղութիւններ պատճառում, մինչեւ որ իրանց կատարած չարութիւնները և յանցանքները խոստովանում են ու զղջում, հետեւապէս և ուղղում, որ եղեւում է նրանց կարեկցելովն իրանց հօրը և եղբօրը, որ չն ուզում նեղութիւն, տըրտմութիւն պատճառել և իրանց կեանքը փոքր եղբօր համար կամենում են զոհել, այն ինչ առաջ ուշադրութիւն չէին դարձնում: Յովսէփը վեհանձնաբար ներում է եղբայրներին իր դէմ գործած չարութիւններն և անյիշաչար է գտանում: Նա կարող էր իր կրած նեղութիւնների և չարչարանքների համար, որոնց պատճառը նրանք էին—պատժել նրանց, բայց չէ անում, այլ ընդհակառակը բարիք է անում և սով տարիների ժամանակ հաց, կերակուր, շոր և բոլոր հարկաւոր մարմնաւոր պիտոյքներ հոգում: 4) Մենք կեանքի մէջ այդպիսի երեսյթներ շատ ենք տեսնում, բայց քչերն են Յովսէփի նման վեհանձնաբար վարւում և անյիշաչար լինում: Այսպէս պէտք է վարուենք մենք և ներողամիտ լինինք դէպի մեր թշնամիները և մեզ համար վատ ուզողները: Այսպէս է պահանջում Քրիստոնէութիւնը և այսպէս վարուելով, բացի օգտից, ոչինչ վնաս չենք կարող կրել և ունենալ: Մեր արած այդպիսի բարութեամբ ամօթահար կանենք նրանց և շատ անգամ ուղղութեան կրերենք:

Տ 17. ՄՈՎՍԵՍԻ ԾՆՈՒԻՆԴԸ, ԿՐԹՈՒԹԻՒՆԸ, ՓԱ- ԽՈՒՍՏԸ ԵՒ ԱՆԿԻՉ ՄՈՐԵՆԻՆ

I. Յովսէփի մահից յետոյ նրա ցեղը բազմացաւ Եղիպտոսում և յառաջացաւ մի ազգ, որ կոչում էր

Իսրայէլացի և Եթրայեցի: Նա բաժանւում էր տասներկու ցեղերի՝ Յակոբի տասներկու որդոց թուով: Եղիպտոսի փարաւոն կոչուած թագաւորները տեսնելով սակաւ ժամանակի ընթացքում իսրայէլացիների բազմանալը՝ կասկածեցին նրանց հաւատարմութեան վրայ և սկսեցին ծանր աշխատութիւններով նեղացնել նրանց, որ էլ չբազմանան: Իսկ փարաւոններից մէկը մինչև անգամ հրամայեց սպանել նրանց սորածին արու զաւակներին: Իսրայէլացիների վիճակը շատ գառն էր: Նրանք դարձան դէպի Աստուած և Խնդրեցին նրա ողորմութիւնը:

Աստուած ողորմած է: Նա լսեց իր ժողովրդի ձայնը—աղօթքը և տուեց ազատիչ—Մովսէս:

Մովսէսը ծնաւ Ղեիի ցեղից: Նրա մայրը սկզբում երեք ամիս ծածուկ պահեց, որ չապանեն Եղիպտացիները: Բայց երբ այլևս հնար չեղաւ ծածկել, դրեց կարածիթով ծեփած մի կողովում և ձգեց գետի ափի մօտ խաղաղ կանգնած ջրի մէջ, ուր փարաւոնի աղջիկը սովորութիւն ունէր զրօննուլ ու լողանալ:

Թագաւորի աղջիկը տեսաւ կողովը և հրամայեց հանել ջրից: Նա որդեգրեց երեխային և անուանեց նրան Մովսէս, որ նշանակում է ջրիցը հանած: Մովսէսը մեծացաւ և կրթուեց թագաւորական տան մէջ: Նա սովորեց Եղիպտոսի բոլոր գիտութիւններն ու իմաստութիւնը: Տէր եղաւ մեծ հարստութեան և յարգանք էր վայելում ամենից: Բայց նրան այս բախտաւորութիւնը չէր ուրախացնում: Նա գիտէր իր ծագումը, տեսնում էր իր ցեղակից ժողովրդի նեղութիւնները և ցանկանում էր օգնել նրան:

Մի անգամ Մովսէսը տեսաւ, որ մի Եղիպտացի

անողորմ կերպով ծեծում է մի իսրայէլացու։ Նա պաշտպանեց իսրայէլացուն և սպանեց Եգիպտացուն։ Այս բանը յայտնվեց փարաւոնին և Մովսէսը փախաւ Արարիա՝ Մադիամացոց Երկիրն ու ազատուեց։ Նա մի բարեպաշտ քուրմի տանը մնաց քառասուն տարի և արածացնում էր նրա խաշների հօտը։ Բայց դարձեալ նա մտածում էր իսրայէլացիների մասին, ցաւում էր նրանց դառն վիճակի վրայ և երբեմն յուսահատուած կարծում էր, թէ նեղութիւնը կոչնչացնէ բոլորովին այդ ժողովը ին։

Այս մտածմունքների մէջ մի անգամ Քորէք սարի վրայ խաշները արածացնելիս՝ տեսաւ մի մորենի, որ վառում էր, բայց չէր վնասում։ Նա մօտեցաւ և լսեց այստեղից ձայն։ «Ես եմ քո հայրերի Աստուածը... Ես տեսնում եմ իմ ժողովրդի նեղութիւնները Եգիպտոսում։ Նրանց ազադակը հասաւ ինձ... Ես կամենում եմ ազատել նրանց։ Գնա դու փարաւոնի մօտ և իմ ժողովուրդը զուրս ընը Եգիպտոսից»։ Աստուած Մովսէսին հրաշքներ անելու և պատժելու զօրութիւն—իրաւունք էլ տուեց,

Մովսէսը գնաց իր եղբայր Ահարոնի հետ Եգիպտոս, ներկայացաւ փարաւոնին և Աստուածու տուած նշաններով ու պատիժներով ստիպեց նրան կատարել Աստուածու հրամանը և թոյլ տալ իսրայէլացիներին դուրս գնալ Եգիպտոսից։

II. Յովսէփի մահից յետոյ իսրայէլացիներն քանի ցեղերի էին բաժանւում։ Եգիպտոսի փարաւոնները ի՞նչ կասշկածներ ունեցան իսրայէլացիների վրայ և ի՞նչ միջոցներ գործ դրին նրանց բազմանալու առաջն առնելու համար։ Աստուած ում պատրաստեց նրանց համար ազատարար,

ի՞նչ էր նրա անունը և ի՞նչպէս ազատուեց նա մահից։ Մովսէսը ի՞նչպիսի կրթութիւն ստացաւ, ուր է բնակում և ի՞նչ էր նրա փախչելու պատճառը։ Ուր գնաց մովսէս և ի՞նչով էր պարապում այստեղ։ Աստուած հրտեղ երևաց Մովսէսին, ի՞նչ պատուէր և զօրութիւն տուեց նրան Եգիպտոս ուղարկելիս։

III. Այս պատմութիւնից մենք շատ բան ենք սովորում։ 1) որ Յովսէփի մահից յետոյ իսրայէլացիներն Աստուածու խոստման համաձայն արագ շատանում են Եգիպտոսում և 430 տարուայ ընթացքում նրանց թիւը հասնում է վեց հարիւր հազարի։ Նրանք բազմանալով Եգիպտոսում վատանում են, այն է մոռանում են իրանց պապերից մնացած գեղեցիկ սովորութիւնները, թուլանում են հայրենի կրօնի մէջ և չեն կատարում Աստուածու պատուիրանները, ոմանք մինչեւ անգամ կուռք են պաշտում։ 2) Փարաւոնները սկզբում քաղցր աչքով են նայում Յակոբի սերնդի վրայ, որովհետև Յովսէփը լաւութիւն էր արել Եգիպտոսի ժողովրդին—սովոր ազատել էր, բայց յետոյ տեսնելով նրա բազմանալը, երկիւղ են կրում և նրան վտանգաւոր տարր ձանաշում։ Նրանք մտածում են, որ իսրայէլացիները մի առանձին ազգ կազմելով և ունենալով իրանց մայրենի լեզուն, կրօնը և սովորութիւնները—կարող են, եթէ ոչ առանձնապէս՝ գէթ միանալով նրանց դրացի թշնամիների հետ՝ վնասել. ուստի սկսում են անտանելի տանջանքներ, ծանր աշխատանքներ և նեղութիւններ տալ, որպէսզի տկարանան, հիւանդանան և մեռնին և մինչեւ անգամ տմարդաբար հրամայում են նորածին արու զաւակներին սպանել և այսպիսով նրանց բազմանալու առաջն առնել։ 3) Նեղութեան ժամանակն է առհասարակ մարդ իր սիրաները հասկանում և զզում։ Իսրայէլացիները լաց էին լինում, հառաջում և ասում, որ Աստուած նրանց մոռացել է, իսկ հասկացողները պնդում էին, թէ Աստուած է ուղարկում այս նեղութիւնները, որ զգուշանանք և պահենք այն, ի՞նչ որ նա պատուիրել է։ Այսպիսի դառն խոստովանութեան

հետ աղօթում և խնդրում էին Աստուծու ողորմութիւնն ու օգութիւնը: Աստուած անյիշաչար է և ողորմած, նա միշտ օգում է նրանց, որոնք դիմում են նրան հաւատով և յուսով: 4) Աստուած տալիս է իսրայէլացիներին ազատիչ—Մովսէսին, որի մայրը կաթի հետ ներշնչել էր նրա մէջ իր ցեղակիցների դառն վիճակը և նեղութիւնները Եգիպտոսում Փարաւոնների ձեռքից: Թէև Մովսէս ստացաւ Եգիպտական գիտութիւնն ու իմաստութիւնը, բայց նրանք չկարողացան փոխել նրան և նա գոհեց պալատական կեանք, հանգստութիւն, փառք, ծառաներ և պաշտպան հանդիսացաւ զրկուածին, նեղացածին, թշուափին, անօգնականին: Նա թողեց ամեն ինչ և օտարութեան դառն նեղութիւնները կրեց: Արդարև Մովսէսի լաւ կրթութիւնից էր, որ մեծամիտ և արհամարհող չէր իր աղքատ, նեղացած և անկիրթ հայրենակիցներին: Մովսէսի լաւ կրթութեանը աէտք է վերագրել և այն, որ նա հաստատ պահեց իր հաւատը և երջանկութեան մէջ չմոռացաւ իր թշուառ եղբայրներին: Եգիպտաւթեան մէջ չմոռացաւ իր աղքակիցները, քան թէ փառք, բարձր էին համարում ապրող, կեանք վաղող մարդու համար կան պալատում ապրող, կեանք վաղող մարդու համար պատիւը և մեծութիւնը: 5) Նա հալածւում է Եգիպտոսից, նրա սիրտը բարախում էր իր ցեղակիցների համար: Նա Յոթորի խանները արածելով միշտ մտաքերում էր նրանց կրած չարչարանքները և երբեմն յուսահատութեան մէջ ընկնելով, երբ կիւղ էր կրում, որ նրանք կարող են անհետանալ ոչնչանալ Եգիպտոսում: Թէև յայտնի է և այն, որ օտարութեան մէջ նեղութեան շնորհիւ թէ մարդիկ և թէ ազգեր իրանց սխալ ները խոստովանում են և աշխատում են ուղղել: Աստուած իրան սիրողներին դաստիարակում է նեղութեան ձեռքով բարութեան համար: 6) Երեսում է Աստուծու ողորմութիւնն ու սէրը դէպի իր ընտրեալ ժողովուրդը, որ յիշելով իւր ուխտը նրա նախահայրերի հետ, կամենում է ազատել այդ նեղութիւնից:

№ 18. ԶԱՏԻԿ: ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼՀ ԵՒ ԿԱՐ-
ՄԻՐ ԾՈՎՆ ԱՆՑՆԵԼՀ

I. Վերջին պատժից առաջ Աստուած պատրաստեց իսրայէլացիներին Եգիպտոսից դուրս գալու համար: Նա հրամայեց Մովսէսին յայտնել ժողովրդին, որ իւրաքանչիւր տուն մի գառը զոհէ, և նրա արիւնով սրսկէ իր տան դրան սեմերն ու ճակատը: Եւ ասաց, որ այդ գառը պէտք է խորովեն և ուտեն բաղրջ հացով ու եղեցով և պատրաստ լինին դուրս գալու համար: Բացի այդ՝ ընթրիքը պէտք է ուտեն կանգնած, ճանապարհի շորերով, կօշիկները հագին և գաւազանը ձեռքին, որովհետև սա Տիրոջ Զատիկը կամ Պատերն է: Մովսէսը նմանապէս յայտնեց, որ Աստուած կըպատժէ Եգիպտացիներին:

Իսրայէլացիները պատրաստուեցին, ինչպէս պատուիրել էր Մովսէսը և երբ ուտում էին զատկական գառը, կէս գիշերին յանկարծ աարածուեց սարսափելի լաց ու կոծ ամբողջ Եգիպտոսում: Սատակիչ հրեշտակն արդէն սպանել էր Եգիպտացոց բոլոր անդրանիկներին: Այն ինչ իսրայէլացիների տներում մահուան ոչ մի դէպի չէր պատահել: Փարաւոնը և Եգիպտացիները սարսափահար եղած այս պատժից, խընդրեցին իսրայէլացիներին շուտով հեռանալ:

Իսրայէլացիները, որ Եգիպտոս էին գնացել 75 հոգով և 430 տարուայ ընթացքում բազմացել՝ գարձել էին 600,000¹ առանց հաշուելու կանանցն ու երեխաներին, իսկոյն գուրս եկան Եգիպտոսից և ճանապարհ ընկան: Նրանք վերցրին Յովսէփի ուկորները: Աստուած ինքն էր առաջնորդում նրանց դէպի Աւե-

տեաց երկիրը՝ ցերեկը ամպեղէն, իսկ գիշերը հրեղէն սիւնով:

Եղիպտացիները թաղելով իրանց մեռածներին՝ ափսոսացին, որ թողին իսրայէլացիներին: Փարաւոնը զօրքով ընկաւ նրանց ետևից և հասաւ կարմիր ծովի ափին: Մովսէս Աստուծու հրամանով գաւագանը խրփեց ջրին, ծովը բաժանեց երկու մասի և իսրայէլացիներն անմնաս անցան միւս ափը: Եղիպտացիներն էլ սկսեցին հետևել, բայց Աստուծած պատժեց նրանց՝ խեղդելով ջրի մէջ:

Այսուհետև իսրայէլացիները շարունակեցին Արաբիայի անսապատճերով իրանց ճանապարհը դէպի Աւետեաց երկիրը: Նրանք շատ նեղութիւնների հանդիպեցին, բայց Աստուծած օգնում էր նրանց ամեն բանում: Նա երկնքից հաց—մանանայ տուեց և քարից ջուր բղխեցրեց:

Այդ ժամանակից սկսած իսրայէլացիներն ամեն տարի տանում են Եղիպտոսից դուրս գալու օրը՝ իրեն յիշատակ իրանց ազատութեան: Նրանք զոհում են գառը և ուտում են բաղարջ հաց: Այս տօնը կոչւում է Պասեր կամ Զատիկ, որ նշանակում է անցք կամ ազատութիւն և կատարուում է եօթն օր շարունակ:

II. Աստուծած ի՞նչ պատրաստութիւններ տեսան իսրայէլացիներն Եղիպտոսից դուրս գալուց առաջ: Ի՞նչ էր վերջին պատժի առաջ: Ի՞նչ պատրաստութիւններ տեսան իսրայէլացիներն Եղիպտոսից դուրս գալուց առաջ: Ի՞նչ էր վերջին պատիժը: Իսրայէլացիներն քանի տարի մնացին Եղիպտոսում: Նրանք քանի հոգով դուրս եկան այնտեղից: Ի՞նչ վերցրին իրանց հետ: Ի՞նչ բանն էր առաջնորդում նրանց: Ի՞նչպէս անցան իսրայէլացիները կարմիր ծովը և ի՞նչ պատահեց Փարաւոնին իր զօրքով: Ի՞նչ ճանապարհով սկսեցին գնալ իսրայէլացիները դէպի Աւետեաց երկիրը: Ի՞նչ նե-

դութիւններ կրեցին նրանք, ի՞նչպէս և ի՞նչ օգնութիւններ հասցրեց նրանց Աստուծած նրանց:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) Աստուծած յիշում է իր տուած խօսքը Յակոբին Եղիպտոս գնալու ժամանակ և կատարում է: Նա կրկին արժանացնում է իսրայէլացիներին իրանց նախնի երկրին, ուր մեղք և կաթ էր բղխում: Հայրենիրը քաղցր է: 2) Աստուծած ամեն արգելք վերացնում է այդ նպատակին համակալու համար: Նա հրաշքներով հասկացնում է Եղիպտացիներին, որ իր կամքն անդառնալի է և ամենքը պէտք է հնազանդուին նրան: Նա պատրաստում է իսրայէլացիներին ճանապարհորդութեան համար և Մոլիսին զեկավար է նշանակում: Նա ազատում է պատժից իր սիրելիներին և դնում է Մեսիայի ձեռքով ապագայ ազատութեան—Զատկի հիմքը՝ գառն, եղէզն և բաղարջ հաց պատրաստել տալով: 3) Նա կարմիր ծովից անվտանգ անց է կացնում: Նա քարից ջուր և երկնքից հաց (մանանայ) է տալիս: Նա ազատում է ամեն վտանգներից: Եւ այս բոլորի փոխարէն տեսնում ենք ապերախտ, խստապարանոց, անհամբեր և ամեն մի հասարակ բանի համար տրանջող ժողովուրդ: Նրանք մոռանում են, որ գերութիւնից ազատուում են և արժանանում իրանց երկրին, ուր կարող են ազատ ապրել՝ հեռու բոլոր այն տանձանքներից ու նեղութիւններից, որ կրում էին Եղիպտոսում: Իսկ մի այսպիսի գժուար գործի համար հարկաւ նեղութիւններ պէտք է կրէին, ուրեմն և պէտք է համբերութեամբ տանէին: Միւս կողմից նկատելի է, որ Աստուծած ողորմած և գթած է, Նա ներում է իր ժողովրդի կատարած սխալները և արած ապերախտութիւնները:

№ 19. ԱԻՆԱՅԻ ՕՐԵՆՍՏԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՆԸ

I. Իսրայէլացիներն եղիպտոսից դուրս գալով՝ մի ամիս ու կէս ժամանակամիջոցում հասան Սինա սաւրը։ Այստեղ նրանք թողին իրանց վրանները—բանակ ձգեցին։

Մովսէսն Աստուծու կողմից խօսեց ժողովրդի հետ, յիշեցրեց նրանց նրա արած բարիքներն և աւելացրեց. «Եթէ դուք լսէք Աստուծու ձայնը և պահեք նրա ուխտը, դուք կըլինէք նրա ընտրեալ և սիրելի ժողովուրդը»։ Ժողովուրդը խոստացաւ լսել և կատարել, ինչ որ Աստուած կըհրամայէ։

Յիսուսերորդ օրը սարսափելի որոտումներ եղան և կայծակներ փայլատակեցան։ Սինա սարը ծածկուեց թարձր մառախուղով։ Նա ծխում էր, բոցեր էր արձակում և շարժում։ Սրա հետ լուսում էին և փողերի ուժգին ձայներ։ Ժողովուրդը սարսափած և դողալով կանգնած էր սարի ստորոտում, որի գագաթին կատարում էր այդ։ Ապա ամեն ինչ հանդարտուեց և Աստուած խօսեց ու տուեց պատուիրաններ։

I. Ես եմ քո Տէր Աստուածը, ուրիշ աստուածներ չունենաս, բացի ինձանից։

II. Կուռք չըշինես ոչ մի բանի նման... Երկըրպագութիւն չտաս և չպաշտես նրան։

III. Քո Աստուծու անունը մնուի բանի վրայ չըլիշես։

IV. Յիշիր սուրբ պահել շաբաթ օրը. վեց օր գործիր, եօթներորդ օրը նուիրիր քո Տէր Աստուծուն։

V. Պատուիր քո հօրն ու մօրը, որ քեզ բարի լինի և երկար կեանք ունենաս երկրի վրայ։

VI. Մի սպանիր։

VII. Մի շնար։

VIII. Մի գողանար։

XI. Մի սուտ վկայիր քո ընկերոջ մասին։

X. Մի ցանկանար քո ընկերոջ տանը և ոչ այն բաների, ինչ որ նրան է պատկանում։

Աստուծու ձայնը գատարեց։ Ժողովուրդը վերադաւ իր վրանները, իսկ Մովսէսը բարձրացաւ սարը և քառասուն օր մնալով այնտեղ, ստացաւ այդ պատուիրանները՝ գրած երկու քարեղին տախտակների վրայ։ Նա ստացաւ և շատ օրէնքներ աստուածպաշտութեան և ծէսերի վերաբերեալ։ Մովսէսն աստուծու հրամանով շինեց թանկագին կտորներից մի առանձին վրան, որ կոչուեց վկայութեան խորան։ Այդ խորանը բաժանուած էր երեք մասի։ առաջին մասը կաչւում էր սրբութիւն սրբոց։ Երկրորդը՝ սրբութիւն։ Իսկ երրորդը գալիթ։ Մովսէսն Աստուծու հրամանով վկայութեան խորանի համար նշանակեց պաշտօնեաններ։ Ահարոնը դարձաւ քահանայապետ և նրա որդիքը քահանաններ. իսկ Նկի ցեղը կարգւեց խորանի սպասաւորութեան պաշտօնեաններ։ Նա որոշեց և նրանց համար հասոյթներ (տասանորդ)։

II. Ո՞ւր բանակ ձգեցին իսրայէլացիները։ Մովսէս ինչ խօսեց Աստուծու կողմից։ Ի՞նչ պատահեց Սինա սարի վրայ։ Աստուած ի՞նչ օրէնքներ տուեց և ի՞նչ բանի վրայ էին գըրուած։ Մովսէսն էլի ի՞նչ օրէնքներ ստացաւ։ Ի՞նչից էր շինուած վկայութեան խորանը, քանի մասի էր բաժանւած։ Ո՞ր ցեղը նշանակուեց վկայութեան խորանի ծառայութեան համար և ի՞նչ հասոյթներ որոշեց նրանց։

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) Աստուած Խորայէլացիներին զբաւոր օրէնքներ է տալի, որովհետեւ նրանք չգիտէին և չէին հասկանում, թէ ի՞նչպէս դատեն, ի՞նչը իրաւացի է և ի՞նչն անիրաւ: Ի՞նչ բան իրաւունք ունէին անելու և ինչ՝ ոչ: Եւ Աստուած այդ անում է, որպէսզի ամեն մէկը իր կամքի համաձայն չգործէ, ուրիշի իրաւունքին չգիտչի, մասս չտայ: Որովհետև նրանց մէջ արդէն նկատում էին վէճ, կոփ, խարեբայութիւն, յափշտակութիւն, սպանութիւն, որովհետև նրանք Աստուծուն թողած՝ կուռքերին էին երկրպագութիւն տալի, որովհետև նրա անունը և նրա անուան նույիրուած տօնը չէին կատարում իրանց նախնեաց պէս և ծնողներին հարկաւոր յարգանքներ չէին տալի: 2) Մենք գիտենք և այն, ուր ամենքն այն են անում, ինչ որ Աստուծու կամքն է, այնտեղ կարդ, կանոն և խաղաղութիւն է թագաւորում: Այնտեղ լինում է բարեկարգ ժողովուրդ, այնտեղ մարդիկ սիրով և եղբայրաբար են ապրում: 3) Աստուած իր պատուէրները տալուց առաջ, պատուիրում է պատրաստուիլ, մաքրուիլ, որովհետև նա պէտք է խօսէ նրանց հետ. ուրեմն պէտք է ակնածիլ, այդ օրը սուրբ օր է. հետեապէս և մարդ պէտք է ներքուստ և արտաքուստ մաքուր լինի՝ Աստուծու պատուիրանները լսելու համար: 4) Մենք տեսնում ենք, որ ժողովուրդը ուրախանում է և խոստանում Աստուծու պատուիրանները կատարել: Սրանով դաշն է կապւում Աստուծու և մարդոց մէջ: Աստուած խոստանում է սիրել նրանց, նրանք էլ խոստանում են հնազանդ լինել: Մի կողմից սէր, միւս կողմից հնազանդութիւն: Ահա դաշնէքի պայմանները: Եգիպտոսից գուրս գալը Աստուծոյ սիրոյ արդիւնքն է զէպի մարդիկ: 5) Մենք տեսնում ենք, որ այդ պատուիրանները գրւում են քարեայ տախտակների վրայ, որ շուտով չփչան, այլ երկար մնան և խորայէլացիները չմոռանան ապագայում: Բայց աւելի լաւ կլինէր, եթէ Խորայէլացիները գրէին իրանց սրտի մարմնեղէն տախտակների վրայ և միշտ ականջ դնէին: 6) Մենք հաւատում ենք, որ Աստուծու պատուիրանները կատարող մարդիկ լինում են առաքինի, բա-

րի և երկարակեաց: Նըանց խիղճը հանդարտ և հանգիստ է լինում՝ նեռու հոգեկան և նիւթական զրկանքներից: Այդ պատուիրանները կատարելով միայն՝ մարդ զտոնում է Աստուծու պատուիկեր և նմանութիւն: 7) Մենք գիտենք, որ Աստուծուն սիրելը, ծառայելը լինում է հոգով և արտաքին նշաններով: Մովսէսը դրս համար շինում է վկայութեան խորան, ուր կատարւում է Աստուածպաշտութիւնը և որի ժամանակ մարդիկ ծառայում են և Աստուծու խօսքը լսում ու տարածում:

Հ 20 ԽՍՐԱՅԷԼԱՅԻՆԵՐԸ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԱԻԵՏԵԱՅ ԵՐԿԻՐԸ

I. Խորայէլացիներն օրէնքներ ստանալուց յետոյ՝ շարունակեցին իրանց ճանապարհը դէպի քանանացոց երկիրը: Նրանք քառասուն տարի թափառեցին Արաբիայի անապատներում: Եւ այս երկար ճանապարհորդութիւնը Աստուած նշանակեց խորայէլացիներին իբրև պատիժ՝ իրանց խռովութեան, տրտունջների և թերահաւատութեան համար: Նրանք յաճախ և չնչին բաների համար վշտացնում էին Աստուծուն և նրա ծառայ Մովսէսին: Մի անգամ սկսեցին արտնջալ Մովսէսի վրայ, որ միս չունին, իսկ Մանանայն էլ զըդուացըրել է: Աստուած իբրև պատիժ ուղարկեց օձեր, որոնք թունաւորում էին տրտնջողներին և մեոցնում: Այս պատիժը նրանց կրկին լսելքի բերեց և սկսեցին զղջալ իրանց արածների վրայ և խնդրել Աստուծու ողորմութիւնն ու օգնութիւնը:

Մովսէսն Աստուծու հրամանով կախեց մի բարձր սիւնի վրայ պղնձէ օձ և ասաց. «Ով որ հաւատով կը նայի նրան՝ կրփրկուի»: Այդպէս էլ եղաւ:

Մովսէսն խորայէլացիներին տարաւ մինչև Քա-

Նանացոց երկրի ուսհմանները և զգալով իւր մահը՝
սկսեց պատրաստուել մեռնելու համար: Նա Աստծու
հրամանով Յեսու Նաւեային իրան յաջորդ նշանակեց,
իսկ իսրայէլացիներին յիշեցրեց Աստուծու օրէնքնե-
րը, խոստումը և ցոյց տուած բարիքներն ու ասաց.
«Եթէ այդ օրէնքները կատարէք, Աստուած ձեզի ա-
ւելի մեծ բարիքների կարժանացնէ, իսկ եթէ չպա-
հէք, շատ թշուառութիւնների կըհանդիպէք»:

Ապա բարձրացաւ Նաբաւ սարը, հեռուից տե-
սաւ Աւետեաց երկիրը՝ և մեռաւ: Նրա գերեզմանը
մնաց անյայտ:

Մովսէսի մահից յետոյ՝ Յեսու Նաւեան իսրայէ-
լացիներին տարաւ Աւետեաց երկիրը: Աստուած օգնում
էր միշտ: Նա նրանց հրաշքով անցկացրեց Յորդանան
գետը և պատերազմերի ժամանակ յաջողութիւններ
տուեց: Այնպէս որ վեց տարուայ ընթացքում նրանք
տիրեցին Քանանացոց ամբողջ երկրին և նրան բա-
ժանեցին 12 մասերի. ապա վիճակ ձգելով՝ ամեն
մինը ստացաւ իր մասը:

Յեսու Նաւեայից միչև Սաւուղ թագաւորը—
450 տարի իսրայէլացիներին կառավարում էին դա-
տաւորները—սրանց թիւը 15 հատ էր. վերջինն էր
Սամուէլը:

II. Իսրայէլացիները պատուիրաններ ստանալով՝ դէպի
ուր գնացին: Քանի տարիթ ափառեցին անսապատում և ի՞նչ էր
պատճառը: Աստուած ի՞նչ պատիժներ տուեց և ի՞նչով էին
պատում այդ պատժից: Մովսէսը մեռնելուց առաջ ի՞նչ
իրատ տուեց իսրայէլացիներին: Ո՞վ յաջորդեց մովսէսին:
Յեսու Նաւեան քանի տարուայ ընթացքում նուաճեց Աւե-
տեաց երկիրը և քանի մասի բաժանեց: Յեսու—Նաւեայից

յետոյ ովկեր էին կառավարում իսրայէլացիներին: Որքան
տարի և քանի դատաւորներ եղան: Ո՞վ էր վերջին դա-
տաւորը:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ
իսրայէլացիներն երկուու և թւալամորթ մարդոց դրդմամք
իրանց տուած խոստումը զրժում: Նրանք տրանջում են Մով-
սէսի վրայ և զանազան անմիտ պատճառներ առաջ բերելով,
կամենում են կէս ճանապարհից յետ դառնալ Եղիպտոս և այդ
սկսած գործը խանգարել: Նրանք պատճառաբանում են, թէ
Քանանում մարդիկ խոշոր են, մենք նրանց չենք կա-
րող յազթել և սրանով նրանք Աստուծու զօրութիւնն ու-
րանում են: Այս պատճառով յառաջ են գալիս ներքին խոռ-
վութիւններ, Աստուծու բարկութիւնը ու պատիժը և ան-
հնազանդները չեն արժանանում Աւետեաց երկրին: Նրանք
մեռնում են անսպատում հետզհետէ 40 տարուայ ընթաց-
քում: Իսրայէլացիների արարքը զզուելի է և նրանց ցան-
կութիւնը ողորմելի. 2) Մովսէսը մեռնում է իր սկսած գոր-
ծը չփերջացրած, բայց տեսնում է, որ հետզհետէ ժողովուր-
դը փոխում է, ծերերը մեռնում են և նոր սերունդը աճում,
ուղղում է ու լաւանում:

Այս բանը նրան շատ է միխթարում և ուրախացնում:
Նա զգալով իր մօտակայ մահը, երբէք չի վախենում մահից,
որովհետեւ նա գնում է Աստուծու մօտ, որին միշտ սիրել է
և լսել: Բայց նրա սրտի ցաւը, նրա մտածմունքն իր սկսած
գործի յաջող վերջաւորութիւնն է: Նա մտածում է, թէ ար-
դիօք իսրայէլացիները հաստատ կթան իրանց խօսքին և
չեն հեռանալ Աստուծուց: Նա աղօթում է նրանց համար
մեռնելուց առաջ, որ Աստուած պաշտպանէ նրանց, առաջ-
նորդէ և հմուտ ղեկավար տայ իր սկսած գործը զլուխ հա-
նելու: 3) Մենք տեսնում ենք, որ մովսէսի սէրը դէպի իր
ժողովուրդը անընդհատ, անփոփոխ և մշտական է: Այսպիսի
սիրոյ անունը հաւատարմութիւնն է: Նա այսպիսի սիրով
սիրել է իր ժողովը գիրին, որի համար թողեց թագաւորական
պալատը, պաշտօնը, հանգիստ կեանքը և իր կեանքը մատ-

նեց նեղութիւններին, հալածանքներին, և ժառանդեց ապերախտութիւններ, տրտունջ և մինչև անգամ սպառնալիք սպանման են: Բայց այս բաները երբէք չզարթեցրին նրա սրտի մէջ գրգիռ, բարկութիւն, ատելութիւն և արհամարհանք դէպի ժողովուրդը, այլ լնդիակառակը նրա ոէրը աւելի աճում է, որքան ժողովուրդը նրան վշտացնում է և նեղացնում: 40 տարի շարունակ նեղութիւններ և հոգսեր կրելուց յետոյ՝ սիրով բաժանում է նրանից: Այս ժողովը գիտի ճշմարիտ բարեկամը, ահա հաւատարիմ սէր, որի համար արժանացաւ մեծ յարգանքի և պատուի իր ժողովը կողմից, իսկ մեզ համար մարգարէի անուն ժառանգելուց յետոյ՝ մարդասիրութեան գեղեցիկ օրինակ էլ տուեց: Մովսէսի սէրը դէպի Աստուած նոյնպէս օրինակելի է. նա մինչև մահը սիրեց և հաւատարիմ մնաց նրան: 4) Աստուած Մովսէսից յետոյ տալիս է Իսրայէլացիներին հմուտ առաջնորդ և զօրավար, որը Մովսէսի ճանապարհով գնաց և Իսրայէլացիներին տարաւ Աւետեաց երկիրը: Նա անշահասէր և իմաստուն կերպով բաժանեց երկիրը և յանձնեց ամեն մի ցեղի վիճակով իր մասը ժառանգելու, մշակելու և օգտուելու: 5) Իսրայէլացիները դատաւորների ժամանակ փոխանակ ճշտութեամբ կատարելու Աստուծու օրէնքները և իրար հետ հաշտ և միաբան ապրելու, որ ուժեղ լինեն թշրնամիների դէմ, ինչպէս Մովսէսի և Յետու—Նաւեայի ժամանակներն էին, ընդհակառակը սկսում են երկպառակութիւններով և կոիւներով պարապել: Իւրաքանչիւր ցեղ փոխանակ ընդհանուր շահերի վրայ մտածելու, հոգալու, իր անձնական, տոհմային օգուտների վրայ է մտածում: Նրանք յարաբերութիւններ և բարեկամական կապակցութիւններ են հաստատում կուապաշտ ազգերի հետ և մինչև անգամ կոքեր պաշտում, որի համար և Աստուած յաճախ պատժում է: Իսկ երբ նեղութեան մէջ են ընկնում, նրանք դառնում են սրտանց դէպի Աստուած և նրա պատուիրանները կատարում: Աստուած էլ նրանց օգնութիւն ու պաշտպանութիւն էր ցոյց տալիս և ազատում թշնամիներից և նեղութիւններից գատաւորներով:

Վ 21 ՍԱՀՈՒԿ ԹԱԳԱԼՈՐԸ

1. Երբ Սամուէլ մարգարէն և դատաւորը ծերացաւ, նրա որդիքն սկսեցին կառավարել Իսրայէլի երկիրը: Նրանք կաշառներ էին ստանում և անարդարութեամբ դատում: Այս պատճառով զժոհութիւնը զօրացաւ և իսրայէլացիները կամեցան թագաւոր ունենալ, ինչպէս իրանց հարեան ազգերը: Նրանք ասացին Սամուէլին: «Կարգիր մեզ վրայ թագաւոր, թողնա կառավարէ և դատէ մեզ արդարութեամբ և պաշտպանէ մեզ մեր թշնամիներից»:

Սամուէլն աղօթեց և յայտնեց Աստուծուն ժողովրդի ցանկութիւնը: Աստուած ասաց «Կարգիր նըրանց վրայ թագաւոր»: Սամուէլն Աստուծու կամքով ընտրեց Բենեամինի ցեղից Կիսի որդի Սաւուղին և թագաւոր օծեց:

Սաւուղը բարեկալաշտ էր իր թագաւորութեան առաջին տարիներում: Նա յաջողակ պատերազմներ ունեցաւ և զրացի ազգերը սկսեցին վախենալ նրանից: Այս յաջողութիւնն ու փառքը մոլորեցրին Սաւուղին, որից յետոյ սկսեց արհամարհել Աստուծու պատուիրանները և շարժել նրաւ բարկութիւնը իր դէմ:

Փղտացիները պատերազմ յայտնեցին իսրայէլացիներին: Աստուած արգելեց Սաւուղին պատերազմ ոկսել մինչև Սամուէլի՝ զոհ մատուցտնելը ըստ սովորութեան՝ պատերազմից առաջ: Սաւուղը չսպասեց մարդարէի գալուն և իր ձեռքով զոհեց: Սամուէլ եկաւ և ասաց. «Դու վատ վարուեցար, որ չպահեցիր Աստուծու պատուէրը: Աստուած յաւիտեան քեզ կըթողնէր Իսրայէլի թագաւորութիւնը, բայց այժմ կըգտնէ մի ուրիշին և նրան կըկարգէ ժողովրդի իշխանք:

Սաւուղը՝ չնայելով Աստուծու սպառնալիքին, երկրորդ անգամ էլ չկատարեց Նրա կամքը: Ասմուելն իմացաւ այս և շատ տրամեց: Նա հետեւալ օրն եկաւ Սաւուղի մօտ և ասաց. «Միտքդ պահիր, ճնազանդութիւնը զոհից աւելի է»: Աղա աւելացրեց «Աստուած կը լիէ քեզանից թագաւորութիւնը և կրտայ նրան, ով քեզանից լաւ է. որովհետեւ դու չընդունեցիր Աստուծու խօսքը. Աստուած էլ քեզ չէ ընդունում» Այս օրից սկսած՝ մարգարէն այլևս չտեսաւ Սաւուղին: Բայց նա ցաւում էր և աղօթում նրա համար:

II. Երբ Ասմուէլը ծերացաւ, մվքեր կառավարեցին իսրայէլացիներին և ինչպէս: Ո՞վ էր իսրայէլացիների առաջին թագաւորը: Ի՞նչ էր պատճառը, որ իսրայէլացիները կամեցան թագաւոր ունենալու: Սկզբում Սաւուղն ինչպէս թագաւոր էր: Ի՞նչ բան շեղեց Սաւուղին ուղիղ ճանապարհից: Ի՞նչ անհնազանդութիւն ցոյց տուեց Սաւուղը դէպի Աստուած և ինչ պատիժ ստացաւ:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ բարեպաշտ Սամուէլի որդիքն իրանց հօր նման առաքինի և արդարադատ չեն լինում: Նրանք իրանց հօր ծերութեան ժամանակ կառավարում են երկիրը վատ և այն սէրը, յարգանքն ու վստահութիւնը չեն վայելում: Նրանք կաշառակերութեամբ են պարապում, որ գատաւորի ամենամեծ պակասութիւնն է և արդարութիւնը ստանատակ տալի: Ահա այսպէս կառավարելուց ժողովրդի մէջ ծագում է դժոնութիւն, անբաւականութիւն և ընկնում խառնակութիւն: Վերանում է սէրը, միութիւնը արդարութիւնն ու ճշմարտութիւնը, որոնց պատճառով և պատերազմերի մէջ միշտ անյաջողութեան են հանդիպում: Նրանք կարծում են թագաւոր ունենալով՝ իրանք էլ կյալթին, առանց իրանց սրտերը մաքրելու և Աստուծու օգնութեանը դիմելու: Նրանք ինչ որ թագաւորից սպասում էին, այդ բոլորը կստանային,

եթէ երկնաւոր թագաւորի պատուիրանները պահէին: Նրանք թագաւոր են կամենում ունենալ. Սամուէլը Աստուծու հաճութեամբ թագաւոր է կարգում Սաւուղին նրանց վրայ: 2) Սաւուղը սկսում է իր թագաւորութիւնը գեղեցիկ կերպով, բայց սխալ շարունակում: Սկզբում նա մի քանի յաջողութիւններ է ունենում պատերազմերի մէջ, որով և մեծ հեղինակութիւն, պատիւ և փառք է ձեռք բերում ժողովրդի մէջ, բայց այդ յաջողութիւննը մոլորութեան մէջ է ձգում երիտասարդ թագաւորին: Նա մեծամտում է, մոռանում է իրան և Աստուծուն անհնազանդ է գտնում: Նա այդ յաջողութիւնները մհծամտութեամբ վերագրում է իր անձնական քաջութեան և ոչ Աստուծու զօրութեան ու օգնութեան: Նա Աստուծու պատուիրաններն արհամարհում է, որի համար զրկում է Աստուծու շնորհներից և շարժում է նրա բարկութիւնը իր դէմ: Նա արտաքին կեղծաւորութեամբ և զոհաբերութեամբ կամենում է Աստուծուն հաճելի լինել, բայց ներքինը—սիրտը մագուր և վայելուչ չէ ու նենում: Նա չէ հաւատում և չէ լսում Աստուծուն և դառնում է ժողովրդի համար վատ օրինակ: Եւ այսպէս իր անկարգ գնացքով, որ կռապաշտութեան սկիզբը կարելի է համարել, պատժում է և զրկում գահից: 3) Տեսնում ենք Սամուէլի զովելի և սրտացաւ վարմունքը որ շարունակ յիշեցնում է թագաւորի սիրաները և զգուշացնում է նրան, բայց նա չէ լսում: Նա ցաւում է Սաւուղի վրայ, ինչպէս հայրն իր յանցաւոր որդու վրայ և միշտ աղօթում է նրա համար: 4) Սաւուղի օրինակը գեղեցիկ դաս է մեղ համար: Մարդ որբան հարստութեան, մեծութեան, փառքի և զատուի համնի, այնքան պէտք է իր անձը խոնարհութեան մէջ պահէ: Նա Տիրոջ առաջ աւելի շնորհ կգտնէ: Մհծամիտ մարդը սիրելի չէ Աստուծուն և երբէք յաջողութիւն չի գտնիլ իր գործերի մէջ:

№ 22 ԴԱԿԻԹ ԹԱԳԱԿԻՈՒՄ

I. Երբ Աստուծու հոգին հեռացաւ Սաւուղից, Սամուէլն Աստուծու հրամանով գնաց Բեթղեհէմ քաղա-

քը և այնտեղ հանդիսաւոր կերպով զոհ բերեց Աստուծուն։ Ապա մտաւ. Հեսսէի տունը և նրա փոքր որդուն — Դաւթին հօր և եղբայրների ներկայութեամբ օծեց իւղով։ Այդ օրից Աստուծու հոգին իջաւ Դաւթի վրայ։ Աստուած յայտնեց Սամուէլին, որ Դաւթը կըլինի Սաւուղի յաջորդը։

Այս միջոցին մի դէպք պատահեց, որ Դաւթին առաջին մարդը դարձրեց ամբողջ թագաւորութեան մէջ և առիթ տուեց նրան գովարանելու։

Մի անգամ իսրայէլացիները պատերազմ ունէին փղտացիների հետ։ Թշնամու բանակից դուրս եկաւ սաստիկ զրահաւորուած մի հսկայ՝ Գողիութ անունով և դուրս կանչեց իսրայէլացիներից մէկին իր հետ մենամարտելու համար։ Նա ծիծաղում էր ու նախատում իսրայէլի Աստուծու անունը։ Ո՛չ ոք չհամարձակուեց դուրս գալ նրա դէմ։ Այն ժամանակ Դաւթի, որ գանւուում էր զօրքի բանակում, յոյսն Աստուծու վրայ դրած՝ դուրս գնաց թշնամու դէմ և պարսի քարի մի յաջողակ հարուածով ճակատին՝ սպանեց նրան և սրով կտրեց նրա զլուխը։ Այս յաղթութեան համար Դաւթը դարձաւ զօրքի հազարապետ և եղաւ Սաւուղի փեսայ։

Սաւուղը սկսեց շուտով նախանձել Դաւթի փառքին և ատել նրան։ Այսինչ Սաւուղի որդի Յովսաթանը սրտանց սիրեց Դաւթին։ Նա Դաւթի մտերիմ բարեկամն էր։ Դաւթին ոչինչ չարիք չէր ցանկանում Սաւուղին և պաշտպանում ու յարդում էր նրան։ Ինչպէս Աստուծու օծեալի։ Նա մեծահոգութեամբ էր վարւում նրա հետ։

Երբ Սաւուղը և նրա մեծ որդիքը սպանուեցան

փղտացիների դէմ մզած պատերազմում, ժողովրդի ծերերը ճանաչեցին Դաւթին թագաւոր և հանդիսաւոր կերպով օծեցին նրան։

Դաւթիթը հպատակեցրեց հարեան ազգերին, ընդարձակեց իր թագաւորութիւնը և դարձրեց զօրեղ։ Նա մեծ հոգ տարաւ իր հպատակների բարձրութեան մասին։ Շրջապատեց իրեն լաւ և ազնիւ մարդկերանցով։ Նա Եբուսաղէմը իր թագաւորութեան մայրաքաղաք դարձրեց և աւելի ևս ամրացրեց։ Շինեց հոյակապ պալատ և Մովսիսի վկայութեան խորանի փոխարէն շինեց նոր, գեղեցիկ և թանկագին խորան, ուր հանդիսաւոր կերպով տեղափոխեց ովհտի տապանակը։ Դաւթիթը իր այս փառաւորութեան մէջ պատահեց մի մեծ նուղութեան։ Նրա որդի Արիսողոմն ապստամբուեց և կամեցաւ հօրից խլել գահը, բայց պատժուեց՝ սպանուելով պատերազմի դաշտում։

II. Աստուած ի՞նչ ասաց Սամուէլին Սաւուղի յաջորդի մասին։ Սամուէլն ուր գնաց և ի՞նչպէս ընտրեց Դաւթին։ Դաւթիթն ի՞նչ բաջութիւններ արեց։ Սաւուղի նախանձն ինչո՞ւ շարժուեց և ի՞նչ էր կամենում անել։ Ո՞վ էր դաւթի մտերիմ բարեկամը։ Դաւթիթն ի՞նչ մեծահոգութիւն բանեցրեց։ Դաւթիթը ո՞ր քաղաքը մայրաքաղաք դարձրեց և ի՞նչ բան տեղափոխեց այնտեղ։ Դաւթիթն ի՞նչպէս էր կառավարում երկիրը։ Ինչ բան պատահեց Դաւթի ընտանիքում, որ վշտացրեց նրան։

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ Աստուծու հոգին—շնորհը Սաւուղից վերանում է և ուրախութիւն, մտքի հանգստութիւն ու խղճի անդորրութիւն հեռանում են նրանից. իսկ դրանց փոխարէն բուն են զնում նրա մէջ չար ոգի, երկիւղ, տկարութիւն և հոգեկան անհանգստութիւն, նա սարսափում է, երբ յիշում է, որ Աս-

տուծուն բարկացրել է իր վարմունքով, ուստի և նրա ողորմութիւնը, շնորհքը և օգնութիւնն այլևս չէ կարող վայելել: 2) Տեսնում ենք, որ մի քնար ածող հովիւ, Դաւիթ անունով, որ խոնարհ, իմաստուն և քաջ երիտասարդ էր, ընարւում է Սաւուղի տեղ թագաւոր Աստուծու հրամանով, որովհետեւ Աստուած սրտին է նայում և այնպէս ընտրութիւն անում և ոչ թէ հասակին, գեղեցկութեան, հարստութեան, շորերին և պաշտօնին: 3) Մենք տեսնում ենք Դաւիթի մէջ հայրենասիրական բուռն զգացմունք, նա միայն վշտացած՝ զգում էր այն անպատճութիւնը, նախատինքը, որ իւր հայրենակիցները կրում էին: Եւ վրդովւում ու զայրանում էր, որ մի հեթանոս հսկայ Գողիաթ—նախատում էր ճշմարիտ Աստուծու ժողովրդին և ծաղրում: Դաւիթը չէ կարողանում տանել այդ և Աստուծու օգնութեամբ սպանում է նրան: Աստուծու զօրութիւնը տկարների յաջողութեամբ աւելի է երեսում: Դաւիթի պատուին գովիստները անհանդատացնում են Սաւուղին: Ծաղրում նրա սրտի մէջ նախանձ, ընկնում է կասկածանքների մէջ, սկսում է ատել և մինչև անգամ մարդասպանութեան փորձել անել: 5) Սաւուղի որդի Յովիաթանը որ մի խելօք բարեպաշտ անձն էր և ազնիւ սիրտ ունէր, սրտանց սիրում է Դաւիթին, տեսնելով նրա մէջ արժանաւորութիւն, քաջութիւն, բարեպաշտութիւն և հաւատարմութիւն դէպի ժողովուրդը և թագաւորը՝ թիւն և հաւատարմութիւն նրա ծագման վրայ: 7) Մենք տեսառանց ուշը դարձնելու նրա ծագման վրայ: Սանում ենք և հիւանում Դաւիթի մեծահոգութեան վրայ: Սաւուղի նրան ատում է, հալածում է տանից, տեղից և կնոջից հեռացնում: Քաղցած, ծարաւ, նեղութեան մէջ անաշխից հեռացնում թափառել է տալի և մեծ զօրքով յետելից ընպատներում է տալի և մեծ զօրքով յետելից ընպատներում է սպանել նրան, սակայն Դաւիթը մի այսպիսի թշնամու հետ մեծահոգութեամբ է վարւում: Երկու անգամ Սաւուղը քնած ժամանակ ընկնում է Դաւիթի ձեռքը և վերջինս ձեռք է առնում նրա գեղարդը, որով կարող էր սպանել վրէժինդիր լինել և իր կրած բոլոր նեղութիւններին միանգամից վերջ տալ: Բացի այդ, հարստութիւն, հանգստութիւն, փառք, գահ և պատիւ մի զարկով կարող

էր ձեռք բնրել բայց Դաւիթը այդ չէ անում: Սաւուղը լաց է լինում Դաւիթի մեծահոգութեան առաջ: 7) Դաւիթը թագաւոր դառնալուց յետոյ՝ յաղթում իր բոլոր թշնամիներին և երկիրը խաղաղացնում: Երկրի մէջ խաղաղութիւն և արդարութիւն տիրելով, ժողովուրդը հարստանում է, բաղդաւոր է գառնում և Աստուծու տուած բարիքները վայելում: Դաւիթի նշանակած արդարասէր, ճշմարտասէր, ազնիւ, շիտակ և բարի խորհրդականների շնորհիւ վերականգնում է երկրի մէջ արդարադատութիւնը և պակասում են վէճերն ու անբաւականութիւնները: 8) Տեսնում ենք, որ Դաւիթի մեծ որդին՝ Աքիսողոմը Ապերախտ և անհնազանդ է գտընում իւր ծնողի առաջ: Նա փառասիրութեան համար կամենում է հօրը սպանել և նրա տեղ թագաւոր գառնալ, բայց չարաշար պատժվում է՝ կախուելով անզգուշաբար ծառից՝ փախչելու ժամանակ: Նրա տգեղ վարմունքը մի տեսակ զգուշութիւն և խրատ պետք է լինի ամեն մի որդու համար: Նկատուած է, որ հնազանդութեան յանցանքը ըսկուում է փոքրով և վերջանում է զարհուրելի կերպով: յանցանքը պէտք է երեսին ասել, բայց յանցաւորին պէտք է սիրել, խրատել և ոչ ատել: Մենք ամենքս յանցաւոր ենք Աստուծու առաջ, բայց նա դարձեալ մեղ սիրում է:

№ 23. ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՀԻՈՐԸ

I. Դաւիթը դեռ իր կենդանութեան ժամանակ հանդիսաւոր կերպով թագաւոր օծեց իր որդի Սողոմոնին: Սողոմոնը աղօթեց և խնդրեց Աստուծուց խելացի միտք եւ իմաստութիւն, որ կարողանայ լաւ կառավարել երկիրը և արդարութեամբ դատել ժողովը դին և ճանաշել բարին ու չարը: Աստուած տուեց նրան խելացի միտք և իմաստութիւն, այլև փառք և հարստութիւն: Սողոմոնն իր իմաստութիւնը ցոյց տուեց շուտով, երբ գահ բարձրացաւ,

Նրա մօտ դատաստանի եկան երկու կին, մի կենդանի երեխայով։ Նրանցից մինն ասում էր. «Այս կինը գիշերը քնեց և անսպասելի կերպով խեղդեց իր երեխային, յետոյ իր մեռած երեխային դրեց ինձ մօտ, իսկ իմ կենդանի երեխային վերցրեց իր համար։ Միւս կինը, որ բռնած ունէր կենդանի երեխային, ասաց. «Ո՞չ, այս կենդանին իմ որդին է, իսկ մեռածը նրանն է»։ Սողոմոնը հրամայեց կիսել կենդանի երեխային և տալ մի կէսը մէկին, միւս կէսը՝ միւսին։ Այս հրամանից յետոյ կանանցից մէկը բարձրաձայն գոշեց և ասաց. «Ո՞չ, կենդանի երեխային տուէք նրան»։ Այն ինչ միւսն ասում էր. «Կիսէք, ոչ ինձ լինի և ոչ նրան»։ Սողոմոնն իմացաւ, որ իսկական մայրը նա է, որի սիրաը ցաւում է և հրամայեց տալ երեխան նրան։

Երուսաղէմում Մօրիա սարի վրայ Սողոմոնը շինեց մի մեծ և հիանալի տաճար՝ վկայութեան խորանի նման։ Այս տաճարի մէջ տեղափոխեց ուխտի տապանակը Դաւթի շինած խորանից և դրեց տաճարի Սըրբութիւն Սըրբոց կոչուած մասում։ Երբ քահանաները ներս բերին տաճար՝ ուխտի տապանակը, Աստուծու փառքը իջաւ և ամպի նման լցրեց նրան, իսկ սլատը աստուծած զոհն էլ ընդունուեց։

Ժողովուրդն երկար ժամանակ բաղդաւոր, ուրախ և հանգիստ ապրում էր Սողոմոնի իմաստուն կառավարութեամբ։

Սողոմոնի իմաստութեան և հարստութեան համբաւը տարածուեց բոլոր շրջակայ երկրներում։ Աշխարհի բոլոր կողմերից գալիս էին լսելու նրա իմաստութիւնը։

Այս ծայրայեղ և երկարատև երջանկութիւնը վշացրին Սողոմոնի մաքուր բնաւորութիւնը։ Նա ընկաւ փառամոլութեան և կորստարեր զեղիսութեան մէջ, վատնեց իր բոլոր հարստութիւնը և ծանր հարկերով սկսեց ճնշել ժողովրդին։ Այսուհետև նա արհամարհեց Աստուծու օրէնքները, ամուսնացաւ կուպաշտ կանանց հետ, շինեց նրանց համար կուպաւններ և ինքն էլ հետպհետէ ընկաւ կուպաշտութեան մէջ ու սկսեց ծառայել կուռքերին։

Սողոմոնը կորցրեց իր երջանկութիւնը։ Հարևան ազգերը սկսեցին յարձակուել նրա վրայ։ Տէրութեան մէջ օրէցօր աւելացան ներքին անբաւականութիւններն ու խոռվութիւնները։ Հարկերի ծանրութեան տակ ժողովուրդը բոլոքում էր և ապստամբուում նրա դէմ։

Վերջապէս այս ձախորդութիւնները և ներքին խոռվութիւնները ուշքի բերին Սողոմոնին։ Նա խոստովանեց իր սխալը և դառն փորձերից յետոյ բացականչեց. «Փառքի և մեծութեան մէջ չէ մարդու երջանկութիւնը, այլ խղճմանքի մաքրութեան»։

II. Ո՞վ թագաւորեց Դաւթից յետոյ։ Սողոմոնն ի՞նչ ինքը Սատուծուց և Աստուծու ի՞նչ տուեց նրան։ Ի՞նչպիսի թագաւոր էր Սողոմոնը և ի՞նչից է երեսում նրա իմաստուն լինելը։ Սողոմոնն ո՞ր սարի վրայ շինեց տաճարը և ո՞ւր տեղափոխուեց ուխտի տապանակը։ Ի՞նչ էր պատճառը, որ Սողոմոնը կորցրեց իր երջանկութիւնը և ի՞նչ գործեր կատարեց նա Աստուծու օրէնքների հակառակ։ Ի՞նչի՞ տըրտնչաց ժողովուրդը Սողոմոնի դէմ։ Ի՞նչ բաներ ուշքի բերին Սողոմոնին և ի՞նչ խոստովանեց։

III. Այս պատմութիւնից մենք շատ բան ենք սովորում. 1) Դաւթից յետոյ թագաւոր է դամնում նրա երիտասարդ որդին—Սողոմոնը. Սա իրան տկար է համարում

իր հօր բարի օրինակին հետեւլու և կառավարելու այդպիսի մի բազմաթիւ ժողովուրդ: Նա կարիք է զգում օգնութեան և այն էլ Աստուծու օգնութեան. ուստի զիմում է նրան խնդրելով իր աղօթքի մէջ, որ տայ իրան մաքուր սիրտ և պարզ միտք—իմաստութիւն, դատելու ժողովրդին արդարութեամբ և զանազանելու բարին ու չարը: 2) Աստուծած լսում է Սողոմոնի խնդրեցը և յայտնում, թէ ուրովինետե դու չխնդրեցիր ոչ փառք, ոչ հարստութիւն, ոչ երկար կեանք և ոչ քո թշնամիներիդ պատիժ—կորուստ, ուրեմն կտամ քեզ այն, ինչ որ խնդրեցիր և կտամ այն էլ, ինչ որ չխնդրեցիր, այն է՝ փառք և հարստութիւն. իսկ եթէ դու կպահես Աստուծու օրէնքները, ինչպէս քո հայրը, ես կերկարացնեմ և քո օրերը: Սողոմոնի այս խնդրից երեւում է, որ նա անշահասէր, բարեպաշտ, ննազանդ է, դրա համար էլ նա բարձր է գնահատում երկնային բարիքներ խնդրել, քան թէ հարստութիւն, պատիւ և երկար կեանք: Նրա համար էլ Աստուծած Սողոմոնին հարստացրեց երկնաւոր և երկրաւոր բարիքներով: Նրա ամենամեծ բարիքը գէպի Աստուծած հնազանդութիւնը—երկիւդ Տեառն էր, որով նա սկսեց սկզբում գեղեցիկ կերպով կառավարել եր կիրը: Ժողովուրդը խաղաղութեան մէջ է լինում և երջանիկ օրեր անցկացնում: 4) Երեւում է Սողոմոնի իմաստութիւնը դատաւորութեան ժամանակ: Նա լսելով երկու կողմերի բացատրութիւնը, սկզբում ոչինչ հետեւանքի չէ հասնում: Բայց յետոյ խորասուզուելով հոգեպէս՝ իմանում է, որ իսկական մօր սիրտը աւելի կցաւի, քան թէ խորթ, եթէ երեխային մի վտանգ պատահի: Նա հրամայում է կէս անել երեխային և տալ երկու մայրերին: Իսկական մօր սիրտը ցաւում է և Սողոմոնը գտնում է հարազատ մօրը: Նա մէկի մէջ տեսնում է մայրական գութ, սէր, զիւսի մէջ՝ անտարբերութիւն: Ահա Սողոմոնի իմաստութեան և մարդանաչութեան մի օրինակ: 5) Սողոմոնը կատարելով իր հօր—Դաւիթի սրտի ցանկութիւնը՝ Աստուծու համար փառաւոր մի տուն է շինում, ուր և աղօթում է: Նրա աղօթքը իր սրտի հայելին է: Նրա մէջ երկում է հեղութիւն,

որ իրան. Աստուծու ժառայ է անուանում և այնպէս էլ զգում: Երեւում է իմաստովթիւն, որ պիտէ Աստուծու մեծութիւնը թէ երկինք և երկիրն էլ նրան, ապարունակելու համար բաւական չեն աւելի. և այն առնը նա գիտէ որ Աստուծած ոչ թէ միայն իսրայելացիների համար է, այլ և բալոր ազգերի: Երեւում է քարեալաշտութիւն, որ հաւոզողած էն չնայելով իր զօրութեանը և իմաստութեանը, թէ օրինութիւնն ու օգնութիւնը վերեկց է գալիս—Ամենակարող Աստուծուց, նրա համար էլ զիմում է և հաւատացած է, որ կըլսէ: Երեւում է նրա սէրը դէպի, մարդիկ—ժողովուրդը, որ խնդրում է Աստուծուն իր ժողովրդի աղօթքը, լսել ամեն համբամանքներում, մանաւանդ երեւանա, մեղանչում է: Եւ յորդորում է Աստուծու երկեղն ունենալ միշտ սրտի մէջ որպէսպի երջանիկ ապրի: Նրա սէրը դէպի բոլոր մարդիկ և ազգերը երեւում է նրանիցն որ խնդրում է իր կառուցած տաճարի մէջ լսել և օտարականների աղօթքը և հաւարտացած է: որ բոլոր ազգերը կիսուառվաննեն, թէ ճշմարիտ Աստուծու նա է, Արանից կարելի է հետեւեցներ, որ զւմ մէջ կայ. Աստուծու երկիւդ, նա իր կեմնքն իմաստութեամբ կղեկավարէ, նրա գործերը յաջողութեամբ կամակուին: Նա միշտ ուղիղ կդատէ թէ իրան և թէ ուրիշների և սրանով դիւլութեամբ հիասնի երկրաւոր բարիքների և Աստուծու օրինութեանը: 7) Մենք տեսնում ենք, որ յետոյ Սողոմոնը փոխվում է, նա, հետանում է Աստուծուց եւ, որքան նրա թագաւորութեան սկզբը և զարունակութիւնը փառաւոր էին, այնքան էլ վերջը—տիւար: Ուրախ սկզբնաւորութեանը, փառաւոր շարունակութեանը հետեւեց տիւուր, վահճան: Սողոմոնի փորձութիւնը աւելի մեծ էր: Փառքը, պատիւր, և վայելչութիւնները հետզհետէ այնպէս զրաւում են նրա սիրտը, որ նրանց գերադասում է Աստուծուց: Նա ազգերի գովասանքները և շողովորթութիւնները բարձր դամսեց Աստուծու փառարանութիւնը և իր յոյժը դրեց հարստութեան, իմաստութեան և զօրութեան վրայ: Դարձաւ ունայնասէր և հպարտ: Սողոմոնը մոռացաւ Նրան, որից նա ամեն բան պատաշել էր և կարծում էր, թէ այդ պարունակութեամբ

և իմաստութեամբ էր ձեռք բերել: Նրա սիրառ, որ սկզբում Աստուծուն էր յանձնել, հակուեց դեպի ոսկին, իշխանութիւնս ու փառքը, դրանք դարձան նրա պաշտելին—կուռքը, նա պաշտեց և տեսանելի կուռքեր: Նա ծերացաւ, թուլացաւ և հեթանոս կանայք փոխեցին նրա սիրառ: Իմաստուն Սողոմոնն այնպէս ընկաւ, որ հաճելի լինելու համար այս կանանցը՝ սկսեց կուռքուններ շինել երուսաղէմում, ուր ինքն էլ յաճախում էր: Նա կամենում էր ուրիշ թագաւորների կանանցից՝ իր գերադասել և սրանով ցոյց տալ իր հալստութիւնը: Եւ խնամութիւններ հաստատելով նրանց հետ՝ իր իշխանութիւնը ընդպարձակել ու զօրացնել: Այս փառաւորութիւնը և փառասիրութիւնը ցեց նրան անդունդի մէջ: Աւելանում են ծախքերը, հետեւապէս և ժողովրդից ստանալիք հարկերը: Բարձրանում են անբաւականութիւններ, արտունջներ և խոռովութիւններ, որովհետեւ նա սկսում է ճնշել, նեղացնել իր հպատակներին: Եթէ մի կէտ կայ Սողոմոնի արարքը մեղմացնելու, այդ նրա ծերութիւնը կարելի է համարել, որ յաճախակի մարդու մարմինը և հոգին թուլանում է, մանաւանդ մի այսպիսի կեանք վարողին: 8) Սողոմոնի կեանքից մենք կարող ենք շատ խրատներ առնել: Նրա կեանքը սկսուեց ուրախ, շարունակուեց փառաւոր և վերջացաւ տիխուր: Մենք էլ կանգնած ենք մեր կեանքի սկզբնաւորութեան վրայ, որին հետևում է շարունակութիւնը և վախճանը: Միկնոյն փորձութիւնները, մանաւանդ այս անցաւոր աշխարհի զոււրծութիւնները, մեզ էլ կարող են սպանել և փչացնել: Սրա համար միշտ պէտք է զգոյշ լինինք, հսկենք և աղօթենք, որ փորձութեան մէջ չընկնենք և եթէ ընկել ենք, աշխատենք, որ բարի վախճան ունենայ:

№ 24. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ. ԻՄՐԱՅՀ-
ԼԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

I. Սողոմոնի մահից յետոյ նրա որդի Ռոբովամը գնաց Սիւքէմ քաղաքը, ուր հաւաքուել էր բոլոր ժո-

ղովուրդը, որ ըստ սովորութեան հաւատարմութեան երգում տայ: Այստեղ հաւաքուել էին դժգոհները Յերոբովամի առաջնորդութեամբ: Սրանք ասացին Ռոբովամին. «Բո հայրը ծանը լուծ դրեց մեր վրայ, հարկերն օրէցօր աւելացրեց և կեղեքեց մեզ: Եթէ դու կըթեթևացնես այդ լուծը, մենք հաւատարմութեամբ կըծառայենք քեզ»:

Ռոբովամը փոխանակ ժողովրդի տրտունջները լսելով՝ իր թեթևամիտ բարեկամների խորհրդով պատասխանեց. «Իմ հայրը ծանը լուծ դրեց ձեր վրայ, ես աւելի ևս պէտք է ծանրացնեմ»: Խսրայէլացիները լսելով Ռոբովամի այս պատասխանը՝ դժգոհ հեռացան:

Սրանից յետոյ երկու ցեղերը—Յուղայի և Բենիամինի, ճանաչեցին Ռոբովամին թագաւոր, իսկ տասը ցեղերն ընտրեցին թագաւոր Յերոբովամին: Այսպէս թագաւորութիւնը բաժանուեց երկուսի՝ Յուղայի և հսրայէլի: Առաջինի մայրաքաղաքն երուանդէմն էր, իսկ երկրորդինը՝ Սիւքէն՝ յետոյ Սամարիա:

Յուղայի և հսրայէլի թագաւորութիւնների հպատակները չնայելով քաղաքականապէս բաժանման, շատ յատկութիւններ ունէին, որոնք երկուսի համար ևս ընդհանուր էին: Նրանք խօսում էին մի լեզով և պաշտում միևնոյն Աստուծուն:

Այս բանը գուր չէր գալի Յերոբովամին. նա մըտածում էր, որ եթէ իր հպատակները յաճախ գնան երուապէմ, կարող են միանալ Յուղայի թագաւորութեան հետ, իսկ իրանից սառչիլ: Այս պատճառով նա ժողովրդին այդ ազգային սովորութիւններից յետ պահելու համար՝ երկու ոսկէ հորթ ձուլել տուեց և հրամայեց պաշտել նրանց: Նա ամեն ցանկացողի թոյլա-

տրումէրքահանայի պաշտօն վարել և զոհ մատուցանել:

Սկսուեցան ներքին խոռվութիւններ, երկպառակութիւններ, ապատամբութիւններ և պատերազմներ Յուղայի ու Խորայէլի թագաւորների մէջ, իսկ ժողովը գրդի մէջ շատացան անիրաւութիւնը, կուսացառութիւնը: Նրանք մոռացան ճշմարիտ Աստուծուն և այս պատճառով էլ Աստուած վերջ դրեց այս երկու թագաւութիւններին:

Ասորոց Սաղմանասար թագաւորը 722թ. Քրիստ. ծննդից առաջ՝ կործանեց Խորայէլի թագաւորութիւնը և բնակիչների մեծ մասը գերի տարաւ: Իսկ երկրը թափուր չթողնելու համար՝ նա Բարելոնի և Ասորիքի բնակիչներից շատերին տեղաւորեց գերի տարած իսրայէլացիների տեղերում: Սրանք խառնուելով մնացած խորայէլացիների հետ կազմեցին մի առանձին ցեղ, որ կոչուեց սամարացիք:

Խորայէլի թագաւորութիւնը գոյութիւն ունեցաւ 257 տարի, որի ժամանակ 19 թագաւորներ եղան:

II. Սողոմոնի մահից յետոյ ի՞նչ խոռվութիւն պատահեց ժողովուրդի մէջ: Ո՞վ էր դժգոհների պարագլուխը: Ի՞նչ պատասխանեց Ռովորամը և ի՞նչ փոփոխութիւններ յառաջացան: Քանի ցեղեր հաւատարիմ մնացին Սողոմոնի որդուն և որո՞նք հեռացան: Ի՞նչպէս էին անուանում այն երկու թագաւորութիւններն և որո՞նք էին նրանց գլխաւորքադները: Բաժանումից յետոյ ի՞նչ ազգային յատկութիւններ ունէին Խորայէլացիները, որոնց միջոցով սերտկապ և հաղորդակցութիւններ էին պահում իրար հետ: Հաճակի էր արդեօք այս բանը Յորոքովամին և ի՞նչ միջոցներ ձեռք առաւ այդ կապը քանդելու համար: Դրանից յետոյ ի՞նչ խոռվութիւններ և երկպառակութիւններ տեղի ունեցան երկու թագաւորութիւնների մէջ և ի՞նչո՞վ վերջացան: Ի՞նչքան ժամանակ տեղեց Խորայէլեան թագաւորութիւնը և որքան թագաւորներ եղան:

III. Այս Պատմութիւնից մենք սովորում ենք. 1) Սողոմոնի տէրութէնը բաժանում է: Դրա պատճառը Սողոմոնի անկարգ գործերն ու ծախքերն էին, որոնց պատճառը աղքատացել, սնանկացնել էր ժողովուրդն և առաջ բերել դժգոհութիւններ, իսկ նրա որդուց էլ լաւ բան չէին սպասում Պալատի անհաշիւ ծախքերը՝ կանայք, ծառաներ, աղախիներ, մշտական զօրք—չափից դուրս մեծ ծախքեր էին պահանջում և ժողովուրդն ինքն էր այդ ծախքերը լրացնում: Նա էր բոլոր շինութիւնների ծախքերը հոգում—վճարում և ձրի աշխատում. ահա թէ աղքատութիւնը և դժգոհութիւնը ինչ բանից յառաջացան: 2) Մենք տեսնում ենք, որ ժողովուրդը իր նեղութիւնը յայտնում է փորձառու ծերերի բերանով երիտասարդ թագաւորին և խնդրում է թեթևացնել իրանց վիճակը: Սակայն Ռովովամը իրան շրջապատող երիտասարդների խորհրդին հետեւերով՝ ականջ չէ դնում ժողովրդի արդարացնին՝ բողոքին և աւելի նեղում ու սաստկացնում է: Այդ շրջապատող անփորձ երիտասարդները—խորհրդականները—թագաւորի մանկական ընկերներն էին: Նրանք մեծացել էին շոայլութեան մէջ և խեցն ու կարիք ասուած բանը չգիտեին: Նրանք կարծում էին, որ ժողովուրդը հնազանդութեան մէջ պահելու համար հարկաւոր է միմիայն երկիւղ: Այս պատճառով խորհուրդների մասին: Նա անդորք և մեծամիտ էր, ինչպէս իր ընկերները և կարծում էր, որ ժողովուրդը իր համար է միայն ապառում երկրիս վրայ, որպէսզի ինքը հարստութիւն, փառք և շքեղութիւն վայելէ: Բայց որ թագաւորը հայր է և պարտաւոր է մտածել ու աշխատել, որ ժողովուրդը բաղդաւոր լինի, որ ժողովրդի արդար խնդիրները պէտք է լսել ու կատարել, այս տեսակ մտքերը շատ հեռու էին Ռովովամից: Նրա խիստ պատասխանը վատ հետևանքի է հասցնում—թագաւորութիւնը բաժանւում է: 3) Ժողովուրդը, թէև քաղաքականապէս բաժանւում է, բայց կրօնով գարձեալ մի է լինում: Յերոբովամը երկիւղ կրկնով, որ տօներին ժողովուրդն երուսաղէմ գնալով և զոհ մատուցանելով՝ մի գուցէ

նրա սիրտն էլ Յուղայի թագաւորութեանը յարի, ոսկէ հորթեր է շինել տալիս և հրամայում նրանց պաշտօն մատուցանել, Բացի այդ կուտուններ է շինել տալիս, զոհաբերութիւններ, քուրմեր նշանակում հասարակ դասից, տօներ որոշում և հրամայում պաշտօն մատուցանել, ինչպէս Երուսաղէմումն էր: 4) Բաժանման և կուպաշտութեան մի ուրիշ հետեանքն էլ այն եղաւ, որ շարունակ ներքին խոռվութիւններ, անկարգութիւններ և պատերազմներ են առաջ գալիս, որոնց պատճառով թուղանում են. և օտար թագաւորները յարձակւելով յաղթում են երկուսին էլք տիրում երկրին և տաճարի սրբազն անօթների և պալատի հարստութիւնների մեծագոյն մասը յափշտակում: Այսպէս բաժանման հետեանքը միշտ լինում է թուղութիւն, տկարութիւն, երկչոտութիւն, և նիւթական կորուստ: Միութիւնը՝ ոյժ, զօրութիւն է, իսկ բաժանումը, անբարոյականութիւնը և վրէժը տկարութիւն ու թուղութիւն: Եւ սրբութիւնը բարձրացնում է ազգին, իսկ մեղքը ստորացնում, նուազեցնում է: Յայտնի է որ անհամաձայնութիւնը մի ազգի մէջ այն ժամանակ է ծնում, երբ նրա կրօնական զգացումը սառում է, երբ նա հեռանում է Աստուծուց և նրա պատուիրաններից: Մի ժողովուրդ, որ չէ սիրում Աստուծուն, հետեապէս և իր մերձաւորին—եղթօրը չէ կարող սիրել: Այդ տեղից բղխում է Ռոբովամի վարմունքը և Յերոբովամի ամօթալի և գայթակլեցուցիչ օրինակը: Այդ տեղից էլ սկիզբն են առնում Յուղայի և Խորայէլի տան մէջ ներքին աւերիչ պատերազմները: Արդարութիւնը որ երբեմն իսրայէլացիներին և նրանց տիրողներին բարձրացնում էր, այժմ նրանց յանցանքը ստորացնում է ու ազականում, որը հետզհետէ աւելի մեծ ծաւալ ստանալով կործանում է իսրայէլի թագաւորութիւնը:

№ 25. ՅՈՒՂԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

I. Սողոմոնի որդի Ռոբովամից սկսած Յուղայի երկիրն երբեմն ունենում էր բարեպաշտ թագաւոր-

ներ, որոնք վերականգնում էին ճշմարիտ Աստուծութիւնը, կործանում էին կուատունները և ամեն կերպ յորդորում ժողովրդին դառնալ դէպի ճշմարիտ Աստուծութիւնը: Բայց ժողովրդի այս դարձը հաստատ և երկարատև չէր լինում: Նրանք արտաքին ձեռվ զոհ մատուցանելով Սողոմոնի տաճարում, շաբաթ օրը և ամսամուտը տօնելով՝ կարծում էին, թէ կատարում են Մովսիսի բոլոր օրէնքները: Ոչ ոքի մտքից չէր անցնում ուղղել սիրտը, մաքրել զգացմունքը, ազնիւ և ճշմարիտ լինել և փոխախարձաբար սիրել միմեանց: Ահա այս էր պատճառը, որ քանի բարեպաշտ թագաւորները կենդանի էին, իսրայէլացիները ճշմարիտ Աստուծուն էին պաշտում, իսկ հէնց որ նրանք մեռնում էին, կրկին դառնում էին կուապաշտ: Եւ իզուր էին անցնում մարգարէների զգուշացնելը, յորդորները, խրատները—դառնալ դէպի ճշմարիտ Աստուծութիւնը: Նրանք հալածում, սպառնում և սպանում էին նրանց:

Եւ այսպէս ամբարեպաշտութիւնը, կուապաշտութիւնը, չարութիւնը և բարոյական անկումն աւելի ու աւելի տարածուելով ժողովրդի մէջ պատճառ են դառնում Յուղայի թագաւորութեան վերջանալուն:

Բարելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը 558 տարի Քիստոսի ծննդից առաջ նուածեց Յուղայի թագաւորութիւնը, այրեց Սողոմոնի տաճարը, կործանեց Երուսաղէմը և երկրի բնակիներին գերի տարաւ:

Յուղայի թագաւորութիւնը 390 տարի գոյութիւն ունեցաւ: Այս ժամանակամիջոցում իշխեցին 17 թագաւորներ: Նրանք բոլորն էլ Դաւթի ցեղից էին:

II. Ի՞նչպէս էին Յուղայի թագաւորները դէպի իրանց հաւատը: Ի՞նչպէս էր կատարւում Աստուածաշաշտութիւնը: Ովքը էին քարոզում և յորդորում ժողովրդին, թագաւուին, որ հաստատ մնան հաւատին. Ի՞նչը պատճառ եղաւ Յուղայի թագաւորութեան վերջանալուն. Ե՞րբ և ով նուածեց Յուղայի թագաւորութիւնը և ի՞նչ վնամներ տուեց: Ո՞րքան տարի տեսց այդ թագաւորութիւնը և քանի թագաւորներ եղան Դաւթի ցեղից:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք, 1) Թագաւորութեան բաժանումից յետոյ Յուղայի թագաւորութեան բնակիչները, թէ և յաճախակի հեռանում են Աստուծուց և ընկնում կուապաշտութեան մէջ, սկսած Սողոմոնի որդի Ռոբովամից, բայց և այնպէս համեմատելով նրանց իսրայէլեան թագաւորութեան բնակիչների և թագաւորների հետ, աւելի բարեպաշտ են լինում: Այս երկրում թագաւորութիւնը ժառանգական է լինում և բոլոր թագաւորները լինում են Դաւթի ցեղից: 16 թագաւորներից տասը լինում են անարժան և թոյլ, որոնք մոռանալով Աստուծուն, առիթ էին տալի ժողովրդին և Յուղանալու իր հաւատքի մէջ և հակուելու դէպի կուապաշտութիւնը: Իսկ երբ սրանց յաջորդում էին բարեպաշտ թագաւորներ, նորից ժողովրդին դարձնում էին դէպի ճշմարիտ հաւատը, կանգնեցնում էին ուղիղ ճանապարհի վրայ և հաստատում հաւատքի մէջ: Այս է լինում գլխաւոր պահանջներից մէկը, որ Յուղայի թագաւորութիւնը աւելի երկարատև է լինում: Բացի այդ, այս երկրում էին իսրայէլացոց որբութիւնները, Աստուծու տաճառը, քահանայք, զետացիք, որոնք յիշեցնում էին ժողովրդին հայրենի օրէնքները, Աստուծու պատուիրանները: Նկատուած է, որ ժողովրդը, երբ ունենում էր Աստուծու երկիւզը, միշտ բախտաւոր էր և ունէր յաջողութիւն, փառք և յաղթութիւն թշնամիների դէմ, իսկ երբ հեռանում էր նրանից և ձեապաշտութեան մէջ ընկնում, զրկում էր այս հայրենի օրէնքները և յուղանալում էր առաջական անդամութեան: 2) Աստուծ թողնում է իսրայէլացիներին կրնլու այդ պատիժը: Եւ այսպէս վարուելու պատճառն այն էր, որ նա տեսնելով՝ թէ ի՞նչպէս իր սէրն ու արած բարութիւնները ունայն են անցնում, կամենում է այլապէս խրատել այդ անհնազանդ ժողովրդին: Նա կամենում է կարիքի միջոցով զգալ տալ իր ժողովը գին նրա սխալը, նրա արարմունքի հետեանքը և ճաշակել տալ նրա վարմունքից առաջացած դառն պտուղները: Նա իսրայէլին կամենում է սովորեցնել—լսել և հնազանդուիլ: 4) Մենք տեսնում ենք, որ իսրայէլը հեռանալով Աստուծուց, արդարի կրում է իր պատիժը: Բարեկանի Նաբուգոստանուր թագաւորը պաշարում է Երուսաղէմը և քարուքանդ անելով՝ նրա պարիսպները մոխրի կոյթ է դարձնում, ընակիչներից շատերին փլատակների տակ կոտորում, խողխողում, մեսցնում իսկ կենդանիներին գերի տանում Բաբելոն Տաճարը կործանում, որբութիւնները անպատճում և նրա միջի հարստութիւնները կողոպտում:

Ահա այսպէս է սկսում Աստուծու արդար պատիժը, որի նպատակն է լինում զգալ տալ ժողովրդին իր սխալ ընթացքը, սակայն ցաւակցաբար պէտք է ասել, որ իսրայէլացիների սակաւ մասը կարողացաւ հասկանալ:

— 73 —

Հ 26. ՄԱՐԳԱՐԻՆԵՐԸ

I. Երբ իսրայէլացիները բաժանուեցան երկու թագաւորութեան, Աստուած նրանց ճշմարիտ հաւատի և բարեպաշտութեան մէջ պահելու համար, յաճախ յարուցանում էր առանձին բարեպաշտ մարդիկ, որոնք կոչվում էին մարզարէներ: Սրանք ոգևորուած ու զօրացած Սուրբ Հոգով՝ յայտնում էին մարդոց Աստուծու կամքը, քարոզում էին ճշմարտութիւն, խրատում, զգուշացնում և յանդիմանում էին տիրող կուպապաշտութիւնը ու ժողովրդի պակասութիւնները: Իսկ նեղութիւնների և թշուառութիւնների ժամանակ յուշ սադրում և մխիթարում էին: Նրանք գուշակում էին Աստուծուց գալիք պատիժները չար մարդկանց վրայ և իրանց Աստուծուց ուղարկած լինելը հաստատում էին հրաշքներով:

Իսրայէլացիները ընդհանրապէս չէին սիրում մարդարէներին: Նրանք ատում, արհամարհում, հալածում և երբեմն էլ չարաչար սպանում էին:

Մարդարէներից ոմանք քարոզում էին միայն բերանացի, և ոմանք էլ թէ բերանացի և թէ գրաւոր:

Նրանցից շատերը պարզ կերպով գուշակում էին խոստացեալ Մեսսիայի մասին: Այսպէս, 1) թէ «Նա կը ծնի կուսից Հրէաստանի Բեդղէհէմ քաղաքում և կանուանուի իմմանուէլ, որ նշանակում է՝ Աստուած մեզ հետ է: 2) Աստուծու հոգին կիջնի նքա վրայ և կօծէ նրան: 3) Նա կը քարոզէ ժողովրդին, հրաշքներ կը գործէ և կը բժկէ հիւանդներին: 4) Նրա առաջից կերթայ նրա Կարապետը: 5) Նա հանդիսաւոր կերպով կը մտնի Երուսաղէմ, երեսուն արծաթով կը մատնի,

կենթարկուի հայիոյանքի, ծաղրի ու թուքի և գանակոծութեան: 6) Մարդիկ կը վարուին նրա հետ իրբն շարագործի, կը կախեն նրան փայտից անօրէնների հետ կը փոցին նրա կողը, կը բաժանեն նրա շորերը և վիճակ կը ձգնի: 7) Այս շարչարանքները նա կը կը բէ մարդոց անիրաւութիւնների պատճառով, որպէսզի նրանց յաւիտենական կորստից փրկէ: 8) Նա յարութիւն կառնէ և կը հաստատէ նոր, երկնային թագաւորութիւն»:

II. Թագաւորութեան բաժանումից յետոյ Իսրայէլացիներն ինչպէս էին վերաբերում դէպի Աստուած և ովքեր էին նրանց քարոզում ու միիթարում: Ինչ էր մարդարէների պաշտօնը և ժողովուրդը ինչպէս էր վարւում նրանց հետ, Մարգարէներն ինչպէս էին կատարում իրանց պաշտօնը: Նրանք խոստացեալ Փրկչի մասին ինչ գուշակութիւններ արին:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք, 1) որ Աստուած իր կամքը մարդոց յայտնելու համար յարուցանում է ժողովրդի միջից հաւատարիմ, երկիւղած և բարեպաշտ մարդիկ, որոնք կոչվում են մարզարէներ: Եւ այս ընտրուած, հոգով լցուած և զօրացած մարդիկ անձնուէր գործիչներ էին: Սրանց կոչումը շատ բարձր էր: Սրանք իրանց դրական քարոզներով գարթեցնում, հրաւիրում էին դէպի ապաշխարութիւն և յիշեցնում էին Աստուծու հետ ունեցած ուխտի պահպանումը, իսկ իրանց Աստուծու կողմից ուղարկուած լինելը հաստատում էին հրաշքներով: Աստուած յայտնում էր սրանց շատ բան ապագայից, առանձնապէս Փրկչի ծննդեան, կեանքի, շարչարանքների և փառաւորութեան մասին և գուշակում էին իսկութեամբ ու մանրամասնութեամբ: Սրանց մէջ ծագում էր անտուածային ճշմարտութեան լոյսը, որ պարզ, որոշ ճանաչածները և ծերմ սրտով զգացածները, որպէս պատուածային յայտնութիւններ, հաղորդում էին ժողովրդին: Մարգարէներն կոչ-

ւում էին Աստուծոյ մարդիկ, որոնք նչ թէ իրանց սեփական անձի կամ ուրիշի, այլ Աստուծու հրամանները, պատիժ, շնորհք ու ողորմութիւն, ժողովրդին յայտնում և աստուծացին գաղափարներն ու մտքերը քարոզում և հասկացնում էին: Սրանք ժողովրդին իրանցից աւելի էին պիտում, առաջնորդում, խրատում, յորդորում մինչև վերջին շունչը: Սրանք աղօթում էին և բարեխօս լինում Աստուծու առաջ մեղաւոր ժողովրդի համար և աշխատում էին չնչելու կոտապաշտութիւնը և անօրէնութիւնները: Մարդարէներն իսկապէս մի տեսակ հսկիչներ էին և պարտաւորութիւն ունէին ժողովրդին և թագաւորին յիշեցնել, եթէ նրանք օրէնքներից հեռանում էին, առաջնորդել ուղիղ ճանպարհով և խորհուրդ տալ, եթէ անարդարութիւն էին գործում: Մարդարէները Աստուծոյ և կրօնի անունով այնպէս էին խօսում, որ շատ թագաւորներ սարսափահար էին լինում նրանցից: Թէկ շատ անդամ թագաւորի բարկութիւնը մահ էր սպառնում նրանց բայց և այնպէս նրանց կամքը անընկանի էր մնում: Նրանց բարկոծում, սպանում էին, բայց նրանք մինչև իրանց վերջին շունչը դարձեալ չէին դադարում ճշմարտութիւնը քարողելուց: 2) Մարդարէները միթաքառում էին խորին թշուառութեան ժամանակներում և համոզուած էին, որ Աստուծ իր ժողովրդին, չնայելով նրա գործած յանցանքներին՝ չի մոռանայ, այլ կյիշէ իր խոստում՝ նրա պապերին տուած: Այս պատճառով միշտ կըրկնում էին, որ ամենայն մի ցաւ և վիշտ գէպի ապաշխարութիւն է հրաւիրում ժողովրդին և սա Աստուծու գթութեան նշան պէտք է համարել:

№ 27. ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ. ԴԱՆԻԵԼ
ՄԱՐԴԱՐԵ

I. Եսրայէլացիները 70 տարի գերի մնացին Բաբելոնում: Դառն էր նրանց վիճակը օտար երկրում: Բայց այս թշուառութիւնը նրանց ուշքի բերեց և զգաւում էր ամենայն մի ցաւ և վիշտ գէպի ապաշխարութիւն է հրաւիրում ժողովրդին և սա Աստուծու գթութեան նշան պէտք է համարել:

տացը հեռու կենալ կոապաշտութիւնից: Գերութեանժամանակ Աստուծած միթարիչ ուղարկեց նրանց Դանիէլ մարդարէին: Նա Աստուծու օգնութեամբ մեկնեց Նաբուգոդոնոսոր թագաւորի երազները և կարողացաւ ճանաչել տալ Աստուծու մեծութիւնը: Այս պատճառով թագաւորը Դանիէլին Բաբելոնի բոլոր իմաստունների գլխաւոր նշանակեց:

Դանիէլը պատահի ժամանակ գերի էր տարուել Բաբելոն: Նա իր երեք բարեկամներով կրթուեց Երեւանի թագաւորի պալատում: Երիտասարդները չընայելով՝ որ ապրում էին պալատում հեթանոսների մէջ, հաստատ էին պահում իրանց հաւատի օրէնքները: Նրանք հրաժարում էին ուտել այն կերակուրները, ինչ որ արգելուած էր Մովսէսի օրէնքով և խնդրում էին թագաւորին՝ թոյլ տալ կերակուրել միայն հացով ու բանջարեղիններով: Ուսումն աւարտելուց յետոյ՝ նրանք մտան արքունի ծառայութիւն և իրանց խելքով ու հաւատարիմ ծառայութեամբ հասան բարձր պաշտօնների: Նրանք և այս ժամանակ հաստատ էին պահում իրանց հաւատը և նրա օրէնքները, որոնց համար շատ անդամ ենթարկում էին տանջանքների և կեանքից զրկելու վտանգին:

Դանիէլի երեք բարեկամներին՝ Անանիա, Ազարիա և Միսայէլ՝ թագաւորի հրամանով ձգեցին բորբոքուած հնոցի մէջ՝ Նաբուգոդոնոսորի կուռքին երկրպագութիւն չտալու համար: Բայց Աստուծ հրաշալի կերպով ազատեց նրանց մահից: Նա ուղարկեց իր հրեշտակին, որը կրակի բոցը դարձրեց սառը ցող և նրանք մնացին անվսաս:

Յետոյ ինքը Դանիէլն էլ ամբաստանուեց, որ Աս-

տուծուն աղօթում է իր օրէնքով և ձգուեց քաղցած առիւծների գուբը, բայց առիւծներն Աստուծու հրամանով չմօտեցան և չվասեցին նրան

II. Քանի՞ տարի գերի մնացին հսրայէլացիները Բարեկուում: Ի՞նչպէս էր նրանց վիճակը և ի՞նչ օգուտ տուեց այդ գերութիւնը: Գերութեան ժամանակ Աստուած ի՞նչ մարգարէ ուղարկեց և ի՞նչպէս ճանաշել տուեց նա Աստուծոյ մեծութիւնը: Դանիէլը և նրա երեք բարեկամներն որտեղ ստացան կրթութիւն և ի՞նչպէս էին նրանք վերաբերում դէպի իրանց հաւատի օրէնքները: Ի՞նչ պաշտօններ ստացան նրանք: Յետոյ ի՞նչ պատժի ենթարկուեցան և ի՞նչպէս աղատուեցան:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) Խորայէլացիները գերութեան և նեղութեան ժամանակ Բարեկունի գետի ափերում նստած ողբում էին իրանց հայրենիքը: Նրանց վիճակը դառն և անտանելի էր: Նրանք հայրենի երկրից հեռացած՝ յշշում էին երուսաղէմը, նրա նուիրական և սուրբ տեղերը, ուր ապրել են իրանց նախնիքը, և ուր գտնւում են իրանց սիրելիների գերեզմանները: Նրանք նոր են հասկանում, թէ ի՞նչքան քաղցր է եղել հայրենիքը և ի՞նչ թանկագին գանձեր են ունեցել Քանանում: Այս ամենը մտաբերելով հոգւոց էին հանում և հառաջում: Նոր են իմանում, մտաբերում Մովսէսի խրատները, որ Աստուծուն հաւատարիմ մնալով կեանք և օրէնութիւն կվայելեն, իսկ նրանից հեռանալով՝ անէծքը և մահը կլինէր նրանց բաժինը: Նրանք մտաբերելով անցեալի փառաւորութիւնը, տեսնում էին ներկան տիսուր և ապագան անյոյս և այս վերագրելով իրանց արածին՝ դառնապէս խոստովանում էին, որ սա Աստուծու արգար դատաստանն է: Նրանք ուիս էին գնում այլեւ չբարկացնել Աստուծուն, այլ նրա օրէնքները կատարել արբութեամբ և հաւատարիմ մնալ նրան: Մարգարէները տեսնելով այս ամենը՝ զգում էին Աստուծու միաքը իր ժողովրդի վերաբերութեամբ: Նրանք հաստատապէս համու

դուած էին, որ սրանով Աստուած կամենում է ժողովուրդը դէպի ինքը գարձնել: Այս դառն վիճակի ժամանակ թուլամիաներից շատերն էլ մոռացան Աստուծուն և հեթանոս դարձան: Բայց Աստուած ողորմած է: Նա վերստին ներում է ժողովրդին, որովհետեւ տեսնում է, որ նա թշուառութեան մէջ զգաստացել հիասթափել և սրտով գարձել է դէպի ինքը: Նա կարիքի միջոցով սովորեցրել էր նրանց աղօթել և արհամարհած օրէնքները կրկին պատուել ու հնազանդուել: 2) Մենք տեսնում ենք Դանիէլի և նրա ընկերների գովելի վարմունքը, որ հեթանուների աստուածներին նուիրուած կերակուրները, որոնք Մովսէսի օրէնքով արգելուած էին, չեն ուտում և չեն անցնում հայրենի օրէնքների ցանկից: Նրանք կարծում էին, եթէ աստուածներին նուիրուած կերակուրներն ուտեն, իրանց որտերն էլ գուցէ փոխուին: Թէկ գլխաւոր հարցը նրանում չէ, թէ մարդ ի՞նչ է կերել, այլ թէ ի՞նչպիսի սիրտ ունի: Մարդ նայում է երեսին, իսկ Աստուած—սրտին. սակայն նրանք այդ բանին մեծ նշանակութիւն էին տալիս և չէին կամենում պատուիրանից անցնել, որովհետեւ դա համբերութեան, հպատակութեան մի նշան է և ով փոքր բաների մէջ Աստուծուն հաւատարիմ է, նա մեծերի մէջ էլ այնպէս կըվարուի: Բացի այդ, նրանք սիրում էին չափաւոր կեանք վարել կերակը վերաբերութեամբ և չեն գայթակղուում արքունի սեղանի առատութիւնից և ճոխութիւնից: 3) Մենք տեսնում ենք մանուկների հաստատ հաւատը, որ կուռքերին երկրպագութիւն չեն տալի, ոչ քստմնելի պատիմը և ոչ թագաւորին հնազանդ լինելու պարտականութիւնը չեն հեռացնում նրանց ճշմարիտ Աստուծուց: Նրանք Աստուծուն աւելի են սիրում, քան թէ մարդկանց և միշտ կրկնում են, թէ Աստուած կրակից էլ՝ մարդկանցից էլ կարող է ազատել իրենց: Նրա սուրբ Աջը կըհովանաւորէ և կազատէ այն ամենը, ինչ որ մարդիկ կըրած են համարում: Այսպէս հաւատը պաշտպանում, աղատում է նրանց:

№ 28. ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ ՊԱՐՄԻՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԺԱՄԱՆԱԿԻ. ԵԶՐԵՒ ՆԵԿՄԻ

I. Գերութեան եօթանասուն տարին լրանալուց
յետոյ՝ պարսից կիւրոս թագաւորը տիրեց բարելացոց
թագաւորութեանը և իրաւունք տուեց գերի տարած
հրէաներին վերադառնալ իրենց հայրենիքը։ Նա տուեց
նրանց և շատ անօթներ, որ յափշտակել էր Նարու-
գողոնոսորը Երուսաղէմի տաճարից։

Այս ժամանակ իսրայէլացիները միանգամից 42
հազար հոգով Զորաբարելի առաջնորդութեամբ և Յե-
սուքահանայալետի օգնութեամբ վերադառն իրանց
Երկիրը։ Երուսաղէմում սեղան կանգնեցրին, Աստու-
ծուն զոհ բերին և նոր տաճարի շինութեան հիմը դը-
րեցին մեծ հանդէսով, Երգերով և գոչումներով։ Երի-
տասարդներն իրանց ցնծագին ձայներով, իսկ ծերերը
իրանց հառաջանքներով ու լացով յիշում էին առաջ-
ուան տաճարի հոյակապութիւնը և միշտ ցաւելով յի-
շում էին, թէ այս տաճարը չի լինի այսպէս փառա-
ւոր, ինչպէս հինն էր։ Բայց մարգարէները նրանց
միսիթարելով ասում էին, թէ այս վերջին տաճարի
փառքն աւելի կըլինի, քան թէ առաջինինը, և թէ աշ-
խարհի Փրկիչն կըդայ այս տաճարը, կըլցնէ նըան փառ-
քով և կըտայ այստեղից խաղաղութիւն աշխարհին։

Պարսից թագաւորները տիրելով Հրէաստանին՝
ստանում էին միայն հարկ, իսկ ներքին կառավարու-
թիւնը թոյլ էր տուած իսրայէլացիներին իրենց օ-
րէնքների համեմատ վարել և ապրել։ Նրանք նշանա-
կեցին Եզր անունով մի քահանայ և ուղարկեցին նը-
րան Երուսաղէմ, որ հսկէ, որպէսզի բոլորը ապրեն
իրանց օրէնքների համաձայն։ Եզրին տուած էր իրա-

Հունք և պատժելու նրանց, որոնք կըխախտեն Մով-
սիսական օրէնքները։ Եզրը ժողովեց իսրայէլացինե-
րին, զգուշացրեց չաստատել ամուսնական կապ կոա-
պաշտների հետ և կարգադրեց կարել բոլոր յարաբե-
րութիւնները հեթանոսների հետ։ Նա վերականգնեց
հայրենի մոռացուած և խախտուած կարգերը և օրէնք-
ները։ Վերակսեց շաբաթական և միւս տօնելը։ Ժողո-
վեց Ա. Գրքի գրուածները և սահմանեց կարդալ տօ-
ներին ժողովրդի առաջ օրինաց գրքերը։

Այսուհետեւ հիմնուեցան Յուդայի բոլոր քաղաք-
ներում ժողովրդանոցներ — սինագոգներ, ուր ամեն շա-
բաթ ժողովուրդը պէտք է հաւաքուէր աղօթելու և
Աստուծու խօսքը լսելու։ Եւ ժողովրդին կըթելու հա-
մար նշանակուեցան առանձին մարդիկ, որոնք կոչ-
ուում էին լաիրներ։

Հրէաները կառավարում էին 70 ծերերից բաղ-
կացած մի բարձրագոյն դատարանով, որի նախագահն
էր քահանայապետը։ Այս ժողովը կոչւում էր ծերա-
կոյտ — սենեդրիօն և գտնուում էր Երուսաղէմում։

Այսպէս իսրայէլացիներն սկսեցին վերանորոգել
իրանց կարգերը և վերաշինել իրանց աւերակ դար-
ձած քաղաքները, գիւղերը և նրանց պարիսպնե-
րը։ Նիեմի անունով մի բարեպաշտ իսրայէլացի, որ
պարսից արքունիքում պաշտօն ունէր, նորոգեց Երու-
սաղէմի պարիսպները, որպէսզի թշնամուց աղատ լինի
քաղաքը և տաճարը։

II. Քանի տարի հրէաները գերի մնացին Բաբելոնում։
Ո՞վ ազատեց նրանց գերութիւնից։ Ո՞րքան հրէաներ և ում
առաջնորդութեամբ վերադառնալ վարդարձան։ Վերադառնալ հայրե-

Կիք՝ ի՞նչ բաներ սկսեցին վերաշինել։ Ի՞նչ կարծիք ունէին նոր տաճարի մասին և ի՞նչ էին ասում մարդարէները։ Ի՞նչ օրէնքներով էին կառավարում հսրայէլացիները։ Ո՞վ նշանակուեց վերահսկող այդ օրէնքներն անթերի կատարելու համար։ Ի՞նչ կարգադրութիւններ արեց Եզր ամուսնութեան, տօների, կարգերի և սուրբ գրւածքների մասին։ Ժողովրդի հաւաքուելու, աղօթելու և Աստուծու խօսքը լսելու համար ի՞նչ տեղեր որոշեց Եզր և հրոնց կարգեց այդ բանին սպասաւոր, ի՞նչպէս էին կառավարում հսրայէլացիները։ Ի՞նչ դատարան ունէին և քանի անձինք էին դատաւորները։ Ո՞վ նորոգեց Երուսաղէմի պարիսպները։

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք։ 1) Իսրայէլացիներն ազատուում են գերութեան ծանր լծից և կըրկին արժանանում են իրանց հայրենի երկրին, որ աւերակ ու քարուքանդ եղած էր։ Հայրենիքի կարօտը հասկացրել էր նրանց նրա նշանակութիւնը և թէ որքան քաղցը է։ Նրանք նրանց համար՝ չսեելով իրանց նախորդների խրատներին և իրանց համար՝ չսեելով իրանց նախորդները։ 2) Մենք տեսնում չկատարելով Աստուծու պատուիրանները։ 3) Մենք տեսնում ենք, որ նրանք տարագնաց թուշուների նման սկսում են վերաշինել քարուքանդ արած քաղաքները, աները, գիւղերը և քաղաքների պարիսպները։ Եւ ամենից առաջ առանձին ուրախութեամբ, երգերով ու լացով կառուցանում են Աստուծու նուիրական տաճարը, ուր արդէն զղացած սրտով կարող էին օրհնաբանել Աստուծու անունը և հետևաբար խոստովանել իրանց սխաները և ուխտ հաստատել այլևս չշեղելու Աստուծու ճանապարհից։ 4) Մենք տեսնում ենք, գիւղերու Աստուծու ճանապարհից։ 5) Մենք տեսնում ենք, որ գիւղական Եզր քահանան հոգում և հսկում է հայրենի օրէնքները պահպանելու և ճեռոր պահելու ժողովրդին այն օրէնքները պահպանելու և ճեռոր պահելու ժողովրդին առներից, որոնք կարող էին նրան օտարացնել։ Նորոգւում են Աստածպաշտութեան կարգերը, սահմաննուում են տօներ և ամեն տեղ շինում են ժողովրդանոցներ—աղօթատներ։ և ամեն տեղ շինում է, որպէս զի Աստուծու սէրը ժողովրդի մէջ եւ այս լինում է, որպէս զի Աստուծու սէրը ժողովրդի մէջ պառ պահուի և հեթանոսութեան դիմողների համար էլ պատվառ պահուի և հեթանոսութեան դիմողների համար նշանակուում են լինի, ժողովւում են օրինաց գրեր և նշանակուում են

առանձին մարդիկ—գպիրներ՝ կարգալու և ժողովրդին հասկացնելու Սուրբ Գլուխը։ Երկրի ներքին կառավարութեան համար նշանակում է ազգային ժողով, բաղկացած 70 ծերերից, որի նախագահը լինում է ինքը—քահանայապետը։

Հ 29. ԻՍՐԱՅԷԼԱՑԻՒԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՒԵՐԻ ԺԱՄԱԹԱԿ. ՄԱՏՍԹԻԱ

I. Իսրայէլացիները պարսից իշխանութեան տակ մացին մօտ 200 տարի։ Աղէքսանդր Մակեդոնացին կործանեց պարսից թագաւորութիւնը և կազմեց Մակեդոնացոց հզօր պետութիւնը։ Իսրայէլացիները մտան նրա իշխանութեան ներքոյ։ Աղէքսանդրի մահուանից յետոյ նրա տէրութիւնը բաժանուեց և Հրէաստանը, որ Եգիպտական և Ասորոց թագաւորութիւնների սահմանն էր, կուռի ծաղիկ դարձաւ նրանց համար։ Ակրդում մօտ հարիւր տարի նրանք հպատակ դարձան Եգիպտական իշխանութեան։ Այս ժամանակ, պէտք է ասած, իսրայէլացիներն աւելի բախտաւոր էին։ Նրանց թոյլ էր տուած իրանց հայրենի օրէնքներով կառավարուել և վայելել հաւասար իրաւունքներ տիրապետող ժողովրդի հետ։

Այսուհետև Ասորոց թագաւորները տիրեցին Հրէաստանին և անտանելի նեղութիւններ պատճառեցին իսրայէլացիներին։ Նրանք Երուսաղէմի տաճարում և իսրայէլեան բոլոր ժողովրդանոցներում կուռքեր կանգնեցրին և ուժով ու սարսափելի տանջանքներ տալով՝ ստիպեցին իսրայէլացիներին պաշտել նրանց և թողնել իրանց հայրենի օրէնքները։ Այս ժամանակ հաւատի և հայրենի օրէնքների պահպանութեան համար նահատակուեցան ծերունի Եղիազար քահանան և Շա-

մունէ անունով մի բարեպաշտ կին իր եօթն որդոց հետ:
 Իսրայէլացիների այս դառն ժամանակ՝ Մատաթիա
 անունով մի քահանայ, որ Յուդայի ցեղից էր, իր որ-
 դոց հետ վճռեց կանգնել Ասորոց (Սելևկացոց) դէմ
 և ազատել իր ազգակիցներին օտարի լծից: Ժողովեցան
 նրա շուրջը մարդոց մեծ բազմութիւն, որոնք հաւա-
 տարիմ էին իրանց օրէնքներին: Սկսուեց պատե-
 րազմը հաւատի և հայրենիքի ազատութեան համար:
 Մատաթիան մեռաւ և կառավարութիւնն անցաւ նրա
 որդի Յուդա Մակարէին, որը կարողացաւ քշել թշ-
 նամիներին և սրբել Երուսաղէմի տաճարը կուռքե-
 րից: Յուդան ևս քաջութեամբ մեռաւ պատերազմի
 դաշտում: Մեռան և նրա եղբայրները, բայց կենդա-
 նի մասց սուրբ գործը, որը շարունակեցին նրա յա-
 ջորդները և ստիպեցին Ասորոց թագաւորին իսպառ
 հրաժարուել իսրայէլացիների վրայ ունեցած իշխա-
 նութիւնից: Եւ այսպէս տիրելով ամբողջ Հրէաստանին
 ստացան նորից անկախութիւն:

Մատաթիան և նրա որդիքն իրանց կեանքը զո-
 հելով հաւատի և հայրենիքի համար՝ գեղեցիկ օրի-
 նակ՝ տուին հայրենասիրութեան:

II. Ո՞րքան ժամանակ իսրայէլացիները հպատակ մնա-
 ցին Պարսից տէրութեան: Ո՞վ կործանեց Պարսից թագաւո-
 րութիւնը: Աղէքսանդրի մահից յետոյ ինչ պատահեց նրա
 ընդարձակ տէրութեանը և Հրէաստանը որ տէրութիւնների
 սահմանակից դարձաւ: Ի՞նչ վիճակի մէջ էր նա: Ո՞րքան
 տարի իսրայէլացիներն եղիպատական իշխանութեան տակ
 մնացին: Ինչ դրութեան մէջ էին: Ո՞րքան ժամանակ իս-
 րայէլացիներն Ասորոց իշխանութեան տակ էին, ինչպիսի
 վիճակի մէջ էին և ինչ նահատակութիւններ կատարուեցան
 Այդ դժբաղդ վիճակն ինչ օգուտ բերեց իսրայէլացիներին:
 Ո՞վ առաջին անգամ հոգ տարաւ օտարի լծից ազա-

տուելու և անկախութիւն ձեռք բերելու համար: Ի՞նչ քա-
 ջութիւններ արեցին Մատաթիա և նրա յետագաները:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք. 1) որ
 Պարսից թագաւորութեանը վերջ է տալիս Աղէքսանդր Մա-
 կեդրոնացին և տիրում է ամբողջ Հրէաստանին: 2) Աղէք-
 սանդրի մահից յետոյ իսրայէլացիների վիճակը փոխում է:
 Նրա տէրութիւնը բաժանում է Եգիպտական ու Ասորոց
 կամ Սելևկացոց տէրութիւնները կուի ծաղիկ են շինում
 Հրէաստանը: Սկզբում տիրում է Եգիպտականը և իրան հա-
 ւատարիմ հպատակ գարձնելու համար՝ թոյլատրում է նրանց
 պաշտել իրանց կրօնը և հայրենի օրէնքներով կառավարուել:
 Նրանց տիրապետութեան ժամանակ իսրայէլացիների վի-
 ճակը լաւ է լինում և Եգիպտական ուսումնասէր Պաղոմէո-
 սի ջանքերով Սուրբ Գրքի թարգմանութիւնը կատարում է
 70 գիտնականների աշխատութեամբ հրէական լեզուից յու-
 նարէն, որ պահպանում էր Աղէքսանդրիայի գրատան մէջ:
 Այս թարգմանութիւնը կոչում է Սուրբ Գրքի եօթանասնից
 թարգմանութիւն: 3) Մօտ հարիւր տարուց յետոյ Ասորոց
 թագաւորները տիրում են իսրայէլացիներին և այդ ժամա-
 նակից սկսում է նրանց համար ամենաղաւոն ժամանակը:
 Ասորոց թագաւորները՝ բացի հաւատարիմ հպատակ լինել
 պահանջելուց, բռնի կերպով, անտանելի տանջանքներ տալով
 ու նահատակելով՝ ստիպում են ուրանալ իրենց հաւատը և
 կուռք պաշտել: Նրանք կուռքեր են գնում Երուսաղէմի տա-
 ճարում և կուապաշտական պաշտամունքներ կատարում ու
 զոհեր մատուցանում: Սակայն իսրայէլացիներն անդրդուելի
 են մնում իրանց հաւատքի մէջ և մէծ զոհեր են տալիս: 4)
 Մենք տեսնում ենք, որ այս բռնութիւնը ստիպում է իս-
 րայէլացիներին ուրիշ ելք գտնել, Մատաթիա անունով մի
 ճշմարիտ քահանայ չկարողանալով տանել այս ազգային
 կրօնի անպատճութիւնը և ժողովրդի նեղութիւնները, ոտքի
 է կանգնում հաւատքի և հայրենի օրէնքների համար և ժո-
 ղովելով իւր շուրջ հաւատարիմ, հայրենասէր և նախանձա-
 խնդիր իսրայէլացիներին, պատերազմում է Ասորոց թագաւ-

ւորների հետ՝ անկախութիւն ձեռք բերելու համար։ Քաջարար մեռնում է Մատաթիան պատերազմի դաշտում։ Գործը շարունակում են նրա որդիքը և թոռները Տիրոջ օգնութեամբ և յաջողութեամբ դուրս բշելով նրանց ինրայէլեան երկիրներից, բաղաքներից՝ տիրում են ամբողջ Հրէաստանին և անկախութիւն ձեռք բերում, բայց ափսոս, որ այդ երկարատև չի լինում։ 5) Մենք նկատում ենք, որ ինրայէլացիներին դրդողը լինում է հայրենի օրէնքների նախանձախնդրութիւնը, պապենական հաւատի հաւատարիմ պահպանութիւնը և հայրենասիրութիւնը, որովհետև նրանք գուշակում էին վերահաս վտանգը, որ այսպիսի դառն ժամանակներում առաջ է գալի։

№ 30. ԻՄՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀՌՈՄԱՅԵՑՈՅՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

I. Ինրայէլացիների՝ Մակաբայեցոց կոչուած թագաւորութիւնն երկար ժամանակ գոյութիւն չունեցաւ։ Ներքին խռովութիւնները, թագաժառանգների շարունակ կուիները վնասեցին երկրին և ժողովրդին այնտեղ հասցըին, որ ստիպուեց դիմելու Հռոմայեցիների միջամտութեան երկիրը խաղաղացնելու և գործերը կարգի բերելու համար։ Հռոմայեցիները Փրկչի գալստից մի փոքր առաջ առան իրանց իշխանութեան ներքոյ Հրէաստանը և վերջ տուին Մակաբայեցոց թագաւորութեան։ Նրանք երկրի կառավարութիւնը յանձնեցին եղովմայեցի Հերովդէսին, թագաւորական տիտղոսով։ Սա խիստ, կասկածու և Հռոմայեցիների շահերին ծառայող մի մարդ էր։

Ծանր էր այս բանն ինրայէլացիների համար։ Նրանք նոր հասկացան իրանց գործած սխալը, բայց արդէն ուշ էր։ Մի բան միայն նրանց մխիթարում

էր և քաջալերում, Դա Փրկչի գալստ համար գուշակութիւնների կատարումն էր, որ պէտք է լինէր, երբ Յուղայի տանից թագաւորութիւնը վերջանար։ Եւ ահա արդէն վերջացել էր։ Միայն շատերը նրանցին սխալմամբ սպասում էին, որ Մեսսիան ոչ թէ մեղքերից—խաւարից պէտք է փրկէ, այլնա երկրաւոր փառաւոր թագաւոր կըլինի և կազատէ նրանց օտարի իշխանութիւնից։

Հռոմայեցիների տիրապետութեան ժամանակ իսրայէլացիների երկիրն անուանում է Պաղէստինա և բաժանուում էր չորս մասերի։ Հիւսիսային մասը կոչում էր Գալլեա, միջին մասը՝ Սամարիա, հարաւինը Յուղայի երկիրը և արևելեանը—Պերիա կամ Յանկոյս Յորդանանու։ Բարելոնեան գերութիւնից յետոյ իսրայէլացիների մէջ առաջ եկան կրօնական հերձուածներ՝ Փարիսեցիք, Սաղուկեցիք և Յեսսեանք անուններով։

Փարիսեցիք—պահպանողական էին. սրանք աշխատում էին իրանց սուրբ ձեւացնել ամենքի առաջ։ Նախանձախնդիր էին հայրենի օրէնքներին և հակառակ էին օրէնքների, հայրենի վարքերի և սովորութիւնների ամենափոքրիկ փոփոխման։ Սրանք սուրբ Պրքին հաւասար էին ընդունում և հայրենի աւանդութիւնները։ Սրանց գլխաւոր պակասութիւնն էր—կոյր հետևողութիւն բարեպահական արտաքին ձևերին։

Սաղուկեցիք—սրանք Փարիսեցիների հակառակ չէին ընդունում աւանդութիւնները, ուրանում էին հոգու անմահութիւնը, չէին հաւատում մեռեալների յարութեան և վերջին դատաստանին։

Յեսսեանք—սրանք մեծ մասամբ ապրում էին նաև առաջարկում հասարակ խրճիթների մէջ և իրանց

**Ժամանակն անց էին վացնում կարդալով, մտածելով
դառնելով և հոգեով երդեր երգելով այս պահանջման
առ Շաբաթը մի անդամի հաւաքւում էին ժողովաւ
ըստում ծերի կամ ձեռնհասի վարզողները իրատներ
ըլլելու, Սրանց մէջ յարդի էր ամիսյնակցութիւնը
և մեծ մասը պահպանում էր կոծութիւնը Սրանք
ապրում էին ընկերութեամբ և ունէին միատեսակ
հազուստ և հասարակաց սեղան: Աղօթում էին արեի
ծագելու մայր մտնելու ժամանակը հեռուն էին եր-
գումից և անհասարական այնպիսի բաներից, որոնք
կարող էին ուրիշներին վնաս բերել: Այս առողջութեամբ
կար չտեսց: Ինչ բանի ճամար առաջին առաջանք ու եւս:**

II. Ինչու իսրայէլացիների նոր թագաւորութիւնները
կար չտեսց: Ի՞նչ բանի ճամար էինք ներքին խորվութիւն-
ներն ու կոփիները և վերջը ում դիմեցին, միջամտելու և
խաղաղացնելու: Ի՞նչպէս վերաբերութեան չոռմայեցիներն
և բնիչներն ունեցաւ: Ի՞նչ վիճակի մէջ էին իսրայէ-
լացիներն եղովմայեցի չերակեսի ժամանակ և ի՞նչն էր
նրանց միթարում: Ի՞նչ էին սպասում իսրայէլացիներից
շատերը Մեսիայից: Ի՞նչպէս էր զիշկան վարայէլացիներից
երկիրը Հոռմայեցիների տկրապետութեան ժամանակ և քառ
նի մասերի էր բաժանուած, կրօնական ի՞նչ հերձուածներ
կային իսրայէլացիների մէջ և ի՞նչով էին զանազանում
միմեանցից Փարիսներից, Սալուկեցից եւ Յեսսեանք:

III. Այս պատմութիւնից մենք սովորում ենք: 1) Ի՞նչպէս իսրայէլացիները մեծ նեղութիւններով ձեռք բերած
իրանց նոր թագաւորութիւնը չեն պահպանում: Գահի ժա-
ռանգները պնմարար պատերազմում են միմեանց հետ:
Սկսում են կոփիներ, ներքին երկապառակութիւններ, որոնք ա-
ռաջ են բերում ներքին տկարութիւն և թուլութիւն: Լինում
են անմիաբանութիւն, հայրենի օրէնքներից անցնել, աղքա-
տութիւն և բարոյական անկումն, որից յառաջանում է ժո-
ղովրդի մէջ թշուառութիւն: Տիսուր անցեալի յիշատակը

նրանք մոռանալով կամենալով վերջ տալ այս ողբայի
դրսթեանը կոփական հիմաթափութելու, անհեռատեսու-
թեամբ դիմում են օտաղի միջամտութեան իրանց երկիրը
խաղաղացնելու նպատակով, որ ունենում է կորստաբեր հե-
տեանք: 2) Հոռմայեցիները տէր են զարնում Հրէաստանին
և վերջ տակ նրա անկախութեանը: Նրանք նշանակում են
մի խիտ կառավարէն թագաւոր ժիտղոսով, որի առաջին
գործն է լինում՝ ծառայել Հոռմայեցիների նպատակներին,
շահիրին: և իր իշխանութիւր ապահովելու համար վերջ է
տակիս Մակաբայեցոց թագաւորութեան ժառանգներին: 3)
Իսրայէլացիների վիճակը շատ դառն, տխուր և անտանելի է
լինում: Նրանց արած սխալը խորը խոցում է իրանց սիր-
ուր և վրդովում, բայց ոչ մի ելք չեն գտնում: Նրանք ան-
կախութեան, հոռմայեցիների ձեռքից ազատելու յոյսը կըտ-
րել էին և չէին մտածում իրանք իրանց աշխատութեամբ,
ջանքերով ձեռք բերելու, որովհետև հայրենասիրական զգաց-
մունքը սառել էր նրանց մէջ, թուլամորթ էին դարձել և
չէին կամենում զոհաբերութիւն անել: Նրանք թէ իրանց և թէ
իրանց երկրի համար բարիքներ ուրիշից էին ապասում և միի-
թարում էին նրանով, թէ շուտով կոյա խոստացած Մեսիան
և կազատէ նրանց օտարի լծից նեղութիւններից և կվերա-
կանգնէ կրկին իսրայէլի թագաւորութիւնը: Բայց մոռանում
էին, որ Փրկչի թագաւորութիւնը երկնային էր լինելու և
ոչ երկրային նա պէտք է թագաւորէր մարդոց սրտերի վրայ
և ոչ երկրների: 4) Իսրայէլի երկիրը, որ սկզբում կոչում
էր Քանանացոց, Խոստացեալ, Աւետեաց, Հրէաստան,
իսրայէլացոց եւ Սուլք Երկիր, նրա մի մասի բնակիչների—
Փղտացիների անունով ստանում է Պաղեստինա անուն և
կառավարելու համար բաժանում է չորս մասերի, որոնց
համար նշանակում են Հոռմայեցի կառավարիչներ: Տես-
նում ենք իսրայէլացիների մէջ, որպէս գերութեան դառն
հետեանք գոյութիւն են ստացել կրօնական հերձուածներ—
բաժանումներ, որից առաջ են եկել ժողովրդի մէջ ատելու-
թիւն, խոռովութիւն և կոփիներ՝ իրանց վնասակար հետեանք-
ներով: Ահա այս ախտերով ժողովուրդն այնպէս բարոյապէս

ըսկել, խղճացել և հոգեպէս հիւանդացել էր, որ նրան բար-
տքելու, բուժելու համար, անշուշտ կարիք էր զգացւում մի
բժշկի, մտքերի և սրտերի խաղաղաբարի և մի նոր լուսա-
տու օրէնստուի, Որին նա—ժողովուրդը—որպէս փրկութեան
միակ միջոցի՝ անհամբեր սպասում էր և Որը մարգարէնիրի
գուշակութեամբ պէտք է գար, երբ Յուդայի տանից թագա-
ւորութիւնը վերջանար: Եւ ահա այդ արդէն կատարուած
էր տեսնում: Այդ ազատիչը—խոստացեալ Փրկիչը՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսն էր, Որին վայելէ փառք յաւիտեանս. Ամէն:



23 Սաղոմոն թագաւորը	61
24 Թագաւորութեան բաժանումը.—Իսրայէլեան թա-	
գաւորութեան վիճակը	66
25 Յուդայի թագաւորութեան վիճակը	70
26 Մարգարէները	74
27 Բաբելոնեան գերութիւն.—Դանիէլ մարգարէ	76
28 Իսրայէլացիների վիճակը Պարսից իշխանութեան	
ժամանակ.—Եզր և Նէեմի	80
29 Իսրայէլացիների վիճակը Մակեդոնացիների ժա-	
մանակ.—Մատաթիա	83
30 Իսրայէլացիների վիճակը Հպոմայեցոց տիբապետու-	
թեան ժամանակ	86

ցմիկացմարտացմարտա

31	պայմանագրական ժամանակ
32	ցրծընթաց ժամանակ
33	ցրծընթաց ժամանակ
34	ցմիկացմարտացմարտա ժամանակ
35	ցմիկացմարտա ժամանակ
36	ցմիկացմարտա ժամանակ
37	ցմիկացմարտա ժամանակ
38	ցմիկացմարտա ժամանակ
39	ցմիկացմարտա ժամանակ
40	ցմիկացմարտա ժամանակ
41	ցմիկացմարտա ժամանակ
42	ցմիկացմարտա ժամանակ
43	ցմիկացմարտա ժամանակ
44	ցմիկացմարտա ժամանակ
45	ցմիկացմարտա ժամանակ
46	ցմիկացմարտա ժամանակ
47	ցմիկացմարտա ժամանակ
48	ցմիկացմարտա ժամանակ
49	ցմիկացմարտա ժամանակ
50	ցմիկացմարտա ժամանակ
51	ցմիկացմարտա ժամանակ
52	ցմիկացմարտա ժամանակ
53	ցմիկացմարտա ժամանակ
54	ցմիկացմարտա ժամանակ
55	ցմիկացմարտա ժամանակ
56	ցմիկացմարտա ժամանակ
57	ցմիկացմարտա ժամանակ
58	ցմիկացմարտա ժամանակ
59	ցմիկացմարտա ժամանակ
60	ցմիկացմարտա ժամանակ
61	ցմիկացմարտա ժամանակ
62	ցմիկացմարտա ժամանակ
63	ցմիկացմարտա ժամանակ
64	ցմիկացմարտա ժամանակ
65	ցմիկացմարտա ժամանակ
66	ցմիկացմարտա ժամանակ
67	ցմիկացմարտա ժամանակ
68	ցմիկացմարտա ժամանակ
69	ցմիկացմարտա ժամանակ
70	ցմիկացմարտա ժամանակ
71	ցմիկացմարտա ժամանակ
72	ցմիկացմարտա ժամանակ
73	ցմիկացմարտա ժամանակ

23. Ազգական թագավոր 91
24. Թայշետակի բարձրաւոր մասնակիութեան պահպան 67
25. Առաջի թագավորական պահպան 76
26. Մարդու պահպան 76
27. Բարձրաւոր պահպան պահպան 76
28. Կորպուսի պահպան պահպան թագավորական պահպան 80
29. Պատուական պահպան պահպան թագավորական պահպան 80
30. Առաջի պահպան պահպան թագավորական պահպան 83





ՄԵՐ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐԸ

1. Դասագիրք հայկ. ձայնագրութեան, դ. տպագրութիւն (սպառուած) 60 լ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան ա. տպագրութիւն (սպառուած) 40 լ.
3. Աղջային ձայնագրեալ երգարան, ա. տպագրութիւն (սպառուած) 80 լ.

4. Դասագիրք կրօնի, ա. գրքոյկ 8-րդ տպագրութիւն. 10 լ.
5. Դասագիրք կրօնի, բ. գրքոյկ 5-րդ տպագրութ. . 30 լ.
6. Դասագիրք կրօնի, գ. գրքոյկ 3-րդ տպագրութ. . 30 լ.

Վաճառուում են Թիֆլիսի «Կենդրոնական միւս գրավաճառանոցներում», և աշխատափողի մօտ
Տիֆլիս, Պրոտոյերէ Եզնիկ Երզնկյան.

~~304~~

304

0026431

2013



